Նախադասութեին ըստ ինքեան ծանուցեալ հիւրանդ կողմանէ և եթե և ոչ ի մեր կողմանէ է, որ չունի զիիջնորդ ցուցանելոյ ի յառաջագունէ, և ասի անհիչական, որպէս յորժամ առորոգեալն փակի ի բան ենթակային, իբրև սահման նորա, կամ մանն սահմանի, այլ զինչութեի ենթակային ի յառաջին, և ի հասարակ ըմբռնմանէ եղերայց ոչ ծանօթա-նայ մեզ, այլ կարօտի ի ձեռն իրիք, որ իցէ մեզ ծանօթագոյն՝ տրամաբանութիւն ապացուցանիլ: Նա-խադասութեին ըստ ինքեան ծանուցեալ ի մեր կող-մանէ է՝ որոյ ճշմարտութեին յառաջին և ի հասա-րակ ըմբռնմանէ եղերայց առանց ինչ տրամաբա-նութեի, թէ ի յառաջագունէ, և թէ ի յետնա-գունէ ծանօթանայ մեզ. որպիսի են այնիք, որք բացատրին ևս ծանօթագոյն, և հասարակագոյն ե-զերօք. զոր օրինակ, Ոչ ինչ է, կամ ոչ է. Ըստ-ըն է ֆեծ չան պմաան է-ը. զի չիք որ այնպէս ապուշ. որ յառաջնոյ ըմբռնմանէ անտի չունիցի զծանօթու-թեի էակի, և ոչ էակի. բոլորի, և մասին. ուս-տի և ոչ իմասցի, եթէ իւրաքանչիւր ինչ է, կամ ոչ է. բոլորն է մեծ քան զմասն իւր: Երդ՝ խնդիր է, թէ արդեօք այս նախադասութեի. գոյ ՈՃ, կամ Ոչ է. իցէ ըստ ինքեան ծանուցեալ, և զինարդ: Երդեօք հիւրանդ կողմանէ միայն, եթէ և ի մեր կողմանէ:

Վիտելի է երկրորդ, զի ոմանք յայսմ վայրի զկետին խնդիրս բազմօք յուզեն, թէ արդեօք ի-ցէ ի մեզ բնաւորեալ կիր ընդարձոյս ծանօթութեին այ: Այլ քանզի այսոքիկ բնաւորեալ ծանօթու-թիւն այ ոչ պյլինչ իմանան, բայց եթէ առանց տրամաբանութեե, թէպէտ և դիւրին, ի լոկ ըմբռն-մանէ եղերայց անտի իմանալ զգաստ և արիաւն մտաց, թէ գոյ ՈՃ, որպէս ի սոսկ ըմբռնմանէ եղերայց առանց տրամաբանութեե իմացեալ լինին առաջին սկզբունք, զոր օրինակ, իւրաքանչիւր ինչ է, կամ

կամ ոչ է. բոլորն է մեծ քան զմանն իւր. որով մեկնէ նոյն ինքն մնորատոս Աուրնելեան, պաշտպանն այսր բնաւորեալ ծանօթութենէ աստանօր. պ. ա։ Ասյս խնդիր յայսչափ ծփանս վէր՝ ի վայր յուզեալ միաբանի ընդ մեր. թէ արդեօք այս նախադասութի, ած է, իցէ ըստ ինքեան ծանուցիչ՝ ի մեր կողմանէ։ Ա. որով լուծումն,

Աեթէ է նախ. Ասյս նախադասութի, Ած է, Աղ.
է ըստ ինքեան ծանուցեալ յիւրմէ կողմանէ, և ոչ՝ ի մեր կողմանէ. ուստի և չէ մեզ բնածին ծանօթութին այ։

Յուզանի առաջին մասն. Այն նախադասութի է ըստ ինքեան ծանուցեալ յիւրմէ կողմանէ, որով ստորոգեալն փակի յէութէ ենթակային, իբրև սահման նորա, կամ մասն սահմանի. որպէս այս, մարդն է կենդանի. զի այսու իսկ է անմիջական, և չունի զմիջնորդ՝ ի յառաջադունէ ցուցական. իսկ արդ՝ գոյութին այ փակի ըստ այսմ օրինակի յէութէ այ. քանզի ած էապէս է իւր գոն, կամ է հարկաւորապէս և էապէս էակ ինքնագոյ, որպէս ցուցցուք ստորև. ապա։ Աղ.

Աթէ ասիցես. ՝ի պատճառէ աստի հետևի, թէ այսոքիկ նախադասութիք. Ած է քաղ. Ած է ապրող, և այլ սոցին նմանք են ևս ըստ ինքեան ծանուցեալ. քանզի և բարութի, արդարութի, և այլ ստորոգելիք ևս փակին յէութէն այ։

Պատասխանեմ. թէ այսոքիկ, և այլ ստորոգելիք փակին յէութէ այ յայս միտ, զի յածութէ ոչ իրապէս, և ոչ կերպականապէս զանազանին. սակայն ոչ են զառաջին իմացմանէն այ, որպէս նոյն ինքն գոն. վ զի ած ըստ որում տարբերի ՝ի ստեղծուածոց՝ սահմանի էակ ինքնագոյ. ուստի ինքնագոյութին կացուցանէ զէութի անստեղծ էակի, իբրև վերջին ներգործականութի նր. այլ ոչ բարութին, իմաստութին, կամ այլ ստորոգելիք։

Յու-

Անդ. Յուցանի երկրորդ մեան. Ընդ նախադասութիւն ոչ է ըստ ինքեան ծանուցեալ ի մեր կողմանէ, յորում զինչութիւն ենթակային յառաջին, և ի հասարակ ըմբռնմանէ եզերաց ոչ ծանօթանայ մեզ, այլ պետս ունի տրամաբանութիւն, առ ի ծանօթանալ մեզ. զի յայնժամ ոչ կարէ ծանօթանալ մեզ իսկ և իսկ, թէ ստորոգեալն պատշաճիցի ենթակային: Իսկ արդ՝ զինչութիւնն այ յառաջին և ի հասարակ ըմբռնմանէ եզերաց ոչ ծանօթանայ մեզ, այլ տրամաբանութիւն. ապա: Վարդապետն յայտ է, քանզի թէ զինչ իցէ այծ ոչ իմանամք նոյնհետայն ի լսել անդ զձայնս՝ Ձ, որպէս յարտասանելոյ այսց եզերաց, բոլոր և մեան, էակ և ոչ էակ, իսկ և իսկ իմանամք, թէ զինչ իցէ բոլորն. զինչ մեան. զինչ իցէ էակն, զինչ ոչ էակն. այլ թէ զինչ իցէ այծ՝ ի ձեռն տրամաբանութեան, և յայժ անկատարապէս իմանան նոքին իսկ իմաստունք. ապա:

Անդ. ի ձեռն. այլ ընդդեմ: Ոստատի. Ընդ է ըստ ինքեան ծանուցեալ ի մեր կողմանէ զորոյ զհակառակն օչդք ողջամիտ կարէ զմտաւ ածել. և կամ գոնէ ոչդք զնմանէ կարէ հաւաստեաւ յերկբայս լինել. որպէս յայտ է յառաջին սկզբունս. անհնար է նոյնոյ լինել, և ոչ լինել. երկիցս երեքն են վեց. բոլորն է մեծ քան զմեան իւր. զորոյ զհակառակն ոչ ոք ողջամիտ զմտաւ էած երբէք, կամ հաւաստեաւ յերկբայս եղև զայնմանէ: Իսկ արդ՝ հնար է զմտաւ ածել զհակառակն այսմ, թէ է այծ. ըստ այնմ. սաղ. ծբ. ը. Ասաց անգէտն ի սրտի ի-ւր՝ Ընդ ոչ գոյ Ած: Ահա զի և իմաստունք, և բարեկեցիկք անկանին երբեմն յանկորհրդածեալ շարժմունս երկբայութեանց ի վերայ սր. ապա:

Անդ. պ.ք.բղ. Ընդ է երկրորդ. Ընդացուցական է թէ գոյ այծ, ոչ ի յառաջագունէ, կամ ի ձեռն պատճառաց, այլ ի յետնագունէ, կամ ի ձեռն գործոց:

ծոց։ Առաջին ապացուցութիւն ասի ապացուցութիւն վե՛ր ոչ։ Իսկ երկրորդն՝ ապացուցութիւն վե՛ր զի։ Առաջին մասն յայտ է. քանզի չէք պատճառ այ։

Հնուցանի երկրորդ մասն նախ՝ ՚ի սկզբ գրոց. սաղ. ժբ. ե. Արկինք պատմեն պքաոս այ. Ի մաս. ժէ. ե. ՚ի ելս ջրոյ՝ ՚ի ելս գետոց ոտից նորին հանդիպուցին և պատուիրանք նորա էին։ Եւ հետևեալ. այնոցիկ է, որ հաւատան զանձինս իւրեանց պատուիրանին. այնոցիկ է, որ զպատուիրեն ամենեցուն, և ուրեք ոչ գտանիցեն ամենևին պատուիրանի. ևն։ Անդ. ՚ի ձեռն այլ ընդդեմ։

Հնուցանի երկրորդ՝ բանիւք. զի գոյութեն պատճառին կարէ քաջ ապացուցանիլ ՚ի ձեռն գործոյ հարկիւք կախելոյ զնմանէ. որպէս ՚ի ձեռն ծխոյ ապացուցանի գոյութեն հրոյ. իսկ արդ՝ ամ ստեղծուածք են գործք այ հարկիւք կախեալք զնմանէ ՚ի գոն և ՚ի պահպանիլն. ապա։ Անդ. բաշ.

Ասիցես. Ամենաւոր գործք, որպիսի են ստեղծուածք՝ ոչ պահանջին զպատճառ անսահման. զոյս և ես ընդունիմ զերկրորդական պատճառէ, և ոչ զառաջինն պատճառէ, որ է պատճառ ամենեցուն յոչէ ումեքէ պատճառեալ. զի հարկաւոր է սմա լինել անսահման։ Իսկ առ հասու լինել այսմ, յայտ լեզի ՚ի հետագայ պրակէս, յորում լուծանին և առարկութիւնք ՚ի սա վերաբերեալք։

Ա՛ծմուն՛ առաջնո՛ւթէ ոչ՛ ընդդէմ երկրորդ մասին առաջնի եղծանողութե՛։

Առարկիցես նախ, աղաւտելով զհիմնական պատճառ սկզբն Յովմայի. Այս նախադասութի, է՛ք է, կամ ոչ է, է՛ք է ըստ բնաբեան ծանուցեալ. բայց սակայն զինչութի ենթակային յայսմ նախադասութե՛ ոչ ծանօթանայ մեզ, բայց եթէ տրամաբանութե՛. ոչ և յայսմ. Է՛ք է. ապա կործանի հիմն սկզբն Յովմայի։

պա-

Պատասխանեմ՝ զան. զփոք. իսկ արդ՝ զենջումի ենթակայի յայսմ նախադասութեն ըստ մասնաւոր և որոշեալ բանի ոչ ծանօթանայ մեզ, բայց եթէ տրամաբանութիւ, ընդունիմ. ըստ հասարակ բանի համեմատելոյ իւրում ստորոգելոյ, ուրանամ զփոքրագոյնդ, և զհետեւութիդ: Արդ՝ դիտեմք ընդ սմին վարդապետին, թէ առ՛ի լինել նախադասութեն իրիք ըստ ինքեան ծանուցեալ, պարտ է զենջումի ենթակային ճանաչել առանց տրամաբանութեն գոնէ ըստ այնմ բանի, որով համեմատի իւրում ստորոգելոյ. որպէս զի համեմատութիւնն այսպիսի ենթակային առ ստորոգեանն, և ստորոգելոյն առ ենթակայն ծանուցի նոյնհետայն միայն յերկերաց. ապա թէ լինիցի այս տրամաբանութիւ, յայնժամ նախադասութեին այն ոչ լինի ըստ ինքեան ծանուցեալ բացարձակապէս, այլ խմաստնոց, և տրամաբանողաց և եթ: Արդ՝ յայսմ տրամաբանութեն, Ընձ է, կամ ոչ է. զենջումի ենթակային ըստ որում համեմատեալ ստորոգելոյն նոյնհետայն ծանօթանայ. զի շատ է ճանաչել զայն ընդ հասարակագոյն բանիւ էակի, կամ ոչնչի. զի զերկաքանչիւրոց ևս հաւատարապէս ճշմարտի. Ի կամ ոչ է: Բայց յայսմ նախադասութեն, Ընձ է, զենջումի ենթակային ըստ որում համեմատեալ ստորոգելոյն՝ ոչ ծանօթանայ մեզ իսկ և իսկ. քանզի համեմատի նմա ընդ բանիւ մասնաւոր, և որոշեալ էակի:

Առարկեցես երկրորդ. Ընկնք ասին ըստ ինքեան ծանուցեալ՝ի մեր կողմանէ, որոց ճանաչումն է՝ի մեզ բնապէս. իսկ արդ՝ ըստ Դամասկացւոյն. գկնք. ա. ուղղափ. հաւ. գլ. ք. և ջ. և ըստ այլոց հարց, յորոց զբազումս Թուէն վարդապետն Ալեքսանդր, և Թուրնեպէ, ճանաչումն այ ընդաբոյս է մեզ բնապէս. ապա:

Այսմ

Ընդ. առ ա.

Ընդհանուր ձեռնարկութիւնք բազմապատիկ լուծումն ընծայի առ'ի սէնն Յովհաննէս։ 'Նախ' զբանս սէից հարց հնար է իմանալ յաղագս ճանաչման այ 'ի միում հասարակ, և ընդ իւիք անորոշ բանիւք բարւոյ ըստ որում՝ այսպիսի, կամ երանութիւն. քանզի մարդն բնապէս փափագէ երանութիւն. և որում բնապէս փափագէ մարդն, բնապէս ճանաչէ զայն. այլ այս ոչ է պարզապէս ճանաչել, թէ գոյ ած, այլ ըստ իմիք միայն. որպէս ճանաչել զԱստուած. ոչ է պարզապէս ճանաչել զպետրոս, թէպէտ և պետրոս իցէ եկեալն։ Ուստի և բազումք զկատարեալ բարին մարդոյ, որ է երանութիւնն, համարին 'ի հարստութիւնս, ոմանք 'ի հեշտութիւնս. իսկ այլք յայլ ինչ։

Պետառն. ա. խ. ա. ա. գ. առ ա. և խ. ժ. յղգս ճչ. պ. ժբ. առ ա.

Երկրորդն է, թէ սէն հարք հաստատուն զծանօթութիւնն այ լինել բնաւորեալ 'ի մեզ. ըստ որում 'ի ձեռն սկզբանց բնաւորելոց 'ի մեզ զիւրին իմն և առ ամենեսին հեշտին տրամաբանութիւն կարեմք ճանաչել, թէ գոյ ած։ Այս է հասարակագոյն լուծումն. զոր և ինքն Յովսէպեզի հակառակ կարծեացն ջատագով՝ խոստովանի ոչ լինել մերժելի։

'ի ա. ղան. գ. խ. ա. պ. առ ա.

Երրորդն է, թէ հնար է իմանալ զբանս սէից հարց յաղագս ճանաչման այ 'ի ձեռն հաղորդութեան, կամ նմանութեան. ըստ որում որով և իցէ ծանուցեալ ճշմարտութիւն, ած (որոյ իւրաքանչիւր ճշմարտութիւն է հաղորդութիւն և նմանութիւն ինչ,) ըստ իւրոց ինչ ճանաչի։

Յայսցանէ ունիս մակաբերել, թէ մեծն Աթանասէ կարի իմն զարտուղեցաւ 'ի ճշմարտութէ յասել անգ իւրում, թէ ածառանիք առ հասարակ, եթէ առաջինիք, և եթէ արդիք, եթէ ուղղափառք, և եթէ չարափառք, բաց 'ի սակիւնեանց, ընդունէին լինել ծանօթութիւնն այ բնածին մեզ. քանզի սէն Յովհաննէս իշխանն ածաբանից, և այլք առ հասարակ ընդ նմա 'ի բաց հելոքեն զայս։

Ստի-

Ստիպիցես բազմօրինակ պատճառաւ ընդ մեծին Աւգոստոսեայ վը բնածին ծանօթուն՝ այ: Նախ՝ ծանօթուլին այ է հասարակ ամ ազանց, և մարդկան, որպես հոգին և բնուլին. սոպա պարտ է համարել, թէ բնածին է հոգւոյ ի բնէ: Երկրորդ, եթէ չիցէ ծանօթուլին այ տնկակից հոգւոյ, հոգին կերպաւորեաց զայն ի զգալեաց. իսկ գաղափարն որ ի զգալեաց՝ քանզի է սահմանաւոր, որ ոչ կարէ երևեցուցանել զնա անսահման: Երրորդ, նա է էակ ծայրագոյնս բարի, և կատարել. իսկ արդ՝ դոյ ի մեզ ի բնէ գաղափար ծայրագոյն բարւոյ, ապա: Չորրորդ. բնաւորեալ է ի սիրտ ամ մարդոյ յօժարուլին առ կրօն, ապա և ծանօթուլին պաշտելոյ զնա:

Պատասխանեմ առ առաջինն, թէ հնար էր ուրանալ զառաջարկուլիդ ըստ սկզբանց վերոյիշատակեալ նախադրանին. որ յայսմ վայրի ի լուծմանն առաջին ձեռնարկուլին ընդունի, թէ կարեն գտանիլ ճշմարտիւ անհաւք. և թէ եղեն բազմք կանխաւ այնպիսիք: Այլ եղեալ զառաջարկուլիդ, ուրեք ցհետև. քանզի ծանօթուլին այ է ամենեցուն հասարակ, ոչ միակ զի է բնածին. այլ զի դիւրաւ հնար է ունել զայն. մինչև անհնար է լինել անյաղթելի տգիտուլին ի մի գոյուլենն այ, որպես ցուցցուք ստորև: Առ երկրորդն պատասխանեմ ընդունելով, թէ գաղափարն սահմանաւոր ոչ կարէ երևեցուցանել զանսահմանն ըստ զինչէի, բայց կարէ երևեցուցանել ըստ էի: Առ զերրորդ մարթի ուրանալ վերոյիշատակեալ հեղինակն. թէ հնար է ունել ծանօթուլին գոյուլենն այ ի զգալեաց. որովհետև զայն քարոզեն սքանչիքք, և սքանչիքք ամ ուրեք: Առ երրորդն պատասխանեմ զանազանելով զի՝ է ի մեզ ի բնէ գաղափար ծայրագոյն բարւոյ, իբրև գոյողի ի միտս մեր, անցցէ. իբրև գոյողի ի կողմանէ իրին, ուրանամ: Առ չորրորդն

բորդն պատասխանեմ ուրանալով, թէ ինչ լինաւորեալ ՚ի սկզբան ամ մարդոյ յօժարութիւն առ կրօն. այլ ծագի այն ՚ի նախենթադրեալ ճանաչմանն Յովաննու:

Հարկիցես երրորդ՝. Այն նախադասութիւն է ըստ ինքեան ծանուցեալ ՚ի մեր կողմանէ, որոյ ճշմարտութիւն յառաջին ըմբռնմանէ եղելոց առանց տրամաբանութեան ծանօթանայ. իսկ արդ՝ այս նախադասութիւն Աք է, է այսպիսի. ապա: Չուզ. փոք. Ինձամբս ած իսկ և իսկ իմացեալ լինի յառաջին ըմբռնմանէ նր և առանց տրամաբանութեան՝ այն լինչ քան զոր մեծագոյն և բարեգոյն չէ հնար գմնաւ ածել. իսկ արդ՝ զայն, քան զոր մեծագոյն և բարեգոյն չէ հնար գմնաւ ածել, իմանամք իսկ և իսկ յառաջին ըմբռնմանէ եղելոց լինել գոյ ՚ի կողմանէ իրին. ապա: Չուզ. փոք. Մեծագոյն և բարեգոյն է գոլ ՚ի կողմանէ իրին և ՚ի միտս, քան ՚ի միտս և եթ. ապա: Այսու ձեռնարկութիւ վարի սքն Անսելմոս. գլ. ը. յառաջաբանութեան:

Պատասխանեմ ուր զփոք. և զցուցմանդ նախ հնար էր ուրանալ զմեծն. զի գուցէ նա, որ լսէ զանունս. Աք, ոչ իմանայ նոյնհետայն նշանակիլ իրիք քան զոր մեծագոյն և բարեգոյն անհնար է գմնաւ ածել. զի այս ոչ է ըստ ինքեան ծանուցեալ ՚ի մեր կողմանէ, այլ պէտս ունի ապացուցանելոյ տրամաբանութիւ. ուստի եղեն ոմանք, որք դաւանէին, թէ ած է մարմին. այսինքն է, մարդակերպագաւանք, և սակայն մեծագոյն և բարեգոյն քան զայս հնար է գմնաւ ածել: Աղ. պ. ա. առ ա.

Այլ եղեալ գմեծագոյնդ, թէ իւրաքանչիւր ոք ՚ի լսելն զանունս Աք, նոյնհետայն իմանայ նշանակիլ իրիք քան զոր մեծագոյն ոչ է հնար գմնաւ ածել, ուրանամ զփոքրագոյնդ. քանզի ոչ հետևի յայսմանէ իմանալ նմա, թէ այն, որ նշանակի այ- Աղ.

սու անուանմբ, է՝ի բնութեն իրաց. կամ որպէս ա-
սեն, դոյ՝ի գործածեալ ներգործութեն, այլ թէ
դոյ միայն յըմբռնման մտաց, կամ որպէս ասեն,
՝ի գոլն նշանակեալ. և չէ հնար ձեռնարկել, թէ
իցէ այրուհի, բայց եթէ ենթադրեսցի, թէ այն,
քան զոր մեծագոյն չէ հնար գմնաւ ածել, է կակ
իրական, կամ կարելի՝ի բնութեն իրաց, որ չէ ըստ
ինքեան ծանուցեալ, և ոչ ընկալեալ յայնց, որ
դնէին, թէ չիք ած. վ՚ըզ հնար է գմնաւ ածել,
թէ չիք ինչ այնպիսի, քան զոր մեծագոյն անհըն-
նար իցէ գմնաւ ածել. այլ թէ է ինչ մտացածին,
և կակ բանի նր, որ զայն՝ի նանիր կեղծեաց անա-
ձին: Վասնզի համարեալ, եթէ եղջերուաքաղն լի-
նէր հարկիւ դոյօղ, զի՞նչ ինչ մակաբերել հնար
էր անտի, բայց եթէ զայս, թէ գոյութեին է յա-
ռարկական իմացմանէ այսր եղջերուաքաղի. կամ
թէ գոյ յըմբռնման քոյ, և՝ի նշանակեալ ներ-
գործութեն. այլ ոչ գոյ՝ի կողմանէ իրին, և՝ի
գործածեալ ներգործութենան. այսպէս է և յայս
խնդիր: Ուստի ունիք այսպէս զանազանեն զփոքրն
Ասին՝ քան զոր մեծագոյն չէ հնար գմնաւ ածել,
իմացեալ լինի նոյնհետայն յառաջին ըմբռնմանէ
եղջերաց գոլ՝ի կողմանէ իրին, եթէ ենթադրեսցի
իբրև ըստ ինքեան ծանուցեալ այնպիսի էակին
լինել իրական, կամ կարելի՝ի բնութեն իրաց, ընդ-
դունիմ. եթէ ոչ ենթադրեսցի իբրև ըստ ինքեան
ծանուցեալ այնպիսի էակին լինել իրական, այլ
պէտս ունիցի այլուստ ցուցանելոյ, ուրանամ: Իսկ
թէ պէտս ունիցի ցուցանիլ այլուստ, յայտ անտի
է, զի՝ի ցուցանել զայս տարժանին սքն Անսէլմոս,
և ամ ածաբանք:

Իսկ յաղագս սրբոյն Անսելմոսի, սրբն Անսելմոս
եպ. ժբ. յաղագս ճշմարտութեն. պ. ժբ. համարձակ
խոստովանի, թէ նա գհակառակ կարծիս կալաւ,
յորմէ ինքն՝ի բաց հրաժարեցաւ պահմանբ պատ-

ուոյ

ուշոյ նորա։ Այսպէս և մեք, բայց եթէ առաջի Թերևս ըստ ումանց, եթէ սուրբն Աստեղծոս եղոյց այսոսիկ ձեռնարկութիւն, թէ գոյութիւն այ է ըստ ինքեան ծանուցեալ՝ ոչ բացարձակապէս, այլ ենթադրեալ զերականութիւն նր։

Ընդդիմիցես. Ապա քան զէակն ամենակատար և քան զոր բարեգոյն անհնար է զմնալ ածել, հնար է զմնալ ածել կատարելագոյն քան բարեգոյն, այսինքն է, էակն իրրպէս գոյօղ. քան զի կատարելագոյն է գոյ իրապէս և՝ի միտս, քան թէ՝ի միտս միայն, որպէս իսկ առաջաւ. իսկ արդ՝ այս է հակառական. քանզի լինէր զմնալ ածել զէակ ամենակատար և ոչ ամենակատար, ապա։

Պատասխանեմ զանազանելով զմակաբերուիդ. Ապա քան զէակն ամենակատար հնար է զմնալ ածել կատարելագոյն՝ի նշանակեալ ներգործութեն, կամ ըստ էական իմացման, ուրանամ։ Ա՞ր զի յառաջական իմացման ամենակատար էակի փակի գոյութիւն։ Հնար է զմնալ ածել զկատարելագոյն՝ի գործածեալ ներգործութեն, կամ ըստ իրականութեն, ընդունիմ։ Եւ չէ այս հակառական. որպէս և չէ հակառական, յորժամ իմանամք զեղջերոյաքաղն ըստ ինքեան հարկաւորապէս գոյօղ՝ի նշանակեալ ներգործութեան, կամ յերկրնտրման. և յորժամ իմանամք, և հաստատեմք, թէ չէ գոյօղ՝ի գործածեալ ներգործութեէ, կամ՝ի կողմանէ իրին։ Ապա ոչ զօրէ հետևութիւն՝ի գաղափարական վիճակէ յիրական վիճակ. և ոչ հետևի բացարձակապէս, թէ գոյութիւն է յէական իմացմանէ այնպիսի էակին. ապա այնպիսի էակն հարկիւ գոյ իրապէս, այլ թէապէս և եթ. զորօրինակ գոյութիւն է յէական իմացմանէ այնպիսի էակի. ապա եթէ գոյ, կի՛ եթէ իցէ էակ իրական, հարկիւ և էապէս գոյ. որպէս և յորժամ իմանամք, թէ պղպատականն է յէական իմացմանէ ձիոյն, յասելն

թէ ձին է զգայական, ոչ հետևի բացատրականքս, թէ ձին իցէ գոյօղ զգայական, այլ թէականս. այս է, եթէ իցէ գոյօղ, հարկիւ և էականս է գոյօղ զգայական:

Այս ձեռնարկութիւն բովանդակ, յոր կարի իմն ապաստանեալ են հակառակորդք՝ ի վերագոյնդ, ճոխագոյնս և՝ ի սովորական ձև առաջի եդեալ, առ քաջագոյնս և յայտնագոյնս լուծանելոյ՝ կարճ՝ ի կարճոյ զայս օրինակ առաջի դնեմք: Ըստ ինքեան ծանուցեալ է, թէ ոճ է էակ ամենակատար, քան զոր կատարելագոյն անհնար է զմտաւ ածել. իսկ արդ՝ ըստ ինքեան ծանուցեալ է, թէ գոյ էակ ամենակատար՝ ի բնութիւն իրաց. ապա: Յուց. վոք. զի գոյութիւն յիրում է կատարելութի. ապա:

Պատասխանեմ նախ, թէ հնար է ուրանալ զմեծ. որպէս յայտ է յաստացելոցս:

Պատասխանեմ երկրորդ՝ ուր. զիոք. Նախ՝ զի պէտս ունի ցուցման. որպէս յայտ է՝ ի ձեռնարկութիւնէ անտի, յորում ցուցանի: Երկրորդ՝ զի ոչ հասու լինին այդմ քաջխմաստ վարդապետք՝ սքին Յովմաս, և յոլովք յածաբանից: Երրորդ, զի ոչ է ըստ ինքեան ծանուցեալ ամենակատար էակին լինել էակ իրական, այլ հնար է յերկբայս լինել, մի գուցէ իցէ էակ մտացածին: Եւ յասելն՝ ի ցուցման անդ, թէ գոյութիւնն յիրում է կատարելութի. զայնս ևս ընդունիմք, թէ էակն ամենակատար իմացեալ լինի իբրև գոյօղ յիրում, այլ յայտնանէ զի իմացել լինի իբրև կայացեալ յիրում՝ ոչ հետևի, թէ ճշմարտիւ գուցէ յիրում. գուցէ չիցէ էակ իրական, այլ կեղծեալ. զոր օրինակ և յայտնանէ, զի իմանամք զեղջերուաքաղն գոյօղ յիրում, ոչ հետևի, թէ գուցէ ճշմարտիւ: Եւ այս իսկ է զոր՝ ի վերագոյնդ ասեաք, թէ իմացումն ամենակատար էակի՝ ի մէջ բերէ զգոյութիւն՝ ի նշանակեալ ներգործութեան, և ոչ՝ ի գործածեալ ներգործութենէ:

Ե-

Առարկեցես չորրորդ. Այս նախադասութիւն, Ընդ է պաշտելի, է ըստ բնութեան ծանուցեալ 'ի մեր կողմանէ. ապա և առաւել այս՝ թէ Ընդ է. որ յառաջագոյն ենթադրի քան զառաջինն, վէր զի յառաջագոյն է գոլն քան պաշտիլն։

Պատասխանեմ նախ. զան. զառաջ. Այս նախադասութիւն Ընդ է պաշտելի, է ըստ բնութեան ծանուցեալ 'ի մեր կողմանէ բացարձակապէս. ուրանամ. թէապէս, այսինքն, եթէ գուցէ ած, ընդունիմ. որպէս այս Աստուածն են պաշտելի, է ըստ բնութեան ծանուցեալ 'ի մեր կողմանէ, ոչ բացարձակապէս, այլ թէապէս, եթէ գուցեն ծնօղքն։ Ուստի ուրանամ զհետեւութիւդ։ Արկրորդ՝ եդեալ զառաջարկութիւդ, ուր զհետ. վէր զի առ'ի լինել գործնական սկզբան իրիք ըստ բնութեան ծանուցեալ 'ի մեր կողմանէ, ոչ է հարկ, թէ և սկիզբն Հայեցողական յոր հիմնի, իցէ ըստ բնութեան ծանուցեալ նաև 'ի մեր կողմանէ, այլ շատ է. թէ իցէ ծանուցեալ մեզ կամ ըստ բնութեան, և կամ տրամաբանութիւն. որպէս թէպէտ այս սկիզբն գործնական. Աստուածն են պաշտելի, իցէ ըստ բնութեան ծանուցեալ 'ի մեր կողմանէ, բայց չէ մեզ ըստ բնութեան ծանուցեալ, թէ գոյ իցեն ծնօղք մեր, և թէ իցեն արդեօք, այլ զայս ճանաչելիք տրամաբանութիւն, և կամ այլազգ։

Առարկեցես հինգերորդ. Լինելն ճշմարտութեան է ըստ բնութեան ծանուցեալ. իսկ արդ ած է ճշմարտութիւն. ապա։

Պատասխանեմ զան. զառաջ. Լինելն ճշմարտութիւն 'ի հասարակի՝ է ըստ բնութեան ծանուցեալ, ընդունիմ. լինելն առաջին ճշմարտութիւն, ուրանամ։ Արդ՝ ած է առաջին ճշմարտութիւն։ Ընդառ ճ.

Առարկեցես վեցերորդ. Ըստ սկզբանց սեպն Աստուածոյ մանուկն հասեալ 'ի բանականութիւն յառաջնում վայրկենի անդ պարտաւորի դառնալ առ

ած. իսկ արդ՝ յառաջնում վայրկենի անդ ոչ կա-
րէ ունել ծանօթութիւն զայ ՚ի ձեռն տրամաբանու-
թեան. մի՝ զի յայնժամ է անբնդունակ տրամաբա-
նութեան. երկրորդ, զի տրամաբանութիւնն պահան-
չէ զերկար ժամանակ: Ապա այս ծանօթութիւն ոչ
ըստ բնութեան անմիջապէս է ՚ի նմա ՚ի քնէ:

Պատասխանեմ նախ առ մեծապոյնդ, թէ մա-
նուկն հասեալ ՚ի բանականութեան պարտաւորի միայն
դառնալ առ ած նովին եղանակաւ, որով ճանաչէ
զնա. որպէս զի եթէ ճանաչեսցէ զնա անորոշ ընդ
բանիւ բարւոյ իբր այնպիսի՝ կամ ընդ բանիւ հա-
մեստ բարւոյ. պարտաւորի ևս դառնալ առ նա ըստ
այսմ օրինակի, և ոչ այլազգ:

Երկրորդ՝ եդեալ զմեծապոյնդ, հնար է ու-
րանալ զփոքրագոյնդ. Ա՛ զի մանուկն յայնժամ
միայն համարի հասեալ ՚ի բանականութեան, յորժամ
է ընդունակ տրամաբանութեան. և ոչինչ ընդդէմ է,
թէ պահանջէ տրամաբանութեանն զոյգն իսչ մասն
ժամուն: Ա՛ զի առաջին վայրկեան բանի ՚ի մանկան,
ոչ իմացեալ լինի փիզիկական վայրկեան, այլ բարոյա-
կան: ՚Ի վերոյ այսր ամի են և բազում միջոցք, որովք
ծանօթանայ ած ամենեցուն՝ ևս և մանկանց. զորս-
րինակ՝ ազգեցութիւնք, ՚ի ձեռն ծնողաց, կամ ուսուց-
չաց, և կամ այլազգ, որպէս ասացաք ստորև:

Երարկիցես ևօթներորդ. Ինական օրէնք
ըստ առաջին սկզբանցն, որպիսի են սոքա, Կա-
րին է առնել. չարն է խորշելի, են ըստ բնութեան
ծանուցեալ ՚ի մեր կողմանէ, ապա և օրինադիրն նոր:

Պնեմ զան. զհետ. Ապա և օրինադիրն ՚ի հա-
սարակի, ընդունիմ ՚ի մանուածոյ, ուրանամ: Արդ՝
ըստ բնութեան ծանուցեալ է, թէ բնական օրէնք են յու-
մեմն ՚ի հասարակի, բայց թէ յորմէ՞ արդեօք, ՚ի
բնութենէ՞, եթէ ՚ի բանէ, կամ թէ յէակէ իմիք զանա-
զանելոյ, և թէ զի՞նչ իցէ այն, ոչ է մեզ ըստ բնութեան
ծանուցեալ, այլ ցուցանի դիւրին իմն տրամաբանութիւն:

ՊՐԱԿ.

ՊՐԸԿ. Ր.

Ընդեւօր էկէ աձ. ե որձնէ պապճաուօր ապագուացանէկէ։

Ասելի է, թէ հնդեքումբ զօրաւորագոյն պատ- Աստ. պ.
ճառօք ցուցանի ընդդէմ անաձիւց թէ գոյ աձ։ Ե. բոլ.

Յառաջքան զպատճառան առաջի դնել, առ դիւրագոյն իմանալոյ զնա,

Վիտել պարտ է նախ. զի անուճամբս աձ իմացեալ լինի ևս և առ անաձս, էակ քան զոր մեծագոյն, և բարեգոյն չէ հնար գմտաւ ածել, այս է, իմանալի գոյացութի՛ն գերագոյն քան զամ ստեղծուած, արարչապետ ամի և առաջնորդ, անկախ. անփոփոխելի, յաւիտենական, անսահման, անչափ, գերամփբուր ներգործական, և միանգամայն աստուձիք՝ ծայրագոյն և յանսահմանս կատարեալ յամ սեռի։ Ընդ՝ զսա համարիլն անաձք լինել անհնարին յերում, և լոկ մտացածին. մանաւանդ վե՛ կուտակութե՛ն բազում կատարելութե՛ն այնոցիկ՝ ի նմա, որք միմեանց հակառակ երևին։ Այլ թէ գտանիցի՛ն արդեօք ճշմարտի՛ւ անաձք, զայն ստորև ուսնիմք քննել։

Վիտելի է երկրորդ. զի շարժօղք և առնօղք կրկնակի ստորակարգին միմեանց, այսինքն ըստ պատահման, և ըստ ինքեան։ Ստորակարգութե՛ն յայնժամ է ըստ պատահման յորժամ առնու միևն զգոլ կամ ներգործական զօրութե՛ն՝ ի միւսմէ, բայց ո՛չ ներգործական ազդեցութիւն, և ո՛չ կարօտի այնմ՝ ի գործելն ներգործութի՛ն. զնրօրինակ որդին կարգի ընդ հարբ, զի առնու՝ ի հօրէ զգօրութե՛ն ներգործելոյ և շարժելոյ, բայց ներգործէ և շարժէ անկախ՝ ի ներգործական ազդեցութե՛ն հօրն։ Այս ասի ստորակարգութե՛ն ըստ պատահման. վե՛ զի է ամենևին ըստ պատահման նկատմամբ առնելութե՛ն, որով հայրն արտադրեաց զորդին, ծնանիլն այսորիկ

որդւոյ զայլ որդի, կամ առնելն զայլ ինչ: Ատրակարգութիւնն ըստ ինքեան է, յորժամ մի շարժօղն, կամ առնօղն պէտս ունի ներգործական ազդեցութիւնէ գերագունի առ՚ի ներգործութիւնէ առնել, իբր զի գերագոյնն ազդեսցէ ներգործութիւնէ՚ի ստորինն յառնել նմ. և ըստ այսմ երկրորդական պատճառք ստորակարգին ասի: Արդ՝ թէպէտ՚ի շարժօղ և յառնօղ ստորակարգեալս ըստ պատահմանն հնար իցէ ընդունել զյառաջադիմութիւնի յանսահմանս, բայց ոչ՚ի ստորակարգեալս ըստ ինքեան, զի որովհետև՚ի շարժօղս, և յառնօղս ստորակարգեալս ըստ ինքեան յետինն ոչ առնէ, և ոչ շարժէ, բայց եթէ շարժեալ, և մերձեցուցեալ յառաջնոյն, և սա յայլմէ, և այսպէս հանապազորդ. մինչև յետնոյն ոչ շարժիլ և ոչ առնել, եթէ ոչ յառաջնոյն քան զնմա դնէ միջնորդաբար շարժեցեալ, եդեալ զյառաջադիմութիւնի յանսահմանս՝ ոչինչ շարժումն և ոչինչ առնելութիւնի լինէր. վասն զի անսահմանն է անանցանելի, և՚ինձմա անհնար է ժամանել՚ի յառաջինն: Այլ եթէ լինէին՚ի ժամացուցի անսահման անհիք, որոց յետինն՚ի շարժման իւրում լինէր կախեալ՚ի շարժմանէ առաջնոյն, ոչ երբէք շարժէր. զի չէր հնար ժամանել երբէք յառաջինն յանուշոց անսահման ենթադրելոց: Այսպս ծանուցեալ,

Աշ. Առաջին պատճառն այսպէս առաջի դնի. բայց ենթադրեալ նախ, թէ են ինչ, որք շարժին յաշխարհի աստ. որպէս յայտ է զգայութիւնք:

Ոմն առաջին շարժօղ ամենևին անշարժ. իսկ սրդ՝ այն է ած. ապա գոյ ած: Անծն և փոքրն են ցուցանելի:

Ցուցանի փոքրն. Առաջին շարժօղն ամենևին անշարժ է ներգործութիւնի գերամեծաւոր ազատ չիմ կարողականութէ. զի ըստ այնմ է իմն շարժելի, ըստ որում է՚ի կարողութէնէ առ այն, առ որ շարժի.

ժի. ուստի որ է ամենևին անշարժ, զոչինչ կա-
րողականութի ունի, և է ներգործութի գերա-
զանքուր. իսկ արդ՝ ներգործութին գերազանքուր է
ած, ապա։ Յուցանի սոյն փոք. Ներգործութին
գերազանքուր պարունակէ զամ կատարելութի երևա-
կայելի. զի թէ պակասեալ էր յիմէ, լինէր ի
կարողութե առ այն. և այսպէս ոչ լինէր ներգոր-
ծութի գերազանքուր. ուստի և է այն զոր մե-
ծագոյն, և բարեգոյն անհնար է զմտաւ ածել.
այսինքն է, հոգեղէն գոյացութի, իմացական, ա-
մարչապետ ամի, և առաջնորդ, անկախ, անփոփոխ,
յաւիտենական, անչափ, անսահման, միմիայն ևն.
ապա է ած։ Յայտ է հետևութին յառաջին ծա-
նօթութէ անտի։

Յուցանի երկրորդ՝ առաջին փոքրն. Առաջին
շարժօղն ամենևին անշարժ պարտի լինել էակ յիւր-
մէ, և անկախ. ապա թէ ոչ՝ լինէր շարժելի յայլմէ.
էակ գոյացական, հոգեղէն, իմացական, ամարչա-
պետ ամի, և առաջնորդ. քանզի շարժէ զամենե-
սեան, եթէ զգոյացականս, և եթէ զհոգեղէնս. և
ոչ կարէր շարժել, եթէ ոչ ճանաչէր. էակ անըս-
տեղծ, հարկաւոր, և անփոփոխ. ապա թէ ոչ՝ ոչ
լինէր անշարժ, և ոչ առաջին շարժօղ. էակ յա-
ւիտենական, զի անփոփոխութին է արմատ յաւի-
տենականութե. և միանգամայն ասացից, էակ բո-
վանդակիչ ամ կատարելութեց. ապա թէ ոչ՝ լի-
նէր շարժելի, և ի կարողութե առ այսոսիկ. որ-
պէս իսկ ասէաք յառաջին ցուցման։

Յուցանի առաջին մեծ. Ամ որ շարժի՝ յայլմէ
շարժի. իսկ արդ՝ ի շարժօղս ստորակարգեալս ըս-
ինքեան ոչ կարէ լինել յառաջադիմութի յանսահ-
մանս. Ապա գոյ առաջին շարժօղ, որ ոչ շար-
ժի, այլ է ամենևին անշարժ։ Յայտ է փոք. յերկ-
րորդ գիտելոյն անտի։ Յուց. մեծ. Նոյնն ոչ
կարէ լինել շարժօղ և շարժեալ ըստ նոյնոյ. ապա

ամ որ շարժի՝ յայլմէ շարժի: Յուց. առաջ. Նոյնն
ոչ կարէ լինել ՚ի կարողութենէ, և ՚ի ներգործութիւն
առ նոյնն. քանզի լինել ՚ի կարողութենէ առ իմն, է
բերիլ առ նա. ուստի և լինել պակասեալ ՚ի նմանէ.
իսկ լինել ՚ի ներգործութենէ նկատմամբ իրիք, է ու-
նել զայն. արդ՝ անհնար է նոյնոյ միանգամայն ու-
նել և ոչ ունել զնմն. իսկ արդ՝ եթէ նոյնն ըստ
նոյնոյ շարժէր զինքն, լինէր ՚ի ներգործութենէ և
՚ի կարողութենէ առ նոյնն. ապա: Յուցանի փոք.
Ըստ այնմ շարժի իմն, ըստ որում է ՚ի կարողու-
թեան. զի շարժիչն է վերածիլ ՚ի կարողութենէ ՚ի
ներգործութիւն. և ըստ այնմ շարժէ իմն, ըստ ո-
րում է ՚ի ներգործութենէ. զի շարժելն է արտադրել
զներգործութիւն. Ապա եթէ նոյնն, ևն:

Պատասխանեն ոմանք յարդեաց, առ որս ոչ
է ընդունելի այս առած հաստատակօրէն ընկալեալ,
վասն զի տեսանեն, զի մեծապէս օժանդակէ փիլի-
գական նախաշարժութենէց: Հնար է նոյնոյ լինել
՚ի կարողութենէ միանգամայն, և ՚ի գործութենական
ներգործութենէ, որով կարօղ է շարժել զինքն առ
ներգործութենի կերպական. և առ ցուցումն սորա
պէսպէս օրինակս շեղջակուտեն. զՙօրինակ ասեն,
կենդանիք գործութենական ներգործութեամբ շար-
ժեն զինքեանս առ կերպական ներգործութենի. ծա-
նուցք շարժեն զինքեանս առ կեդրոն. ջուրն ջերմ
ինքնին դարձուցանէ զինքն յառաջին ցրտութենի, և
խաշմուզ խաղողոյ իւրովն ջերմանայ. սոյնպէս և
կիրն ողողեալ ջուրբ, ևն:

Այլ է ընդդէմ, նախ. Գործութենական ներ-
գործութիւն, կամ որ նոյն է, ներգործական կա-
րողութենի ստեղծուածոց ոչ է պարզ ներգործակա-
նութիւն՝ ազատ յամ՛ կարողականութենէ, վասն լինելոյն
կարողութենի ստեղծեալ, և անկատար. այլ է ըստ
մասին ինչ ներգործական, ըստ որում կարօղ է
ելուզանել զներգործութենի, և ըստ մասին կրաւո-

րա-

բական, ըստ որում պէտս ունի և ևս շարժիլ առ այս յայլմէ։ Ուստի որչափ և համարեսցի ի զօրութենական ներգործութեէ, առ ի լինել և գնիլ ի կերպական ներգործութեէ, պէտս ունի հանապազ շարժելոյ յայլմէ։ Արդ՝ ասի ներգործութեի զօրութենական, կամ կարողութեի ներգործական ըստ որում կարօղ է ելուզանել զներգործութեի իբրև շարժեալ յայլմէ, որով զանազանի լիով ի սոսկ կրաւորական կարողութէ։

Ընդդէմ է երկրորդ. Օրի վն լինելոյ իրիք ի զօրութենական ներգործութէ, ասի, թէ կարօղ է շարժել զինքն, և ոչ եթէ է ներգործութիք շարժօղ զինքն. վն զի առ այս պարտի լինել ի կերպական ներգործութեէ. իսկ արդ՝ այն զօրութենական ներգործութեի, կամ ներգործական կարողութեի ոչ կարէ ինքնին միայնակ վերածել զինքն ի ներգործութեի կերպական, ապա թէ ոչ՝ դառնայ անդրէն ակիզբն մեր, թէ լինէր միանգամայն ի ներգործութէ և ի կարողութէ առ նոյն։

Ընդդէմ է երրորդ. Օրի որ շարժի, է անկատար առանձինն՝ քան զոյդ ընդ նմա առ որ շարժի. ապա թէ ոչ՝ ի զուր շարժէր առ այն. և վասն որ ինչ է ի զօրութենական ներգործութէ՝ է անկատար առանձինն, քան ընդ կերպական ներգործութէ առ որ շարժի. իսկ արդ՝ որ ինչ է անկատար, ոչ կարէ ինքնին և եթէ կատարեալագոյն գործել զինքն, կամ զայլն. զի ոչ ոք տայ ինքնին և եթէ՝ զոր ինչ ոչ ունի. ապա։

Եւ եթէ ասիցես, ունի նա զյոլով կատարելութիս զօրութէ. Ընդոյն պնդեմք, թէ ունելդ զօրութէ է անկատար ինչ քան զունել կերպականապէս։ Ապա զնոյն ասեմք զոր յառաջն։

Իսկ առ օրինակս հակառակորդացդ, Պատասխանեմք. Նախ՝ առ առաջինն, թէ կենդանիք շարժեն զինքեանս ըստ զանազան մասանց, յորոց ո-

մինէ

մանք են շարժեալք և ումանք շարժօղք : Առաջին մանն շարժօղ է սիրտն . իսկ շարժումն սրտի թէպէտ է եղուզմանէ ՚ի սրտէ , սակայն արարողապէս է ՚ի ծնողէն իբրև սեպհական կիրք կենդանական էակի , ըստ որում տալով ծնողին կղղրդեալ կեանս սաղմին , վերջնաբար որոշէ զսիրտն առ շարժումն . որոյ միջնորդութիւք շարժէ և զայլ մասունս : Առ երկրորդն նոյնպէս պատասխանեմք , թէ ուժգնութիւն , որով ծանուցանք բերին ՚ի վայր , է ՚ի ծնողէն իբրև յատկութիւն գՀետ կեալ բնութեան . որպէս ջերմութիւն գՀետ գայ հրոյ :

Առ երրորդն զնոյն է ասել , թէ ցրտութիւն է յատկութիւն ջրոյ , որ ՚ի հեռանալ արգելչին , բղխէ ՚ի նմանէ . և այսպէս է ՚ի ծնողէն , և ոչինչ ընդդէմ է , թէ բազում անգամ առ սոսա , և առ սոցին նմանս ոչ ևս կայ ծնօղն . եթէ չկայցէ ենթակայիւ , սակայն կայ զօրութիւք հանապազ ՚ի բնութեանէ իրին , զոր բացորոշեաց առ այնպիսի յատկութիւնս : Առ չորրորդն պատասխանեմք , թէ շարժմամբ ճմլելոյ խաղողոյն՝ ոգեղէն մասունք բռնութիւն ՚ի գանգուածոյ անտի ՚ի դուրս ելանեն , և սովին շարժմամբ ջերմանան . և ջերմացեալքն զայլս ջերմացուցանեն . զնոյն է ասել և զկրոյ ջուրբ ողողելոյ : Այլ զայսցանէ ճոխագոյնս ճառի ՚ի բնաբանութեանէ . գիրք . է . ՚ի վերջ պայմանաց շարժման , տես անդ , եթէ հաճոյ իցէ :

Անգ. Երկրորդ պատճառն առաջի դնի այսպէս . բայց նախադրեալ , թէ եղանին ինչ ինչ , կամ եղեալ են յաշխարհի աստ , որ յայտ է զգայութիւնք , և փորձիւ նորին իսկ աշխարհի :

Զոյ առաջին պատճառ ամի արարօղ . ամենևին անեղ . իսկ արդ՝ այս է ամ . ապա գոյ ամ :

Փոքրագոյնս յայտ է նովին փաստիւք , ոչ և առաջին փոքր . նախընթաց պատճառին :

Յու-

Յուցանի մեծ. Ընդ որ լինի՝ յայլմէ լինի, և պատճառի. զի ոչինչ կարէ առնել զինքն. ապա թէ ոչ՝ լինէր մինչչեւ էր եղեալ. իսկ արդ յարբչական պատճառս ստորակարգեալս ըստ ինքեան ոչ կարէ լինել յառաջադիմութեի յանսահմանս. այլ և ոչ՝ ի պատճառս ըստ պատահման ստորակարգեալ, եթէ ոչ գուցէ ՚ած. ապա։ Ունծս յայտ է. իսկ փոքր. ևս ըստ առաջնի մասին յայտ է յաւացեալոցս. և զայսմանէ ըստ ինքեան ստորակարգութէ երևի լինել պատճառ սկզբն [illegible]ովմնոյն, որպէս նշանակէ աստանօր Աիլլիոս. յայս միտ, թէ առաջնին պատճառն իցէ պատճառ միջնոյն, և միջնին պատճառ վերջնոյն, ոչ միայն վ տալոյ նմին զներգործականն զօրութեի. զի այս գործէ զստորակարգութեի ըստ պատահման և եթ. այլև ըստ որում ներգործականապէս ազդէ ՚ի նա առ՚ի գործել և առնել ներգործութէ. և յայս միտ այս պատճառ է կարի իմն մերձաւոր նախընթացին։

Յուցանի երկրորդ մասն փոք. Օի թէպէտ ոչ է ընդդէմ լինել յառաջադիմութեի յանբաւս ՚ի պատճառս ըստ պատահման ստորակարգեալս, յորժամ գասանի առաջնին առնօղ արտաքոյ բոլոր հաւաքման անսահման պատճառաց. և լինէր իսկ ներգործաբար, եթէ յաւիտենից լինէին ծնունդք, սակայն ընդդէմ է, եթէ ոչ դիցի առաջնին առնօղ արտաքոյ բոլոր հաւաքման. իսկ արդ՝ եթէ չիք ՚ած, չիք առաջնին առնօղ արտաքոյ բոլոր հաւաքման անսահման պատճառաց. ապա։ Յուց. մեծ. Որպէս իւրաքանչիւր պատճառ ոչ է յիւրմէ, այլ յայլմէ, այսպէս և բոլոր հաւաքումն ոչ է յիւրմէ, այլ յայլմէ. իսկ արդ՝ որպէս և ենթադրի՝ ոչ գոյ այլ իմն պատճառիչ արտաքոյ բոլոր հաւաքման. ապա։ Ունծ. յայտ է, զի յայմ ստորոգեալս, բաց ՚ի քանակականաց, կամ որք հուպ են քանակութէ, զօրէ ձեռնարկութէն ՚ի մանաւանդ առ բոլորն, ոչ

յայտ է տրամաբանին. և որպէս արդ ասասցուք ապա:

ԱՆԴ. Երրորդ պատճառն առաջի դնի այսպէս. Ոչ էակ հարկաւոր. այս է, որում հարկիւ, և՛ի բնութիւն պատշաճի գոլ. իսկ արդ՝ այս էակ է ՅԾ. Ապա գոյ ՅԾ: Յայտ է փոք. նախ՝ զի էակն հարկաւոր է էակ ինքնագոյ, ոչ արտադրեալ, անկախ, անփոփոխելի, յաւիտենական, էակ՝ յորմէ ներբնդունականք ընդունին զգոլ. զի որ ինչ ըստ ինքեան է այսպիսի, է պատճառ այլոց, որք ըստ պատահմանն են այսպիսի. ուստի և է էակ գոյացական, հոգեղէն, իմացական, արարչապետ ամի. Ապա է ՅԾ: Երկրորդ, էակն հարկաւոր ոչինչ սահմանօք պարագրի՛ի կատարելութենէ. Ապա է յանսահմանս կատարեալ. Ապա է ՅԾ: Յուց. առաջ. զի յորմէ՞ արդեօք հնար էր պարագրիլ նմա՛ի կատարելութենէ. ոչ յիւրմէ, զի ոչ է իւր պատճառ. և եթէ լինէր, զնմա՛ կարելի կատարելութենէ բերէր յանձին: Ե՛ւ այն զի՝ որ է հարկաւոր, այնչափ է, որչափ ինչ կարէ լինել: Ե՛ւ ոչ յայլմէ հնար էր պարագրիլ, զի չիք այլ ինչ քան զնա վերագոյն, ապա:

Յուցանի մեծ. Եթէ ոչ լինէր էակ ինչ հարկաւոր, այլ ամենևքեան լինէին ներընդունական, և կարելի՛ի բնութենէ իրաց, ոչինչ էակ գտանէր ներգործութի՛ւ՛ի կողմանէ իրին. իսկ հետևութիւս է աուտ. ապա: Յուց. Հետև. մեծագունիս. Այնք որք ցուցանեն միայն զկարողականութենէ, և զներընդունականութենէ աւ ներգործութենէ, ոչ կարեն վերածիլ՛ի նա, բայց եթէ՛ի ձեռն պատճառի, որ հարկիւ պարունակեսցէ զայն ներգործութենէ. զի՞օրինակ, վէ զի ջուրն է՛ի կարողութենէ աւ ջերմութենէ՝ կամ պատահաբար ջերմ, ոչ կարէր ջերմանալ երբեք, եթէ չլինէր էակ ինչ՛ի բնութենէ իւրմէ ջերմ. յորմէ գոնէ միշտորդաբար կամ անմիջապէս ծաւալեաս-

լեաս-

լեսցի ջերմութիւն ի ջուր անգր։ Ապա եթէ ոչ գոյր էակ իմն հարկաւոր, որում ի բնութէ իւրմէ և հարկիւ իցէ պատշաճեալ գոլ. ոչինչ էակ գտանէր ներգործութիւն ի կողմանէ իրին։

Հաստատի. Համարեալ թէ ոչինչ էակք գոն ներգործութիւք, ըստ որում հնար է լինել, եթէ ամ ինչ լինէր ներընդունական. քանզի ներընդունականն կարէ լինել և ոչ լինել. կամ գէթ դիցուք թէ չէիք ինչ. արդ՝ յորմէ հնար է ունել նոցա զգոլ, եթէ չեցէ էակ ինչ հարկիւ գոյօղ. ոչ յիւրեանց. զի որ ոչն է, ոչ կարէ հաստացանել զինքն. և ոչ յայլմէ, զի ոչ գոյ ինչ յառաջագոյն, ոյզ ենթադրի. ապա ոչ կարէին լինել. ապա լինէին, և ոչ լինէին կարելի. լինէին՝ վ զի ենթադրի. և ոչ լինէին՝ քանզի չէր ինչ, յորմէ կարէին ունել զգոլ։ Ապա պարտ է դնել զէակ հարկաւոր, յորմէ այլք առ հասարակ ունիցին զգոլ։

Պատասխանեն անուածք, թէպէտ իւրաքանչիւր ուրոյն ուրոյն են ներընդունական, սակայն բոլոր հաւաքումն էակաց ըստ նոյ անսահման, ոչ է ներընդունական, այլ հարկաւոր. քանզի ոչ զօրէ հետեւութիւն յիւրաքանչիւրմէ առանձինն առ բոլորն, և ոչ ի տրամաբանական իմացմանէ առ հաւաքականն. զօրօրինակ յայսմանէ, զի իւրաքանչիւր քաղաքացի ոչ է ժողովուրդ, ոչ հետևի և ամենայն քաղաքացեաց չլինել ժողովուրդ. և յայսմանէ, թէ իւրաքանչիւր մասունք անսահման գծի, եթէ էր, լինէին սահմանաւոր, ոչ հետևի լինել գծին սահմանաւոր։ Եւ յայսմանէ, թէ տարածութիւն կարէ լինել առանց այս ինչ, և այն ինչ ձևոյ, ոչ հետևի, թէ կարէ լինել առանց ամենայն ձևոյ։

Այլ է ընդդէմ նախ, այս պատասխանի դնէ զանսահման բազմութիւն ներգործութեամբ, զոր իբրև անկարելի հնարքն փիլիսոփայք։ Ուրկ-

րտրդ,

Երկրորդ, ըստ այսմ պատասխանումն՝ գոյ էակ հարկաւոր. այսինքն է, բոլոր այս հաւաքումն էակաց. ապա և էակ յայմ սեռս կատարեալ. որպէս ’ի վեր անդր ձեռնարկեաք: Երդ՝ զիա՞րդ հնար իցէ զհաւաքումն ստեղծեալ և անկատար էակաց համարել անսահմանս կատարեալ, որովհետև բոլոր հաւաքումն մասանց ոչ այլ ինչ է, բայց եթէ մասունքն միանգամայն առեալ: Ապա այս անսահման կատարելութիւն էակաց լինի և ոչ լինի ած:

Երրորդ. Օ՛ն թէպէտ յեղականաց առ բոլորն ոչ զօրէ հետևութիւնն ’ի քանակական ստորոգեալս, կամ յայլ պատահականս, որք պատշաճին, կամ միայն իւրաքանչիւրում առանձինն, և կամ միայն հաւաքման ըստ որում է հաւաքումն. այլ զօրէ յէական ստորոգեալս, որք պատշաճին իրին ըստ ինքեան: Երդ՝ ստորոգեալքն յօրինակդ յառաջ բերեալք պատշաճին կամ իւրաքանչիւրում առանձին և եթ. կամ միայն հաւաքման ըստ որում է հաւաքումն. զնօրօրինակ լինելն ժողովուրդ ոչ պատշաճի միում և եթ. կամ իւրաքանչիւրում առանձինն, այլ ամենեցուն հաւաքապէս: Այնպէս և անսահմանն, եթէ լինելը կարելի, ոչ պատշաճէր մասանց առանձինն. վն զի յիսկութենէ մասին է լինել սահմանաւոր, այլ ամենեցուն հաւաքապէս: Նա ’ի վն այսր ամի յանկարելոյ, կամ յանպատշաճէ հետևի այլ անկարելի: Երդ՝ անհնար է լինել անսահման գծի. նա՝ վնկ զի բաղկացեալ է ’ի սահմանաւոր մասանց: Դարձեալ, իւրաքանչիւրում ձևոյ առանձինն հնար է լինել մեկուսի ’ի տարածութենէ, բայց ոչ ամ ձևոյ հաւաքապէս. զի անհնար է տարածելոյն լինել առանց ամ ձևոյ: Նա այս հանդիպի մանաւանդ ’ի ստորոգեալս, որք հային ’ի քանակութենէ. վն զի բոլոր հաւաքումն ’ի սեռի քանակութենէ յաւելու ինչ ’ի վն իւրաքանչիւր եղականաց, այսինքն է, զմեծ քանակութենէ: Այլ

յէական ստորոգելիս, որք պատշաճին իրին ըստ ինքեան՝ օրինաւոր է հետեւութիւն ի տրամաբաշխական խմացմանէ առ հաւաքականն. զօրօրինակ զօրէ հետեւութիւնս. իւրաքանչիւր մարդ է բանական. ապա ամենայն մարդիկ են բանական. Թէպէտ և իցեն անսահման։ Արդ՝ ներընդունանալոյ կամ կարելութիւն առ գոլ, կամ ոչ գոլ՝ է էական ինչ իւրաքանչիւր եղելական էակի. որպէս անուածք իսկ խոստովանին. ապա և ամենեցուն, կամ բոլոր հաւաքման էակաց։

Այլ ասիցես. լինելն արտադրելի է ստորոգելի էական ամ՝ կարելի ստեղծուածոց. իսկ արդ՝ ոչ զօրէ այս հետեւութիւն. իւրաքանչիւր կարելի ստեղծուած է արտադրելի. Ապա և բովանդակ հաւաքումն կարելի ստեղծուածոց է արտադրելի. ապա։

Պատասխանեմ ուր. զիոք. Ոչ որով եղանականաւ իւրաքանչիւր կարելի ստեղծուածք են արտադրելի, այնպէս է արտադրելի և բովանդակ հաւաքումն նոյ. իսկ իւրաքանչիւր կարելի ստեղծուածք են արտադրելի, ոչ հաւաքապէս, այլ տրամաբաշխաբար միայն. այ է, բազումք և բազումք ևս հետ զհետէ ցանբաւս. և այսպէս բոլոր հաւաքումն նոյ է արտադրելի տրամաբաշխաբար, և ոչ հաւաքապէս։

Ասացց արդ՝ վ՚ էր ընդերկար դեգերիմք ի լուծանել զձեռնարկութիւս անուածից ընդդէմ գոյութեան հարկաւոր էակի, որմէհետև ինքեանք ևս մտադիւր ընդունին զայն. քանզի գնեն ոչ միայն զհաւաքումն իսկ էակաց, զորմէ այժմ, այլ և զնոյն իսկ զնիւթն, զոր կոչեն հարկաւոր, յատկեանական, անստեղծ, անսահման, յորոյ մասնկանց, կամ՝ ի հիւլէից կրկին շարժմամբ ուղիղ և խոստոնակ՝ ճեպով աստ անդ արշաւելոց, եւանէ ըստ բերման այս աշխարհ երեւելի։

Ա՛պա զայս և եթէ առաջնկայ մեզ ցուցանել ընդդէմ նոցա, զի թէ կամիցին ըստ հետեւումն խոսիլ, պարտին ընդունել զայծ. և թէ նոքա յանհնարինս և յանմտագոյնս մոլորին՝ յընծայել ընդ իրին, այսինքն նիւթոյն, կամ մանավանդ նորա զկատարելութիս այծութիե:

Առաջինն հետևի յաստացելոցս. Օ՛ն որ միանգամ ճանաչէ զէակ հարկաւոր, յաւիտենական, անստեղծ, անսահման, ինքնագոյ. ուստի և յայմ սեռի յանսահմանս կատարեալ, որպէս յայտ է՝ի ձեռնարկութիէ անտի, ճանաչէ զայծ. որովհետև անոճամբս այծ ոչ այլ ինչ իմանամք մեք, և ոչ անայծք, բայց եթէ զէակ յանսահմանս կատարել: Ա՛ս սորին մի ուրանան զայծ. զի ոչ իմանան, և թէ զհարդ հնար իցէ լինել էակի յանսահմանս կատարելոյ. և սակայն զնիւթն այնպէս ճանաչեն: Ա՛պա թէ կամիցէ, և թէ ակամայ ճանաչեն, թէ գոյ այծ. և սորին իսկ յայտնդիման հակառակին անձանց, զի պնդեն, թէ անհնար է իմանալ զէակ յանսահմանս կատարել, և սակայն համարին զնիւթն յանսահմանս կատարել. իբր թէ դիւրաւ հնար իցէ իմանալ զնիւթն յանսահմանս կատարել, քան թէ զէակն հոգեղէն յանբաւս կատարել: Ա՛ս այսպէ անկանին՝ի նոյն անպատշաճութի, յորմէ խոյս տալ նկրտէին:

Ա՛յլ որպէս և ասացաքս, յանհնարինս և յանմտագոյնս մոլորին յընծայել նիւթոյ զատորոգելիս այծութիե, քանզի ակն յայտնի է ամենեցուն, թէ նիւթն ըստ ինքեան է անշօր. թէ չունի ինչ կերպ գոյացական ըստ ինքեան, այլ է սոսկ ընդունակութի՝ առ կերպից, թէ չունի ըստ ինքեան շարժումն. և ոչ շարժի, եթէ ոչ շարժեսցի յայլմէ, կամ՝ի մարմնոյ, և կամ՝ի հոգւոյ. թէ անընդունակ է առ զգայութիե, մտածութիե, հանճարոյ, և խորհրդոյ. ա՛ղէ նկարեսջիր քեզ զինչ տրամադրութիւն և կամիցիս, նիւթոյ, կամ հիւլէից, ոչ երբէք

բէք գոցես ՚ի նմա զբուրվի խորհրդածելոյ։ Ա-
պա անհնարինս և յանմուռոգոյնս մոլորին անձամբ
լինդայել սմա, որ անարդագոյն է քան զամ, զկա-
տարելութիւնս ածուածէ։ Իսկ պնդել, թէ այս աշ-
խարհ երևելի կազմեալ է ՚ի դիպուածական արշա-
ւանաց հիւլեից, կամ ՚ի մանկանց այսր նիւթոյ,
տխմարութի՛ւն, և անմտութի՛ւն մեծ է, որպէս տուրէ
ցուցցուք։

Աղօթողդ պատճառն առաջի դնի այսպէս. Գոյ Աղ.
էակ իմն ծայրագոյնս կատարեալ, ամենևին ազնիւ,
ծայրագոյնս էակ. որ է պատճառ ամ կատարելու-
թեանց այլոց. Ապա գոյ ած։ Փոք. յայտ է յա-
տացելոցս։ մնացեալսդ յառաջին նախադիտելոյն։
Յուց. մեծ։ Տեսանեմք յէս՝ զի ոմանք են յա-
ւէտ կամ նուազ էակ. և յաւէտ կամ նուազ
կատարեալ. իսկ արդ՝ յաւէտն կամ նուազն ասին
զանազանիլց, ըստ որում յաւէտ կամ նուազ մատ-
չին առ իմն՝ որ է յաւէտ այնպիսի, և պէսպէս ե-
զանակաւ հաղորդին նմա. զոր օրինակ՝ յաւէտ ջերմն
է, որ յաւէտ մատչի առ ևս առաւել ջերմն, և
հաղորդի նմա յաւէտ։ Ապա գոյ ՚ի բնութի՛ւն ի-
րաց էակ իմն ծայրագոյն կատարեալ, ծայրագոյնս
ազնիւ, ծայրագոյնս էակ. որպէս զի լինել նմա
պատճառ այլոց կատարելոց, կամ արարչական, և
կամ գէթ գաղափարական. իբրզի մատչելով առ
նա, և հեռանալով ՚ի նմանէ. յաւէտ, կամ նուազ
հաղորդելով նմա. նմանելով նմա կամ պակաս-
ելով՝ ելցէ, կամ չափեսցի կատարելութիւն այլոց։
Զանազն ըստ հաւատարակ առածին, առաջինն յիւ-
րաքանչիւր սեռի է պատճառ այլոց եղելոց յայնմ
սեռի. այս է, արարչական, կամ գաղափարական։

Ընացաք, կամ գաղափարական. զի եթէ ա-
ռաջինն յիւրաքանչիւր սեռի չելցէ միշտ արարչա-
կան պատճառ այլոց եղելոց յայնմ սեռի. զոր օ-
րինակ հուրն է արարչական պատճառ ամ ջերմա-

ցելոց, է գոնէ պատճառ գաղափարական. վ[ա]ր զի կատարելագոյնքն յիմիք սեռի են դէմ գաղափարիդ անկատարից ՚ի նմին սեռի:

Երկրորդ պատճառն առաջի դնի այսպէս. Գոյ գերագոյն տեսուչ և կառավար. իսկ արդ՝ այնպիսին է ած. ապա գոյ ած: Փոքր. յայտ է, զի զած ոչ այլ ինչ իմանամք, բայց եթէ գերագոյն զօրութի՛ ածպետական, ուղղիչ, և կառավար ամի: Հուց. մեծ. Տեսանեմք, զի ինչ ինչ, որք չունին զճանաչումն, գործեն՝ ոչ տաքապարտուց և ըստ բերման, այլ վ[ա]ր վախճանի. որ յայտ անտի է, զի հանապազ, և կամ յաճախագոյնս նովին եղանակաւ գործեն. զօրօրինակ՝ երկինք շարժին հանապազ նովին եղանակաւ. ծանուցք հանապազ բերին ՚ի վայր, և թեթևք ՚ի վեր. ևն: Իսկ արդ՝ որք չունին զճանաչումն՝ ոչ դիմեն առ վախճան՝ բայց եթէ ուղղեալ յայլմէ, որ իցէ ճանաչական, և իմացական. որպէս նետն ոչ ժամանէր ՚ի նպատակն, եթէ չէր ուղղեալ ՚ի նետաձգէն: Ապա գոյ ամենիմաստ կառավար, և գերագոյն իմն հանճար ուղղիչ ածի առ իւրեանց վախճան, որ է ած:

Սոսեն անուածք. թէ այն ներգործութիք բնական պատճառաց ոչ գան յառաջ յառաջնորդութէ իմացականի ուրուք, այլ ՚ի հարկաւորութէ, և ՚ի յօժարութէ բնութե՛ն ներգործողի:

Այլ է ընդդէմ. զի եդեալ ևս զայդ, չէ պարտ վ[ա]ր այդր արտաքսել զիմացականն առաջնորդ, այլ մնանուանդ ընդունել. որ զբնական պատճառս այսոցիկ, զմասունս, զկազմուածս, զտրամադրութի՛ս, և զյօժարութի՛ս առ այսպիսի շարժմունս և վախճանս արար յաջողակս. զօրօրինակ տունն թէպէտ յարմարեալ է ՚ի բնակութի՛ մարդկան, բայց ունի զայս կամամբ յառաջնորդութէ իրիք հանճարոյ:

Յաւելեալ լինի և վեցերորդ պատճառ մերձաւոր նախընթացին ՚ի զննութէ աշխարհի. որ հա-

մա-

մտաւորիւ առաջի դնի այսպէս։ Օրինակի համար ինչ որ յաշխարհի աստ աքանչելի երևին, եթէ յերկինս եթէ յերկրի, եթէ ի ծովու, եթէ ի նոյն իսկ մարդն և եթ, ըստ կազմուածոյ, ըստ կարգի, ըստ դրից, ըստ շարժման, ըստ տրամադրութեան, ըստ գեղեցկութեան, ըստ պէսպիսութեան, և ըստ միաբանութեան ի կարգի առ իւրեանց վախճան, անհնար է առանց անմտութեան վերաբերել ի խառնիխուռն երեւեւթից հիւլէից, այլ ընծայել պարտ է հարկաւ գերագոյն իմն հանճարոյ, որ ճարտարապետ և առաջնորդ է սոցա ամենեցուն։ Իսկ արդ՝ այս է ած. զի ամենեքին իմանան ի ձեռն այ գերագոյն հաստիչ, և կառավար աշխարհի. ապա գոյ ած։ Յուց. առաջ. Օգործ ինչ վայելուչ ճարտարապետ, զօրինակ, զյարկ արքունի, զժամացոյց, զվայելուչ արձան, կամ զնկար, անհնար է առանց անմտութեան վերագրել դիպուածոյ, կամ բաղդի, և ոչ ճարտար արհեստաւորի։ Ապա ևս առաւել զգեղեցկայարմար, և զհրաշալի կարգ բովանդակ աշխարհի. մանաւանդ թէ զմարդկեղէն մարմնոյ միայն, յորում մեծապէս փայլէ ձեռագիտութի, և հանճար, քան թէ ի վայելուչ գործս ճարտարեալս մարդկեղէն արհեստիւ, անհնարին է առանց անմտութեան ընծայել ըստ պատահման երեւեկութեան հիւլէից, և ոչ գերագոյն հանճարոյ։ Ապաքէն եթէ աշխարհս այս, որ այսչափ պէսպիսութիւն մասանց և այսպիսի պատշաճական կարգմամբ ամբառ իւրեանց վախճան աքանչելի, եղեալ իցէ պատահական արշաւանօք հիւլէից, ոչ է ասիցեն, թէ զի է զի ոչ կազմեցաւ երբէք դուիւն խառնիխուռն արշաւանօք հիւլէից ժամացոյց, կամ արքունի պարանք, արձան, կամ նկար, և զոր ինչ միանգամ տեսանելոք լինիլ մարդկային արհեստիւ. կամ որպէս ասէ Ցուլիոս. գիրք. ը. յաղագս բնութեան աստուածոյ. զի է զի և ըստ նմին օրինակի ոչ լինի բա-

բանաստեղծութեի Հոմերոսի ի դիպուածական արշաւանաց տաւից, կամ ապարանք արքունի ի դիպուճածական դասաւորութենէ փայտից, և քարանց, կամ տախտակ նկարչին ի սահել գունոց ի վերնից ըստ բերման: Այսպս պատճառ ճոխագոյն գտանես բացատրել առ հեղինակս:

Լուծմունք առաջիկայից:

Առարկիցես նախ. Ոչինչ գիտութիւն ցուցանէ զիւր առարկայ. իսկ արդ՝ ածք է առարկայ ածաբանութեն. ապա:

Պատասխանեմ նախ, զան. զմեծ. Ոչինչ գիտութեի ցուցանէ զիւր առարկայ, ի սեփական սկզբանց, անցեալ. յայլուստ փոխառելոց, ուրանամ: Արդ՝ պատճառք մեր են փոխառեալ ի բնական գիտութենց, որպէս յառաջն իսկ ասացաք:

Ասացաք, անցեալ մեծ. վասն զի ոչինչ ընդդէմ է ածաբանութեն ցուցանել զգոյութիւն այ ի սեփական սկզբանց. այսինքն է հաւատոյ, որպէս արար աստ սբն Յովսէս ի ձեռն. այլ ընդդէմն, ի բանէն Աւետ. Աւ էմ ոլ էն. Ուստի,

Պատասխանեմ երկրորդ. զան. զնոյն մեծ. Ոչինչ գիտութեի բնական ցուցանէ զիւր առարկայն, ընդունիմ զմեծ. ըստ մտաց առաջին լուծման: Ոչինչ գիտութիւն գերբնական, ուրանամ: Պատճառ անհանգիստութենս է, զի բնական գիտութիք յայսմ կայանան, զի ի սկզբանց բնական լուսով ծանուցելոց ցուցանեն զյատկութիս զիւրեանց առարկայէ. վայ և նմանդրեն զնա: Իսկ ածաբանութիւն յածի ի ցուցանել զայն ամ, զորս յանմիջապէս յայտնելոց հնար է մակաբերել. վասն զի ձգի յայմ, որք միանգամ անկանին ընդ զօրութենական յայտնութիւն այ: Այս քանզի հնար է գոյութեանն այ լինել այսպիսի, և իրօք իսկ է, նաև ի սեփական սկզբանց կարէ ցուցանել զայն:

Ա-

Առարկեցես երկրորդ. Կոյութիւն այ է մասն հաւատոյ. իսկ արդ՝ հաւատոյքն ոչ ապացուցանին. ապա:

Պատասխանեմ նախ. Թէ գոյութիւն այ, և այլ սոյնպիսիք, զորս հնար է գիտել բնական փաստիւ, ոչ են մասունք հաւատոյ, այլ նախընթացք մասանց հաւատոյ: Քանզի հաւատքն ենթադրէ յառաջագոյն զճանաչումն բնական. որպէս շնորհքն զբնութիւն, և ոյք կատարելութիւն՝ զկատարելին: Այլ ոչինչ ընդդէմ է, թէ զայն, որ ըստ ինքեան է ապացուցանելի և գիտելի, ընկալցի ոք իբրև զհաւատալի, որ ոչ լինի խնամուտ ապացուցութիւն: Ա. Կոր. Ե. առ Ա.

Յայսմանէ յառաջագայ երկրորդ պատասխանի զան. զՁԾ. Կոյութիւն այ է մասն հաւատոյ՝ նկատմամբ նոցա, որք ոչ գիտեն զայն բնական ապացուցութիւք, ընդունելի. նկատմամբ նոցա, որք գիտեն զայն, ուրանալի:

Ստիպիցես. Կոյութիւն այ է պարզապէս մասն հաւատոյ վասն ամենեցուն. ապա: Յուց. առաջ. ընդառաքելոյն. Նբր. ԺԱ. Զ. որ ասէ. Հաւատով որ ծանի է այնմ, որ հերձնոյ առ Աստուած, և որ խնդրելոցն վարձատու լինի է: Իսկ արդ՝ չկամ ոք որում չկոչեն պարտ մերձենալ առ Աստուած, որչափ և գիտուն իցէ. ապա:

Պատասխանեմ, թէ առաքեալն խօսի զայն ըստ որում գերբնական հեղինակ, որ ըստ որում այսպիսի՝ միայն հաւատով ճանաչի: Եւ զայս իմացուցած ցուցանէն հետագայ բանքն. վասն զի ասէ առաքեալն. Հաւատով որ ծանի է այնմ, որ հերձնոյ առ Աստուած, և որ խնդրելոցն վարձատու լինի է: Եւ որ խնդրելոցն պիտի պարգեւորոց. այսինքն, զի է հեղինակ շնորհաց, և պարգեւիչ փառաց: Եւ ևս հնար է իմանալ զբան առաքելոյն ոչ վասն նոցա, որք ունին զապացուցութիւն զգոյութիւնն այ, այլ վասն նոցա, որք չունին զայն:

Անակաբերիցես. Ըպա յոռնգոյն է վիճակ ածաբանին, կամ քրիստոնեայ փիլիսոփային, քան գողղկան: Յուց. մակաբ. նախ՝ զի այն ածաբան չունի զարդիւնս հաւատոյ, զոր ունի գողղուկն: Երկրորդ, զի մեծագոյն է ստուգութիւն հաւատոյ, զոր ունի գողղուկն յաղագս գոյութեանն այլ, քան զստուգութիւն ապացուցութեանն, զոր ունի ածաբանն, կամ քրիստոնեայ փիլիսոփայն. ապա:

Պատասխանեմ՝ ուր. զմակաբ. և զառաջին ցուցման, ուր. զառ. Ա՛ն զի թէպէտ ածաբանն, կամ քրիստոնեայ փիլիսոփային չունի զՀաւատ կերպական ներգործական ղգոյութիւնն այլ, սակայն ունի զայն 'ի պատրաստութիւն սրտի, մինչդի Հաւատայր, եթէ ոչ գիտէր զայն. ուստի ոչ կորուսանէ զարդիւնս Հաւատոյ:

Ը.Է.Խ.Է. Պ.Ը. առ Է. Պատասխանեմ առ երկրորդ ցուցումդ զան. զառաջ. Ա՛ն ածագոյն է ստուգութիւն հաւատոյ, քան զստուգութիւն ապացուցութեանն մեկուսի առեալ, ընդունիմ. քան զստուգութիւն ապացուցութեանն ածային վկայութիւն հաստատեալ. ուրանամ: Ըստ՝ քրիստոնեայ փիլիսոփայն որ գիտէ ապացուցանել, թէ է ած, գիտէ և վերադարձ դատումն, թէ այս ճշմարտութեան հաստատեալ է ածային վկայութիւն, և թէ կարէ լինել առարկայ անսխալ հաւատոյ. նա՝ թէ փակի 'ի նախադասութիւնս յայտնիկ. Ած է գերբնական հեղինակ. Ած է երեքանձնեայ, զորս ածային հաւատով հաւատայ: Ա՛ւ յայտնէ առաւել և հաստատի զայնու ճշմարտութիւն. իմացեալ զայն թէ է անվրէպ. որ և յաստուածատուստ առաջին դնի և յայտնի իբրև ճշմարիտ. և որ փակի յայնս, զորս հաւատայ ածային հաւատով. և այսպէս մնայ 'ի նմին գէթ զորութիւն ստուգութեան հաւատոյ: Որպէս յառնել ուրուք զսպացուցութեան ինչ, տեսնել թէ իբր ճշմարիտ դատի զայնս վարգապետ իւր, կի՛ ներհուն ոք, յայտ է թէ առաւել և հաստատ

տատի յիւրում ապացուցուԹէ, իմացեալ զայն, Թէ է անխաբ. զոր և այր ներհուն դատի իբրև ճըշմարիտ։

Պատասխանեն ոմանք, Թէ չէ հակասական քրիստոնեայ փիլիսոփային հաւանիլ այսմ նախադասուԹէ. Ա՛ն է. Թէ վը յայտականդիմանուԹիւն, և Թէ վը յայտնուԹիւն, իբր վը շարժառիթ, որ ստուգագոյն է քան զնոյն իսկ յայտականդիմանուԹիւն։ Այլ այսպիսի հաւանուԹէ վը զի ոչ է գնահատ իրէ, ոչ լինի յատկապէս, և անձկապէս հաւանուԹիւն հաւատոյ. որ ըստ առաքելոյն է յանդիմանուԹէ որոց ոչն երևին. այլ միայն լայնաբար և անյատկապէս։

Առարկիցես երրորդ. Ո՛չ է հնար ապացուցանել, Թէ է ՚ած, բայց եԹէ ՚ի ձեռն գործոց. իսկ արդ՝ գործքն չեն համեմատեալ նմա, իբր զի են սահմանաւոր, և նա անսահման. ապա։

Պատասխանեմ զան. զփոք. Գործքն չեն հա- Անգ. առ ֆ.
մեմատեալ առ՚ի ճանաչել մեզ ՚ի ձեռն նոյ, Թէ զինչ իցէ ՚ած, անցցէ. առ՚ի ճանաչել մեզ ՚ի ձեռն նոյ, Թէ իցէ, ուրանամ։ Այլ զի ՚ի դնիլ որպիսի և իցէ գործոյ, հարկ է դնիլ և պատճառին, վը ունելոյն զհարկաւոր բաղադանուԹի ընդ նմա։ Այսացաք, անցցէ. վը զի ՚ի բնուԹէ գործոյն՝ Թէ և անհամեմատ իցէ, հնար է ունել ըստ համեմատական ինչ նմանուԹէ գէԹ զբստ իրաց ինչ, և զանկատար ծանօԹուԹի բնուԹէ պատճառին։

Ստիպիցես. Ընդհնար է ճանաչել զ՚ած ըստ էի՝ առանց ճանաչելոյ զնա ըստ զինչէի. իսկ արդ՝ ՚ի ձեռն գործոց ըստ ներելոյդ, Թէ անցցէ, չէ հնար ճանաչել զ՚ած ըստ զինչէի. ապա և ոչ ըստէի։ Յուց. մեծ. զի գոյուԹիւն է ՚ի զինչուԹէն այ. ապա։

Պատասխանեմ զան. զփոք. ՚Ի ձեռն գործոց անհնար է ունել ծանօԹուԹի զայ ըստ զինչէի՝ ուղղակի, և ըստ ինքեան, անցցէ, որպէս ՚ի վերոյ։

անուղղակի, և ըստ պատահման. ուրանամ: Ապա յայտնեն, թէ է գործն, յուցանի ուղղակի, թէ է պատճառն. այլ քանզի յայլմէ կողմանէ գոյութիւնն է էական ստորոգելի պատճառին, անուղղակի յուցանի, թէ զինչ իցէ, սակայն յոյժ անկատարապէս. որովհետև ևս քան զևս բազում և այլ կատարելութիւս փակէ յինքեան ած:

Առարկիցես ընդդէմ. Եթէ լինէր ած ամենիմաստ կառավար աշխարհի, ոչ տայր Թոյլ այնչափ հրեշից և չարեաց, թէ ի բարոյականս, և թէ ի բնականս: Երկրորդ, ոչ ներէր բարեաց խոշտանգիլ և տառապիլ, և չարաց վայելել ի յաջողութիւս. ապա:

Ատ. պ. գ. առ ած. Պատասխանեմ առ առաջինն. ընդ սմին () գոյ, յընձեռ. Թէ ած վն լինելոյն ծայրագոյնս բարի՝ ոչ իւիք ներէր չարի իմիք լինել ի գործս իւր, եթէ ոչ լիներ այնպէս ամենակարող և բարի, միանգամ բարիս առնել և ի չարեաց. Ապա այս պատշաճի անսահման բարութեն այ, զի Թոյլ տացէ լինել չարեաց, և ի նոցանէ հանցէ բարիս:

Պատասխանեմ առ երկրորդն, Թէ յայտմանէ առաւել ևս յուցանի գոյութիւն այ, և հանդերձեալ կենաց: Վ զի եթէ բնական և արդար է պատկել զառաքինութիւս, և պատժել զմեղս. և յասպիս բազում անգամ զհակառակն է տեսանել, ապա գոյ այլ իմն կեանք, յորում ի գերագոյն դատաւորէ տացի վարձք առաքինութեն, և պատիժ մեղութեն:

Ի վն այսր ամի են և բազում պատճառք, (զորոց Թերևս ասասցուք ի ճառս նախախնամութեն.) որոց վն ներէ ած չարեաց վայելել ի յաջողութիւս առ ժամանակ մի, և սմին հակառակ՝ բարեաց տառապիլ. ևս առաւել, զի ուսցուք աստի արհամարհել զկորստական, և զանցաւոր յաջողուածս աշխարհի, որք հասարակ են չարաց և բարեաց:

Սի-

Սահմանեա ընդդէմ առաջին լուծման. Ներհական կատարելոյն է հարկիւ և՛ի բնութէ իւրմէ եղծանել զկռուիլն ընդհարականն իւր. ապա թէ գոյ ծայրագոյն, և անսահման բարի, այսինքն է ած, անհնար է չարի իմիք գտանիլ, ևս և ընդ պատըրուակաւ ելուզանելոյ յայնմանէ զբարի։

Պատասխանեմ զան. զմեծ. Ներհական կատարելոյն է՛ի բնութէ իւրմէ եղծանել զկռուիլն ընդհարականն իւր, կերպականապէս, և՛ի սեփական ենթակայի, ընդունիմ. արարողապէս, և յօտար ենթակայս, զարձեալ զանազանեմ, եթէ իցէ պատճառ փաղանուն, և հարկաւ ներգործեսցէ, ընդունիմ. եթէ իցէ պատճառ հոմանուն, և ներգործեսցէ ազատօրէն, ուրանամ։ Ընդ՝ բան անսահմանի բարութէն, որ է յած իրրև՛ի սեփական ենթակայի, արտաքսէ՛ի նմանէ զկռուիլն զամ բան չարութէն, մինչև լինել յինքեան ծայրագոյնս բարի, և ոչինչ իմիք չար։ Ապ՛ի հաղորդելն ստեղծուածոց արարողապէս զնւր բարութի. ոչ՛ի բայ մերժէ՛ի նոցանէ զամ բան չարութէն. մի՝ զի որովհետև է պատճառ՛ի գերագոյն կարգի, ուստի և հոմանուն. ոչ կարէ հաղորդել նոցա բովանդակ զնւր բարութի. երկրորդ՝ զի որովհետև ներգործէ՛ի նոսա ազատօրէն, զայնպիսի և զայնչափ աստիճան բարութէն հաղորդէ նոյ, ըստ որում հաճոյ է ինքեան։

Առարկիցես հինգերորդ. Ոչինչ՛ի յառաջբերեալ պատճառացդ, և ոչ ամենեքին միանգամայն ցուցանեն գործունէաբար, թէ գոյ ած. ապա։ Ցուց. առաջ. զի առաջինն ցուցանէ, թէ գոյ առաջին շարժօղ։ Երկրորդն, թէ գոյ առաջին պատճառ։ Երրորդն, թէ գոյ էակ հարկաւոր։ Չորրորդն, թէ գոյ էակ ամենակատար։ Հինգերորդն, թէ գոյ գերագոյն կառավար։ Վեցերորդն, թէ գոյ հաստիչ աշխարհի. իսկ արդ՝ անբաւական է այս

առ

առ՝ի ցուցանել, թէ գոյ ՚ած. ապա։ Ցուց. փոք. Բաց՝ի սոցանէ ամենեցուն, ՚ած է մի, յաւիտեն. նական, անփուփոխելի, անչափ, ամենակարօղ, անսահման, ևն. իսկ արդ՝ ՚ի ձեռն նշանակեալ պատճառացդ ոչ ցուցանի լինել այսպիսի էակի. ապաս

Պատասխանեմ ուր. զառաջ. և զցուց. ուր. զփոք. զորոյ ցուց. զան. զփոք. Իսկ արդ՝ զլինել այսպիսի էակի ոչ ցուցանեն անմիջապէս պատճառքս նշանակեալ, ընդունիմ։ Ա՛չ ցուցանեն դէթ միջնորդաբար, ուրանամ. որպէս յայտ է ՚ի պատճառացդ վերագոյնդ բացատրելոց. զնորօրինակ եղեալ և ցուցեալ եթէ գոյ առաջին շարժօղ, նոյնհետայն հետևի, թէ է գերամեծաւր ներդործութիւն, և ՚ամ իրօք կատարեալ. ուստի թէ է և յաւիտենական, անչափ, աննիւթական, ամենակարօղ, անբաւ, այլ և մի. դի անհնար է լինել երկուց ծայրագոյն կատարելոց, որպէս ասացուք ՚ի ճառելն ըզմիութիւն ՚այ։ Նոյն է ասել և յաղագս այլոց ցուցմանց, որպէս է տեսանել։

Պատասխանեմ երկրորդ. Օ՛ի թէպէտ և պատճառքս մեր ոչ ցուցանեն զայս ՚ամ ստորագելիս ուրոյն ուրոյն, սակայն յայտնեն այս ինչ հետևի, թէ սոքա ոչ ըստ բաւականին ապացուցանեն զ՚ած ըստ զինչ էի, այլ ոչ ըստ էի. քանզի այս ՚ամ որոշ ստորագելիք վերաբերին առ խնդիրն, թէ զի՞նչ է։ Իսկ առ բաւականս առնելոյ խնդրոյն, թէ գո՞յ արդեօք ՚ած, շատ իցէ ապացուցանել, թէ գոյ այնպիսի իմն էակ, որ իցէ համեմատ անկատար. և անորոշ իմացման, զոր կերպաւորել սովոր եմք ՚ի լսել զանունն ՚այ. ապա թէ ոչ՝ շփոթէր խնդիրն ըստ զինչ էի, ընդ խնդրոյն՝ որ ըստ էի։

Սահմանեմ. Ընդ՚ած ընդունին զէակ հարկաւոր, անկախ, ոչ արտադրել, ամենակատար, այնինքն է զինւմն, կի՛ զաշխարհս. և սակայն ուրանան թէ գոյ ՚ած. Ընդ պատճառքս մեր են անբաւական։

Պա-

Պատասխանեմ զան. զմեծ. Այն է կացուցիչ ՅԾային բնութեան, որ իմացեալ լինի ՚ի նմա զառաջինն իբրև ներգործական որոշեալ ստորոգեալ զօրութիւն զանազանեալ ՚ի ստորոգելեաց, և արմատ նոյ, ընդունիմ. որ իմացեալ լինի ՚ի նմա զառաջինն իբրև ստորոգեալ Հասարակ, և գերազանցեալ քան զամենայն ստորոգելիս, կամ զյատկութիւս, ուրանամ։ Այսպա թէ ոչ՝ իսկութի էակի, կամ գոյացութեն, և կամ մարմնոյ լինելոր ՚ի մարդն նոր կերպական կացուցիչ. որովհետև նա է, որ իմացեալ լինի ՚ի նմա յառաջագոյն քան զբանականութիւնն։ Այդ՝ իսկութի ինքնագոյ էակի է իբրև ստորոգեալ Հասարակ և գերազանցեալ, որպէս և ցուցաւ։

Ստիպեցես. Իսկութի ինքնագոյ էակի յԱծ է իբրու ներգործական որոշեալ ստորոգել, որ և զբոլ յիւրմէ զամենայն ՅԾային յատկութիւս. ասպա։

Յուց. առաջ. Ահա՛ ի յայտ իբրու ներգործական որոշեալ ստորոգեալ, որ և զերծու յիւրմէ զամ աստուածային յատկութիւնս, որ զանազանէ զբնութիւնն ածային. զի նոյն է կացուցիչ և զանազանիչ. իսկ արդ՝ իսկութիւն ինքնագոյ էակի է զանազանիչ աստուածային բնութեանն ըստ վերադոյնդ ընդունելոյ. ապա

Պատասխանեմ ասե. զառաջ. և զյուց. զանազանէ զբնութիւնն ածային յամենեցունց. այսինքն թէ՝ ի ստեղծուածոց, և թէ յածային յատկութենէ, ընդունիմ: Ա՛ն զի այս պահանջէն առ իսկութիւն բնութեանն անձկանալս առելոյ, որովհետև է արմատ յատկութենէ, վասն և զանազանեալ՝ ի նոցանէ գէթ զօրութեբ: Ա՛ւ արդ իսկութեի ինքնագոյ էակի թէպետ և զանազանէ զբնութիւնն ածային՝ ի ստեղծուածոց, սակայն ոչ զանազանէ զնա յածային յատկութենէ. որովհետև այնպէս սեփական է նոցա որպէս և բնութեբ:

ՅՕԴՈՒԱԾՈ Գ:

Ա՛ստ ասասկո՛ւածոց ոչ ընդդէմ է երկրորդ եղբօսկո՛ւածէ:

Առարկիցես նախ՝ ի վկայութէ սբին Աւգմնոյ: Աբ վարդապետան. ստորև. խ. ձ. պ. ք. ասէ; թէ յածէ գոլ, կամ էութէ և իմանալ նոյն են ըստ իրին, այլ ոչ ըստ բանի իմացման. Ապա ըստ զանակի իմացման մերոյ, իմանալն յածէ ոչ է կերպականապէս նորա էութէ: Ընդէն առ ա. ուսուցանէ, թէ երանութէին ոչ պատշաճի այլ ըսո՛ բառնէ էութէ, այլ յաւէս ըսո՛ բառնէ ի մտացութէ: Ապա այլ է բան էութէ, և այլ իմացութէ: Ա՛ւ ա.

առ

առ Աննիպալտ. զան. լե. լա. ա. պ. բ. առ ֆ. ասէ, թէ որպէս նմանութիւն նոյն է ընդ էութիւնէ իւրոյ, այլ տարբերեալ բանիւ, այսպէս և կոչիլն։ Իսկ արդ՝ կամիլն զանազանի զօրութիւք յէութենէ, և ոչ կացուցանէ զնա. ապա և իմանալն։ Եւ դարձեալ. աստ. Ի յառաջար. ինդ. ժդ. Ի ճառելն զգիտութենէն այ, ասէ. թէ մինչև ցայսմայր ճառեցաք զդոյացութենէն այ. և այժմ սկիզբն առնումք ճառել զգործողութենէն։ Եւ Ի մէջ գործողութենց գնէ զնմանալն։ Ապա զէութիւնն այ ենթադրէ յառաջագոյն կացուցեալ, քան թէ ըմբռնել մեզ Ի նմա զնմանալն։

Պատասխանեմ, թէ այսոցիկ բանից սկսեալ Յովհաննէս, և այլ սոցին նմանեաց հնար է Ի մէջ բերել զկրկին լուծումն ընդհանուր Ի սկզբանցդ եղելոց։ Նախ՝ թէ սէր վարդապետն խօսի զէութենէն այ լայնաբար առեալ փոխանակ անստեղծ էակի. կամ զներգործական իմանալոյն ընդ բանիւ գործողութեան, կամ ստորոգելոյ։ Երկրորդ, թէ գնէ Ի մէջ էութեն և իմանալոյ զանազանութեի տրամաբանող բանի և եթ. որ հիմնի յեղանակի իմանալոյ մերոյ զնծայինս համեմատութեամբ առ ստեղծեալ իրս. յորս գոլ և իմանալ իրապէս զանազանին. այլ ոչ զանազանութեի տրամաբանեալ բանի. որ ունի զհիմն յոյծ։

Եւ և առ վկայութիւնն. որ Ի ա. առ Աննիպալտ. Պնեմ՝ թէ այս գործ ստութեամբ գրեցաւ մանաւորապէս սկսեալ Յովհաննէս. վասն տես յարդարդ։ Եւ այն զի Ի յառաջ բերեալ բանդ լինի բաղդատութեի Ի մէջ իմանալոյ և կամելոյ նկատմամբ առ էութենէն, ըստ սեռի զանազանութեն և եթ ըստ որում երկաբանչիւրքն և այս ոչ զանազանին յէութենէ իրապէս, այլ բանիւ միայն. այլ ոչ ըստ եղանակի զանազանութեն բանի։ Եւ առ վկայութիւնն. որ Ի յառաջա. ին. ժդ. գիտել պարտ է

և ը Յովհաննու. զի սէր վարդապետն չասաց, եթէ ցայսմհետէ ճառեցաք զբնութէնն այ, այլ զայնցանէ, որք վերաբերին առ գոյացութիւնն այ. և և՛ ոչ ասաց, եթէ այժմ խորհիմք զածոյին գործողութեանց, այլ զայնց, որք վերաբերին առ գործողութիւնն այ: Իսկ առ գործողութի վերաբերի բնութիւնն, վ՛ը զի նա է արմատ, և սկիզբն գործողութեանց: Ա՛յ ՚ի ճառելն զհմանալոյն այ ճառէ և զբնութէնէ նորա:

Ստիպեցաս ՚ի սէրն Յովհայէ դարձեալ. որ՚ի յառաջբերեալ. խ. ժ՚ղ. պ. ա. բոլ. ուսուցանէ, թէ աննիւթականութիւնն է արմատ իմացական զօրութեանն, կամ իմացման այ, յորմէ հետևի, թէ ածոյին իմացումն ո՛չ կարէ լինել կացուցիչ ածոյին բնութեան: Ասա՝ զի իմացումն ո՛չ է այն ինչ, որ զառաջինն ըմբռնի յածմ, այլ ինքն աննիւթականութիւնն: Երկրորդ, զի հակառակն է ապացուցանել զկացուցիչ բնութէնէ ՚ի յառաջագունէ ՚ի ձեռն այլոյ իրիք, որովհետև նմա յաւէտ պարտ է լինել պատճառ ցուցանելոյ զայլս ՚ի յառաջագունէ. ապա:

Պատասխանեմ, թէ սէրն Յովհաննա ո՛չ ասաց, եթէ աննիւթականութիւնն է արմատ, կամ պատճառ ՚ի յառաջագունէ իմացական զօրութեանն, և իմացման այ, այլ միայն թէ է պատճառ, ուստի ոչինչ հարկ է իմանալ զարմատոյ ճշդիւ: Ա՛յ զի յայտ է թէ աննիւթականութիւնն ո՛չ է յատկապէս արմատ իմացական աստիճանի, որպէս բնութիւնն է արմատ յատկութեանց. որովհետև իմացական առեղծուածս իսկ կացուցանի բնութիւնն ՚ի ձեռն իմացական աստիճանի. և ո՛չ աննիւթականութիւնք. ուրեմն զհետ գոյիցէ աստիճանն իմացական իբրև կիրք: Պարտ է արմատ լայնաբար, և անյատկապէս. այսինքն, է իբրև պատճառ զուգընթաց, կամ պայման հարկիւ պահանջեալ, և էապէս տարբացեալ յամ աստիճան ճանաչական. որպէս առաւել յայտ լինի յա-

ասացելոցս Ի վեր յառաջաբերեալ խնդ. ժէ։ Օրո-
բինակ եթէ ասեաք, թէ մարդկութիւն է պատճառ
բանականութեան, կամ զօրութիւն ինքնաշարժութեան
է պատճառ կենդանւոյ։ Նա վասն ոչ հետևի, թէ ան-
նիւթականութիւն է այն ինչ, որ յառաջագոյն ի-
մացեալ լինի յայծ. և եղեալ ևս թէ այսպէս էր,
գոն ոչ իմացեալ լինէր իբրև յառաջագոյն ինչ
ներգործականագոյն, և կատարեալագոյն. այլ իբրև
կարողական ինչ և հասարակ ամ ստորագելեաց։
Վարձեալ՝ ոչ հետևի իմացական աստիճանին ցու-
ցանիլ Ի ձեռն աննիւթականութեան իբրև Ի ձեռն
պատճառի որ Ի յառաջագունէ։

Պատասխանեն այլք, թէ աննիւթականութիւն
է իմացական աստիճանին պատճառ Ի յառաջագունէ
Ի մեր կողմանէ, և ոչ յիւրմէ կողմանէ. քանզի ո-
րովհետև աննիւթականութիւն, իմացականութիւն, և ի-
մացումն ոչ զանազանին Ի ստեղծուածս ըստ սեռի
իւրեանց, կամ ըստ կերպական բանի, այլ ըստ կա-
րողականութեան, իբր զի ստեղծուածն ոչ է ներ-
գործութիւն մաքուր նոյնացուցիչ իւրոյ վերջնին ներ-
գործականութեան. վասն այնորիկ օրպէս և Ի վերագոյնդ
նշանակեցաք՝ ոչ զանազանին սոքա յայծ զօրութեա-
նական զանազանութիւն, որ լոկ հիմնեալ յիրում,
այլ զանազանութիւն որ հիմնել Ի զանազան եղանակս
իմանալոյ, և տրամաբանօղ բանի և եթ. այսինքն
է, առեալ Ի համեմատութիւն ստեղծուածոց, յորս
իբրև տեսանելիք լինել աննիւթականութիւն սքմատ
իմացման, և զանազանիլ սոցա Ի միմեանց, մակա-
բերեմք, թէ և յայծ լինէր այսպէս, եթէ չլինէր
գերամնքուր ներգործութիւն։ Այս պատասխանի ևս
է հաւանական։

Առարկիցես երկրորդ. Ներգործական իմա-
նալն է էապէս գործողութիւն. իսկ արդ՝ գործողու-
թիւնն ոչ կացուցանէ զբնութիւն որ գործէ, այլ
ճնթադրէ կացուցեալ. ապա։

Ըսյս գլխաւոր ձեռնարկութիւն հակառակ կար-ծեացն առաջիկ ընդդէմ իւր սին Հոռմ. ստորև. խ. ստէպ յիշատակեալ. ժդ. ապ. ը. յառաջին ձեռ-նարկութեանն. և լուծանէ այսպէս. Ոչ ասէին ե ա-ռաջինն, լիւ նմանութիւն ոչ ե գործոցն, այլ հոգւոյ չինչեան: Ոչ զայն ճոխագոյն ևս մեկ-նեալ. ի ստորև. խ. խա. ապ. ը. առ ը. ասէ այսպէս: Նմանութիւն, ե նկատել ոչ են այնպիսի նէրգործո-ւիւնք, որ նշանակէսցեն զէրն ինչ յայ զանազանելոյ նոյ ե-ռելս, ե նոյ անյիշատակս: Ասպի նկատմամբ այսոցիկ նէրգործո-ւիւնց անմտրմ ե գնել յոճ զէտն ներոգո-ւիւնեան, քանզ եւիւ ըստ եղանակի նմանութեան, ե նշանակելոյ ե եւ. ըստ որում այլ ե այլ եղանակու-նշանակի յոճ նմանո-ւիւն, ե նմանութ. (որ ի մէջ բերէ զլոկ զանազանութեի տրամաբանող բանի:) Ոչ ա-նոյն նոյն ինչն նմանութիւն այ է նորա ե-ւիւն անկիրճն: Ոչ ահա այսոքիկ բանք հաստատեն զնզրակացութի մեր, միանգամայն և զլուծումն ձեռնարկութեան յայտ առնեն:

Ուստի ըստ մտաց սրբոյ վարդապետին ձեռք զան. զիրք. Գործողութիւն սահմանաւոր, որ է պա-տահումն, ոչ կացուցանէ զգործօղ բնութիւն, այլ ենթադրէ կացուցեալ, ընդունիմ. Գործողութիւն անսահման ըստ ինքեան ենթակայացեալ, ուրանամ: Ոչ անհանգիստութիւն է, զի յիսկութիւնէ գործողու-թեան որ սահմանաւոր և վերայաւելեալ պատա-հումն ի վր գործողին, է ելանել ի գործողէն, վըյ և ենթադրել զնա կացուցեալ: Այլ ոչ է յիսկութիւնէ անսահման, և ըստ ինքեան ենթակայա-ցեալ գործողութիւն ելանել ի գործողէն, այլ լինել միայն նր վերջին ներգործութի նշանացեալ ընդ նմա առանց ղօրութենական զանազանութիւն: Այսն զի յիսկին անսահման զոչինչ Հնար է իմանալ, եթէ ոչ մեապէ մաքուր ներգործութի յիմացման մերում. արդ՝ ոչ մեայր մաքուր ներգործութիւն բնութիւն

գոր-

գործող՝ եթէ իմացեալ լինէր իբրև զանազանեալ
ի վերջին ներգործութէ իւրմէ, որ ելանէ յինքե-
նէ, և ընդ բանիւ առաջին ներգործութէն նկատ-
մամբ առ այն։ Այսպա՝ գործողութէին իբրև բղխեալ
յսկզբնէ, և ընդ իմացմամբ բացառական մանկանս,
ի. ոչ է յայծ կերպականապէս, զոր բարւոք ի միտ
առ. այլ գերազանցապէս զօրութէ և եթ. իբր
զի նոյն էակութէի յայծ գերազանցապէս առնէ զա-
մենայն զոր ինչ առնէ ի ստեղծուածս գործողու-
թիւնն ելեալ, և սկիզբն յորմէ ելանէ։ Այս վասն
այնորիկ ասացաք, եթէ բնութէին ածային կացու-
ցանի ի ձեռն իմացման, ոչ ընդ բանիւ գործողու-
թեան իբրև բղխելոյ, կամ ընդ իմացմամբ բացա-
ռական մանկանս, ի, այլ ընդ բանիւ վերջին ներ-
գործականութէ ըստ ինքեան ենթակայեցելոյ։

Ընարկիցես երթորդ, և միանգամայն ստիպի-
ցես. Իմանալն ածային պարտի յառաջագոյն են-
թադրել զառարկայ ինչ գոնէ զօրութէ զանազա-
նեալ յիւրմէ, յորմէ տեսակացուացի. իսկ արդ՝ ոչ
այլ ինչ կարէ լինել այն, բայց եթէ նոյն ինքն
բնութէին ածային. զի և ոչ տեսակացուցանի յայլմէ
բաց յիւրմէ, որպէս յայտ լինի յառաջելոցս այլուր.
ապա։ Յուց. մեծ. Եթէ իմանալն ածային ոչ
ենթադրէր զառարկայ ինչ գոնէ զօրութէ զանա-
զանեալ յիւրմէ, ունէր զինքն փոխանակ առարկայի.
և այսպէս ոչ լինէր ներգործութէի ուղղեալ, այլ
կրկնեալ, զի լինէր իմանալ իւր. ապա։

Պատասխանեմ ուր. զիտք. Ընդ զի առարկայն
յամ իմացման խնդրէ միաւորիլ ընդ իմացութէն.
և այնչափ է կատարելագոյն միաւորութէին, որչափ
կատարելագոյն է իմացումն։ Ուստի իմացումն աստ-
ուածային վ իւրոյ անսահմանութէ և ծայրագոյն
ներգործականութէ, յայնչափ աստիճան կատարե-
լութէ, գերազանցութէ, և պարզութէ վերանայ,
մինչև նոյնանալ ընդ իւրում առարկային, առանց

զօրութենական զանազանութեան հիմնելոյ յիրում։ Այսպէս յուշանէ յայտնապէս սիր վարպապետն ի առաքե. խ. ժդ. պ. ի. բոլ. ուր ասէ, թէ ՝ի՞ պէտ ձեզ ոչնչէ կարօղականութիւնն, այլ և մաքուր նիւթեղծութիւնն, պարտ է, զի ի նմա նմայութիւնն ոչ նմայելն ածանին նոյն։ Այսպս և ոչ զօրութիւն զանազան։ Եւ առ յուշումն առաջարկութեան պատասխանէ Աստուած, թէ իմանալն ածային է ներգործութեան գերազանցագոյն քան եղանակաւ ուղղակի միանգամայն և կրկնակի. կրկնակի՝ ի՞ զի է իմանալ իւր, և ուղղակի՝ ի՞ զի չունի զայլ քան առարկայ՝ ձգիլ ի նա ըստ էութեան զառաջինն, և համաբնապէս։ Իսկ Թովմայեանն Յովհաննէս համառաւտ լինել պարզապէս ուղղակի, ի՞ զի է առաջինն և մի միայն. այլ ներգործութեին կրկնակի Թադրէ յառաջագոյն զուղղականն։ Օներկաքանչիւրն ևս մտրճ է ասել։

Ստիպիցես նախ. Ոչինչ լինի իմացեալ ներգործութիւն, եթէ ոչ յառաջագոյն ենթադրեսցի իմանալի։ Այսպս իմացումն ածային յառաջագոյն ենթադրէ յածն զբնութեի իմանալի։

Պատասխանեմ զան. զառաջ. Ոչինչ լինի իմացեալ ներգործութիւն, եթէ ոչ յառաջագոյն ենթադրեսցի իմանալի, ՝ի ստեղծուածս խառնելիս կարողականութիւն, ընդունիմ. յածն, ՝ի ներգործութեին գերամեքուր, դարձեալ զանազանիմ. եթէ ոչ յառաջագոյն ենթադրեսցի իմանալի ՝ի ստեղծուածս յառաջնութիւն հիմնելով յեղանակ իմացման մերոյ համեմատութիւն առ ստեղծուածս, ընդունիմ, յառաջնութեամն հիմնելով յիրն իմացեալ, ուրանամ։ Այլ զի յիակութեէ գերամեքուր ներգործութեէ է, ոչ միայն լինել ներգործութիւն իմացօղ, այլ և ներգործութիւն իմացեալ։ Ուստի ուսուցանեն Թովմայեանք առ Հասարակ, եթէ ածն յերանական տեսութեն լուսանայ ոչ միայն զբան տպաւորեալ տե-

սա-

ռակի, այլ և եղուզեալ տեսակի, կամ ներգործութիւնք իմացելոյ:

Ստիպիցես երկրորդ. Կամեցումն ածային ոչ է առաջին կամելի. Պատ և ոչ իմացումն ածային առաջին իմանալի. որոյ վը և ենթադրէ յառաջագոյն զառարկայն իմանալի:

Պատասխանեմ ուր. զհետև. Նա անհանգիստութեին է, զի կամեցումն ածային, քանզի է յօժարութեի հետևակ բնութեե, ոչ կացուցանէ զնա, այլ ենթադրէ, և ի նր բարին ձգտի սկզբնաբար: Այլ ներգործական իմացումն՝ քանզի է առաջին, և ամենակատար ներգործութեի ածային բնութեան, կացուցանէ զնա, և ոչ ենթադրէ:

Առարկիցես չորրորդ. Բնութեին ածային պարտի կացուցանիլ ըստ նմին համեմատութեե, որպէս և այլ իմացական բնութիք. Ասէ արդ՝ այլ իմացական բնութիք, այս է, հրեշտակին, և մարդ ոչ կացուցանին ի ձեռն ներգործական իմացման, այլ ի ձեռն կարողութեե իմանալոյ: Ուստի ասի հասարակօրէն, թէ բառք ի սահմանս ոչ ցուցանեն զներգործութեի, այլ զկարողութեի. ասպս:

Պատասխանեմ ուր. զմեծ. Ընհանգիստութեի է, զի բնութիւնն ածային քանզի է գերամաքուր ներգործութեի ոչ կարէ կացուցանիլ այնուհիկ, որ ի մէջ բերէ զտոհմեր իւոյ կարողականութեե. զրօբինակ է կարողութեին իմանալոյ: Այլ զի իմանալով զո զկարողական ինչ, ոչ իմանաս զածային ինչ. որովհետև ամենայն օր ինչ միանգամ է յածն, է ներգործութեի գերամաքուր, և գերակատար: Այսպ արարած բնութիք չեն այսպէս վը անկատարութեե և կարողականութեե:

Ստիպիցես. Կամ բնութեին ածային կացուցանէ ի ձեռն կարողութեե իմանալոյ, կամ ոչ պահի յածն ըմբռնումն բնութեե: Երկրորդն ոչ է ընդունելի. ապա առաջինն: Հետ. մեծ. Բնութեին առ հա-

սարակ սահմանի. Սինէքն շարժման ի փոփոխման այնորինկ յորում է. Ապա ոչ պահի յաճ իմացումն բնութեան, եթէ ոչ կացուցի՛ ի ձեռն կարողութեանն իմանալոյ:

Պատասխանեմ ուր. զմեծ. և զցուց. զան. զառաջ. Ինութիւնն առ հասարակ սահմանի սկիզբն շարժման, ևն. ըստ որում ինէքնդ ցուցանէ միայն և միշտ զկարողութիւն առ ներգործութիւն, ուրանամ. ըստ որում ցուցանէ նաև զաղբիւր և զարմատ, յորմէ բղխեն գործողական կարողութիւնք, ընդունիմ. և ուր. զհետև: Այսու զի զինէքնդ՝ ի սահմանի բնութեան մարթ է իմանալ կրկնակի. Նախ՝ փոխանակ այնր, որ է աղբիւր, և արմատ յատկութեանց, և գործողական կարողութեանց. զի ըստ այսմ ուղիղ ասի՝ սկիզբն շարժման: Երկրորդ, փոխանակ կարողութեան առ ներգործութիւն: Ըստ երկաքանչիւր իմացուածոց ևս պահի՛ ի ստեղծուածս. վասն զի ոչ հակառակի նոյ կարողականութեանն կատարելի՛ ի ձեռն իւրոյ ներգործութեան: Նայց յաճ ոչ պահի ըստ երկրորդ իմացուածոյ. վասն զի է ներգործութիւն գերամեքուր, յորում հակասական է իմանալ զինչ անկատար, և ի կարողութեան առ իւր ներգործութիւն: Նա սակայն պահի ուղիղ ըստ առաջինն իմացուածոյ. վասն զի լինելն արմատ, և զօրութենական պատճառ ածային յատկութեանց զոչինչ անկատարութիւն պարունակէ, այլ յատէտ զկատարելութիւն: Ըստի ունիս մակաբերել, թէ իմացումն բնութեան ըստ որում այսպիսի, պատշաճի նմ, և ստեղծուածոց համեմատականութիւն և եթ:

Ընդարձեալս հինգերորդ, և միանգամայն ստիպեալս. Ընդ է կացուցիչ ածային բնութեան, որում հաղորդի սրբարար շնորհքն. քանզի սրբարար շնորհքն ըստ առանձնոյ ածարանից առ հասարակ, է հաղորդութիւն ածային բնութեան. Նակ արդ՝ սրբարար շնորհքն ոչ հաղորդի ածային իմանալոյն, այլ միայն ածային իմացականութեան, ապա: Յուց. փոք. Նախ՝

զի

զի ածային իմանալոյն հաղորդի երանական տե-
սութիւնն, որով երանեալք կացուցանին ներգործու-
թեամբ տեսանող, և խմացօղ այլ։ Երկրորդ, զի
սրբարար շնորհքն ոչ տայ ներգործութիւն առնել,
այլ միայն զկարելին առնել. ապա։

Պատասխանեմ զան. զիդք. Սրբարար շնորհքն
ոչ հաղորդի ածային իմանալոյն, ըստ որում է գերա-
զանցագոյ գործողութեի. ընդունիմ. զի ըստ այսմ հա-
ղորդի նմա երանական տեսութեին։ Ըստ որում է
վերջին ներգործականութեի ըստ ինքեան ենթակայա-
ցեալ աշխոյականագոյն աստիճանի չածի, և վասն
այնորիկ արմատ ածային ստորագելոյ, ուրանամ։
Ա.րդ՝ իմանալն ածային ըստ իւրոյ գերազանցութեե,
և անսահմանութեե զաղգի աղգի պաշտօնս ունի ըստ
որոց մարթի է ստեղծուածոց բազմօրինակ հաղորդել
նմ՝ անհատատարած. զի ըստ որում գերազանցագ ընդ-
ստեղի իմացային զօրուե՝ հաղորդի նմա լոյն վստաց.
ըստ որում գերազանցագ ընդ ստեղի գործողուե, հա-
ղորդի նմ՝ տեսութին երանական. և ըստ որում է արմատ
ածային ստորագելոյ, հաղորդի նմ՝ շնորհքն սրբա-
րար։ Վասնզի սրբարար շնորհքն է արմատ հեղել
առաքինութեանց, որք են սկզբունք գործողութեանց.
և յայս միտ ասի, թէ տայ զկարելին գործել։

Ընդարձակես վերկրորդ, և առակս. Ոսկ արդ՝
ածային իմանալն ոչ է արմատ ամ կատարելութեանց
ածայնոց. քանզի զինչ հետևութեի ի՞ւէ այս, ասէ
վերջան Յոհաննէս. ածն ներգործութե իմանայ գերակա-
տար իմացմամբ. ապա է բարի, արդար, յաւիտենա-
կան, անչափ, ևն. Ըպա իմանալն ածային չէ կա-
տարելի ածային բնութեե։

Պատասխանեմ զան. զառաջինդ. Ածային ի-
մանալն ոչ է արմատ ամ կատարելութեանց ածայնոց.
անմիջապէս, ընդունիմ. միջնորդաբար, կամ ան-
միջապէս, ուրանամ զառաջինդ, և զհետևողութիդ։
Ա.րդ՝ թէպետ ածային իմանալն է արմատ ամ կա-

տա-

տարելութեց ածայնոց, բայց այլ և այլ եղանակաւ: Օ՛ի այնոցիկ, որք վերաբերին առ գործողութիս յառաջ եկեալս յիմանալոյ, զորօրինակ են իմաստութի՛, գիտութի՛, կամք, սէր, արդարութիւն, ամենակարողութի՛, և՛. է արմատ ըստ ինքեան անմիջապէս: Իսկ այլոց որք վերաբերին առ գոլ, և են իբրև թէ եղանակ ածային էութե՛, և գերագանցական յատկութի՛ք նորա, զորօրինակ են յաւիտենականութի՛, անսահմանութի՛, ճշմարտութիւն, բարութի՛, և՛, է արմատ ո՛չ ըստ ինքեան անմիջապէս, և ընդ իսկութի՛ք խմացման, այլ միջնորդութի՛ք իսկութեան անստեղծ էակի, և մարդոյ ներգործութե՛ի՛ նմ տարրացելոյ: Որպէս ի՛ մարդն տեսակարար տարբերութի՛ն նի՛. այսինքն բանականութի՛ն է ըստ ինքեան անմիջապէս արմատ յատկութե՛ց, որք պատշաճին նմա ըստ որում է մարդ. զորօրինակ լինել ծիծաղական, զարմացական և՛ն: Իսկ յատկութե՛ն՝ն, որք են սեռական, և առաւել հասարակ. զորօրինակ լինել ննջական, ըստ ինքեան ենթակայացեալ. կամ որք են գերագանցական, զորօրինակ լինել մի՛, ճշմարիտ. և՛ն, է արմատ միջնորդութի՛ք սեռական աստիճանի կենդանւոյ կամ դոյացութե՛. և կամ բանիւ գերագանցական էակի՛ ի՛ նա փակելոյ: Ուստի որպէս է այս հետևութե՛ի՛, Անարդն է բանական. ապա է ննջական, ըստ ինքեան ենթակայացեալ, մի՛, և ճշմարիտ, այսպէս է և այս. Ոչ է ներգործութի՛ք խմացօղ. ապա է յաւիտենական, անսահման, անփոփոխելի, անչափ, և՛ն. Ոչ զի յերկոսին ևս, առաջարկութե՛ն է պատճառ հետևուե՛ ո՛չ անմիջապէս բանի՛ իւրով, այլ միջնորդաբար, և բանի՛ այլոյ՛ ի՛ նմա փակելոյ:

Ընդարձակեաս ի՛ վախճանի. Խմացումն անձնաւորական ծննդական բանի՛ ո՛չ կացուցանէ զանձն հօր, ապա և խմացումն բնական ո՛չ կացուցանէ զբնութի՛ւնն ածային:

Պա-

Պատասխանեմ ուր. զմակաբերութիւդ. Այլ զի անհանգիստութեի է. Նախ՝ զի անձն ցուցանէ զանհաղորդականութեի, զոր տայ առնչութեին, և ոչ խնացումն ըստ որում խնացումն։ Երկրորդ՝ զի որովհետև անձն ի մէջ բերէ զթանձրացեալ ի բնութեի և յենթակայութեէ, խնացեալ լինել լծանալ, և կացուցանիլ ենթակայութեի։ Նակ բնութեին է, որ ըմբռնի յիրում իրրև յատաջագոյն ինչ, և կատարելագոյն. վայ և պարտ է նմ կացուցանիլ այնու, որ ըմբռնի ի նմանայատաջագոյն, և կատարելագոյն։ Օգտաւորիկ տես ի ճառն. որ ի վի Երկրորդ։ Նա և զբազում ինչ ի վերայ ածայինն խնացութեան. ի խնդ. ժէ։

ՊՐԲՒԿ. Ո.

Ի վերայ ածայինն ստորոգելեացն առ հասարակ։

Ոչինչ, ե չանկապուկ նոքն ստորոգելին։

Ասելի է նախ. Ստորոգելին յատկապէս առեալ առ հասարակ սահմանի. կատարելութեի բացարձակ պարզագոյ պարզ, որ հարկիւ, և կերպականապէս գոյ յայծ. և էութեին կացուցելոյ ըստ եղանակի ըմբռնման մերոյ զհետ գոյ։

Ասացաք. Ստորոգելին յատկապէս առեալ. քանզի որովհետև ըստ ստուգաբանութեի անուանին ասի ստորոգելի յայնմանէ, զի ստորոգի զայ, երբեմն առեալ լինի անյատկապէս փոխանակ ամի, որ ինչ ստորոգի զայ, եթէ հապէս. եթէ պատահաբար, եթէ բացարձակապէս, և եթէ առնչապէս։

Ակնի. Ասի Պորփիւրեան էսագոյիկ, ոչ ի արտաքսելոյ զկատարելութեինն, որք ունին զգեղբանցական հայեցուածն առ արարածս. զորօրինակ, նա-

նախանամութիւնն, ողորմութիւն, արդարութիւն։ այլ առ արտաքսելոց զածային առնչութիւնան, որք վասն ոչ գոլոյն հասարակ երից անձանցն, չունին զբան ստորոգելոյ. քանզի ստորոգելին է յատկութիւն բնութեն զհետ եկեալ նորա յոյժ և իցէ։

Ասի՝ Կատարելո՞ւ-նի-ն պարզ. զի արտաքսեցի կատարելութիւն պարզ, կամ ըստ իմիք։ Կատարելութիւնն պարզապէս պարզ է, որ յիմացման իւրում ոչինչ անկատարութի՛ մէջ բե՛, կամ որպէս այլք ասեն, որ բարեգոյն է նոա քան առանց նորա։ այս է, զոր ունելն բարեգոյն է զինչ և իցէ էակի, ըստ որում է էակ, քան զոչ ունելն. որպէս բարութի՛, արդարութի՛, են։ Կատարելութիւն պարզ, կամ ըստ իմիք է, որ ՛ի մէջ բերէ զանկատարութի՛ ինչ, կամ որ ոչ է բարեգոյն նուաւ, քան առանց նորա։ Կ՚ասի՝ ոչ բանիւ ենթակային, այլ բանիւ իւրով կերպականապէս. որպէս լինելն տարածեալ, ձևացեալ, աճողական։ Ասի՝ Որ հոգւո՞ գոյ յաձ. զի արտաքսեցին ազատ ներգործութիւնքն, զորօրինակ ստեղծումն։ Ասի՝ Որ կ՚երկանապէս գոյ յաձ. զի վերստին արտաքսեցին կատարելութիւնքն ըստ իմիք, որք գոն յաձ գերազանցապէս միայն. այս է ՛ի բաց հրաժարեցուցեալ զանկատարութիւս։ Նոքա ստորոգելիքն, որք են կատարելութիւնք պարզապէս պարզ, գոն յաձ կերպականապէս. այնպէս, զի թէ էութեին այ առցի փիլիգապէս, և ըստ որում է ՛ի կողմանէ իրին, պարունակէ զամ ստորոգելիս կերպականապէս բացայայտ։ Նոքա եթէ առցի մեթափիլիգապէս փոխանակ էական կացուցչին, պարունակէ դարձեալ կերպականապէս, բայց լռելեայն միայն, և շփոթ. ոչ յայտ լեցի ՛ի պրակէն, որ գինի։ Ասի, Կ՚ուլե՞ն կայո՞ցնել զնոսա եկեալ, առ ՛ի արտաքսել զէական ստորոգեալն, և ՛ի նշանակել, թէ ստորոգելիքն ոչ կացուցանեն զբնութին այ;

այլ

այլ ենթադրեն կացուցեալ. և զհետ գան նոր ըստ եղանակի յատկութեան։

Այլ արդ՝ թէպէտ ասեմք ստորոգելիք բազմաւորակի. բայց դիտել պարտ է, զի չեն բազում իրապէս վէճ ծայրագոյն պարզութեն այլ, և միութեամբ այլ են բազում զօրութիւք միայն։ ըստ որում էակութիւն այլ ամենևին պարզ հանգիտանայ բազում ստեղծեալ կատարելութեանց իրապէս զանազանելոց։ Ապա՝

Ընդ է երկրորդ։ Ստորոգելիքն, որ զօրութիւք բազում, բազմօրինակ բաժանին։ Ոմանք վերաբերին առ գոն այլ. զորօրինակ պարզութիւն, անչափութիւն, ինքնագոյութիւն, և։ Եւ սոքա ասին ևս բացարձակք. զորոց ճառէ սքեմ Հոմմ. ի ներդիրն, որք անմիջապէս զինի սորա։ Ոմանք վերաբերին առ գործողութիւնն այլ. ոյզ գիտութիւն, նախանամութիւն. ամենակարողութիւն. և սոքա ասին վերահայեցական. զորոց ճառէ. խ. ժդ. և ի հետագայս։ Ի սոցանէ ոմանք են բացասական, որք ի քաց բառնան յայլ զանկատարութիւս, որպէս լինել անսահման, անչափ, անփոփոխ. և այսոքիկ եղանակաւ, որպէս արդ նշանակեցաք, լաւ ևս, և դիւրագոյն ճանաչի ածՈ. քանզի դիւրագոյն է ասել զինչ ոչ է ածՈ, քան զինչ է։ Եւ ի սոսա են ոմանք, որ թէպէտ և դրական եղերօք բացատրին, բայց փակեն յինքեանս զբացասութիւն. զորօրինակ, պարզութիւն, որ փակէ յինքն զբացասութիւնն բաղադրութիւն։ Եւ ոմանք ստորասական. որ զայլ ստորասաբար ստորոգին, զորօրինակ արդարութիւն, բարութիւն, և։

ՊՐԱԿ Գ.

Օ՛ւսումն ստորոգելեացն ածական՛ի միմեանց, և յԵուԹէն այ զանազանին։

ՅՕԴՎԱԾՈ. Ը.

Օ՛ր՞նէ, և հանդիպակի նմա զանազանուԹիւն։

Վասելի է. Օ՛ր Թէպէտ բառքս այսոքիկ, զանազանուԹի, բազմուԹի, բաժանումն, պէսպիսուի, տարբերուի, երբեմն խառն՛ի դործ ածին փոխանակ նոյնոյ, բայց ո՛չ ընդ նովին կերպակա-նուԹիւն նշանակեն։ Օ՛անազանուԹիւն դիմաբաժանի նոյնուԹենէ, բազմուԹիւն՝ միուԹենէ. բաժանումն՝ միաւորուԹենէ. պէսպիսուԹիւն՛ի մէջ բերէ զանազանուԹի առանց Համաձայնելոյ յիմիք փաղանուն սեռի. տարբերուԹիւն զսրին հակառակն՛ի մէջ բերէ զանազանուԹի Հանդերձ ՀամաձայնուԹիւ յիմիք փաղանուն սեռի։ Ըստ այսմ ստորոգուԹիք յինքեանս են պէսպէս. իսկ այնք, որք են ընդ նովին ստորոգուԹիւ, զանազանին։

Ընդ՝ զանազանուԹիւն ո՛չ այլ ինչ է, բայց եԹէ պակասուԹի նոյնուԹենէ. զի նոքին ասին զանազան, որք ո՛չ են նոյն։ Բաժանի նախ՛ի զանազանուԹի իրական, և՛ի զանազանուԹի բանի. Իրական զանազանուԹիւն է պակասուԹի նոյնուԹենէ, որ է յիւրին կողմանէ անկախ՛ի մտաց։ Այս է կրկին. Մի՝ իրական պարզապէս, որ ասի մեծ. և երկրորդ, իրական եղանակական, որ ասի փոքր։ Մեծ իրական է՛ի մէջ կատարեալ էակաց, որք անջատին՛ի միմեանց, կամ որոց Հնար է անջատիլ. զրօրինակ՛ի մէջ Պետրոսի և Պօղոսի. ՛ի մէջ Հոգւոյ, և մարմնոյ։ Փոքր իրականն է՛ի մէջ իւրի, և եզանակի նո՛ր. զրօրինակ՛ի մէջ Պետրոսի, և Նատե-

լոյ նմ , կամ ՚ի մէջ երկուց եղանակաց . որպէս ՚ի մէջ նստելոյ և կալոյ : Ասին եղանակք . վա՛զ են նոճազ հակումինք , որք թէպէտ առանց ենթակայի լինել ոչ կարեն , սակայն ենթակայն կարէ լինել առանց նոցա . ուստի ասին զանազանիլ ՚ի նմանէ եզանակապէս : Իսկ թէ են այսպիսի հակումինք՝ զգայութիւն իսկ յայտ է . և ցուցանի ՚ի համարնաքանութենէ :

Զանազանութիւն բանի է պակասութիւն նոյնութեան ըստ ըմբռնման միայն ՚ի մէջ նոցա , որք չիբրին կողմանէ չեն զանազան , այլ մի և նոյն : Այս այս և է կրկին . մի՝ տրամաբանող բանի , և երկրորդ՝ տրամաբանեալ բանի : Առաջինն է , որ լինի առանց հիման չիրում , զորօրինակ եթէ զանազանեսցուք ՚ի մէջ Թուլլիոսի , և Ցիչերոնի . կամ եթէ ըմբռնեսցուք նոյնոյ ստորոգիլ զինքենէ . զորօրինակ , յասելն , Ցիչերոն է Ցիչերոն . քանզի յայնժամ զնոյն ենթադրեալն բացատրեալ լը եղանակի ենթակայի և ստորոգելոյ , ըմբռնեմք իբր երկպատկեալ . ուստի ծագէ ՚ի միտս զանազանութիւն ինչ : Երկրորդն է , որ լինի հանդերձ հիմամբ չիրում . որպէս եթէ զանազանեսցուք ՚ի մէջ արդարութենէ և ողորմութենէ՝ յաճ . զի թէպէտ և արդարութիւնն և ողորմութիւն նոյնանան իրապէս ՚ի նոյն յաճայնէ էութեան , և են իրօք մի և նոյն ընդ նմա . բայց քանզի այս պարզ էութի հանդիմանայ արդարութենէ և ողորմութենէ՝ որք զանազան են իրապէս ՚ի ստեղծուածս , և ըստ այսմ է զօրութիւն բազմապատիկ , ընծայէ մտաց մերոց զհիմն զանազանելոյ զնո յաճ : Արդ՝ այսր զանազանութենան կրկին հիմն հնար է նշանակել : Առաջինն է նախաստացեալ գերազանցութի իրին , որ նոյնացուցանէ ընդ ինքեան զբազում կատարելութիւս իրապէս զանազանեալս ՚ի ստորինս : Երկրորդն է անկատարութի մտաց մերոց , որ զայս ամ կատա-

բելութիւն միանգամայն ՚ի միասին ոչ զօրելով ըմբռնել, զայնս զանազան ներգործութիւր, որպէս է թէ զանազան իցեն, ըմբռնէ. յորմէ ծագէ զանազանութիւն ՚ի միտս: Այս զանազանութիւն մտածեալ ըստ որում ՚ի միտս, ասի զանազանութիւն տրամաբանեալ բանի Հանգերձ հիմամբ յիրում. մտածեալ ըստ որում յիրում, ասի զօրութենական. վ՚ը զի առնէ, զոր ինչ միանգամ առնէր զանազանութիւն իրական. և Հանգիստանայ նմա ՚ի ճշմարտութիւն հակառականայ ինքն իւր:

Ակռաւոս իւրովքն Հանգերձ զայս զանազանութիւն տրամաբանեալ բանի, կամ զզօրութենականն ՚ի բաց մերժէ, և զայլ կացուցանէ. զոր կոչէ ներգործական կերպական ՚ի բնութէ իրին: Ներգործական, զի է ՚ի կողմանէ իրին յառաջ քան զամ իմացումն մտաց. կերպական, զի ոչ է յիրս, որք ունին զհակառական դոյութիւն, այլ ՚ի մէջ կերպականութեց, կամ եղանակաց նորին իրի. ՚ի քննէ իւրեանէ իւրէն, զի ծագէ անտի. զի միւն ոչ է ՚ի կերպական իմացմանէ միւսոյն: Այս զանազանութիւն ասէ ոչ լինել իրական. վ՚ը զի ոչ է ՚ի մէջ իրաց, թէպէտ և խոստովան լինի յայս միտ լինել իրական, ըստ որում է ՚ի կողմանէ իրին անկախ ՚ի մտաց: Եւ ոչ է բանի, վ՚ը զի որպէս ասացաւ, յառաջէ քան զամ ներգործութիւն մտաց: Այ ըստ նորա է միջական ինչ ՚ի մէջ իրական. և բանի զանազանութիւն:

Արդ՝ խնդիր է, թէ որո՞վ զանազանութեամբ ածային առարկելիք ՚ի միմեանց և յէութէն այ զանազանին: Այն խնդիր է ՚ի վ՚ը ածային առնչութեանց նկատմամբ էութէ, որ թէպէտ և պատկանի առ ճառն երրորդութէ, բայց միանգամայն և աստ լուծանի:

ՅՕԳՈՒՄԸՆՕՐ։

Յաջորդին պէտք կոչել հերետիկոսաց, և ուղղափառաց ի վեր առնել երեսել նշդրոյս։

Ասի՝ Ընդհատ, և Անընդհատ ի չորրորդ դարուն ոչինչ զանազանութիւն եղին ի մէջ ստորոգելեացն ի միմեանց և յէութենէն այ. քանզի պանծայաբար յանձինս, այնպէս կատարեալ ծանօթութիւն ունել զայ, որպէս նա ինքն ունի զիւրմէ. Հայթայթեցին առ ի նպաստ այսմ մոլորութեանն, թէ ոչ իրիք իրօք զանազանին ստորոգելիքն ի միմեանց և յէութենէն այ. զոր հաստատէին անծին լինել։ Այլ քանզի զայծ անծին ճանաչել խոստովան լինէին, սմին իրի պանծային ևս զայծ լինել ճանաչել։ Եւ դարձեալ, քանզի որդին է ծնեալ, և որպէս առացաք յանծնութենէ գնէին գէութենէն այ, ուրանային զորդին լինել ածծ։

Յեւնոմեանց ոչինչ ընհատ են անոճանականք, որք ոչ սպէ ինչ, բայց եթէ զանազանութեի տրամաբանօղ բանի, և զանոճանց պէսպիսութեի գնեն ի մէջ բացարձակ ստորոգելեացն ի միմեանց, և յէութենէն այ. յոյր սակս ըստ պատմելոյն Աւետաստեայ ի Պալուցիոյ. Հատ. դ. միաչէլ. որոշեցան ի փարիզեան համալսարանէ և յայլոց։

Երկրորդ, զորին հակառակն՝ Աոճալեթերոս անուն ոմն, զոր առ հասարակ յիշատակեն ածալբանք յՕգոստինոսէ՝ Նիփոյ. ժբ. համաբ. վիճ. ժբ. պ. դ. եղ զանազանութեի բացարձակապէս, և պարզապէս իրական՝ ստորոգելեացն ի միմեանց, և յէութենէն այ. բայց ոչ ուրացաւ զպարզութեին յածծ. քանզի առ իսկական բաղադրութեին համարէր, թէ պահանջին մասունք բոլորի ըստ եղանակի ներգործութեան, և կարողութեն։ Օգոյն զայս ասաց և

Սկսաւոս ՚ի պահել զպարզութիւն այ ընդ կերպա-
կան զանազանութիւն իւրում՝:

Հպագոյն գտանի և այսմ՝ մոլորութիւ յունաց
ոմանց ՚ի դարն. ԺԲ. որք կոչեցան Փալամեանք. ՚ի
գլխաւոր պաշտպանէ նորա Գրիգորէ Փալամայ. որ
յառաջագոյն էր միայնակեաց, և յետ այնորիկ Ա-
պիսկոպոս Թեսաղոնիկեայ: Զանգն սոքա զանա-
զանէին ևս ըստ իրին ՚ի մէջ ՅԾայրին էութե, և
նորուն գործողութեց: Ասէ անուամբ գործողութեց
իմանային ոչ միայն զայնս, զորս կոչեմք անցանօղս,
որպէս են ստեղծուածն, կատարութի, ևն, այլ
և զնոյն իսկ զատորոգելին. զորօրինակ զբարութիւն,
զիմաստութիւնն, զարդարութիւնն, զորս այնդէին
իրօք զանազանել յԱծային էութէ, և փոքր լինել.
Թէպէտ և միանչենաւորակից. զորօրինակ ասէին
Ճառագայթն արեգական ոչ է գոյացութի արեգա-
կան, Թէպէտ և ժամանակակից է նորա:

՚Ի սոցա սակի են և Սոկինեանք, որք ՚ի ցու-
ցանել, Թէ Հոգին սբ, որ ՚ի սբ գիրս կոչի զօ-
րութի այ, ոչ է Ած, ասեն, Թէ զօրութիւն այ,
և ստորոգելիքն զանազանին ՚ի նմանէ:

Աբբայն Յովակիմ ՚ի վերջն երկոտասաներորդ
դարուն երևի ընկալեալ ըստ նմին օրինակի զզանա-
զանութիւնն իրական ՚ի մէջ Ածային էութէ և ան-
ձանց. քանզի յանդիմանէր իբրև հերետիկոս զՊետ-
րոս Լոմբարդեանն, վ ասելոյ նմ, Թէ Ծայրագոյն
ինչ իր է Հայր. որդի, և Հոգին սբ, որ ոչ ծնօղ
է, ոչ ծնեալ, և ոչ բղխեալ: Ապա ըստ այնմ
Աբբայի՝ Հայր, և որդի, և Հոգին սբ ոչ են այն
Ծայրագոյն իր, այս է, Ածային էութէն: Այլ
զի մի զարտուղեսցի ՚ի հաւատոյն Կիկիոյ ըն-
դունէր, Թէ Հայր, և որդի, և սբ Հոգին են մի
էութէ. բայց զմիութէն իմանայր ոչ իրական, և
պարզ, այլ բարոյական, և հաւաքական. զորօրի-
նակ բազում մարդիկ են մի ժողովուրդ:

Եւ

Ընդ այս ամ յայտ է 'ի ջորրորդ ժողովոյն Լատերանու, առ Ինոկենտիոսիւ երրորդիւ. յամին 1215. յորում գիրք սորին Աբբայի դատապարտեցաւ։ Բայց զսա չէ պարտ համարել հերետիկոս վը զի ամ զգրեանս իւր յանձն արար դատաստանի եկեղեցւոյ. 'ի պայմանեալ վկայութեան անդ գրոց իւրոց։

Երրորդ. Ա'իլպերդոս Փորբետացի Եպիսկոպոս Ռէքդաւեայ, 'ի մեռասանեերդ դարուն ասէր. Էճողլին ոչ է Ա, այլ ինչպէս պրոֆ Ա է. զորօրինակ մարդկութիւնն ոչ է մարդ, այլ կերպ, որով մարդն է։ Եւ քանզի 'ի ժողովն Փարեզու, յամին. 1147. որ ընդդէմ նորա գումարեցաւ, զառաջինն ուրացաւ, թէ ոչ բնաւ երբէք ասացեալ է իւր, թէ Ադութիւնն ոչ է Ա. բայց յետոյ աղքի աղքի հարցմամբ ստիպեալ, յաւել 'ի վը. Հոմոյոյսիոս նոսոփոլանին. հայր այլով է հայր. այլով Ա, բայց ոչ է այս, ե այս. և ևս բազում ինչ մ'նին, և նուրբ խօսեցաւ. յոր սակս Նուգինէոս երրորդ Ծայրագոյն քահանայապետն, որ ընդ այն ժամանակս 'ի Վաղղիա լինէր, զնորա դատն առ զգուշագոյն ևս քննելոյ եմոդ 'ի ժողովն Ռեմենսու. որ 'ի հետագայ ամին. 1148. գումարեցաւ յեպիսկոպոսաց տասն գաւառաց. յորում էին և բազում Ադաբանք, և Աբբայք. յորոց միջի գերազանց և երևելին էր սբն Բեռնարդոս։ Ընդ՝ այսն ժողով ևս իբրև Ա'իլպերդոս վերստին ուրացաւ, թէ Ադութիւնն իցէ Ա, հարք ժողովոյն հաստատեցին ընդդէմ նորա զՀանգանակն, որով սահմանեցին զԱդութիւնն և զամ առնչութիւնս և զյատկութիւնս, որք են յաւիտենից, լինել Ա։

Թէպէտ ճշմարիտ է, զի սբ քահանայապետն ոչ կամեցաւ այնմ հանգանակի լինել կանոն հաւատոյ, ոչ վը պարտադնակելոյն ինչ հակառակ ճշմարտութիւնն, այլ զի եպիսկոպոսունքն զայն հաստատե-

ցին առանց Կարդինարաց. յաղագս որոյ շիտի մեծ ժողովն Կարդինարաց:

Այլ նոյն իսկ քահանայապետն յետ այնորիկ հանդերձ բովանդակ ժողովովն. այս է, Կարդինարաց, և Եպիսկոպոսաց սահմանեցաց. Սի՛ բնաբանն յածախառնուլեն բաժանեսցե՛ ի մէջ բնուլեն, և անձին. և մի՛ ասասցի ածոյին էուլեամբ՝ ի գործիսն, կամ՝ ի բացատակոն հոլովեն հոգի, այլ և յուղիսն: Այս է, զի մի միայն ասասցի, ած է ածուլե՛, այլ և ած է նոյն իսկ ածուլեին, որ այնինքն է վարդապետուլե՛ հանգանակին. որ բով և նշանաւորն մոլորուլե՛ Ա՛իլպերդոսի դատապարտի.

Սի՛ ինչ խոռվեսցիս, եթէ սե՛ք քահանայապետն արգելու, զի մի բանն յածաբանուլե՛ զանազանեսցե՛ ի մէջ բնուլե՛ և անձին. իբրև թէ հնարք և զանազանուլե՛ն տրամաբանեալ բանի: Արանզի այսոքիկ սահմանեցան ըստ մտացն Ա՛իլպերդեայ. զի սա դներ կրկին բանս. մի՝ մանէմանէիգական, որ զանազանէ զայնս, որք չեն միւրում զանազան. և երկրորդ՝ ածաբանական, որ զանազանէ զայնս, որք միւրում են զանազան. և ասէր, թէ առնչուլե՛նքն զանազանին յածաբանէ, ոչ միայն մանէմանէիգական բանիւ, այլև ածաբանականաւ. վ՛ զի պնդէր, թէ նորին արտաքուստ կից են ը՛ այ, կամ գէթ իրապէս զանազանին՝ ի նմանէ: Իսկ ժողովն զԱ՛իլպերդոսի մոլորուլե՛ն նորին իսկ եզերօք մերժեալ, ասէ, թէ յածաբանուլե՛ն, բանն, այս է ածաբանականն մի՛ զանազանեսցե՛ ի մէջ էուլե՛ն, և անձին. այսինքն է թէ բանն մի՛ ընդունիցի էուլեան և անձին լինել իրօք զանազանեալ, որպէս մոլորուլե՛ն կարծէր Ա՛իլպերդոս:

Յայս վայր կարգեալ բանքս գԱ՛իլպերդոսէ են՝ ի սէյն Լեռնաբդոսէ, որ գլխաւոր ձշնամին էր նոցա. ձաւ. ձ. յերգ. և գիրք. Ե. յաղագս խոկ-

աու

առ Լուդ. գլուխ. է. 'ի կաւիքեսոյ միայնակեցէն պայծառաւանից 'ի Թուղմն, որ առ Կարդինարն Ա-պանեան, որ և ինքն իսկ առաջնակայ էր ժողովոյն Ռոմենսու։ Եւ յՕթթոնէ Ֆրիսինգենսէնսեան ժամանակակէ. գիրք. ա. 'ի վէ գործոց Ֆրեսեերիկոսի առաջնոյ. գլ. ծ. և յորս գինի։ Սա աւելի քան զարժանն ջատագով եկաց Ա'իլպերդոսի. և զբէն Հեռնարդոս առ փոքր ի ոչինչ արդիածանէ, բայց 'ի վախճան կենացն ժամանեալ՝ յետս նահանջեաց. և ե-կեղեցական խրատու ներքոյ անկաւ. ըստ վկայելոյն Մատեվիգոսի. գիրք. բ. գլ. ժա. առ Լապպէոսի. յամին. 1147. Ա'իլպերդոս ևս ընկալաւ զսահման ժողովոյն Ռոմենսու, և զմոլորութի իւր յետս նա-հանջեաց ըստ վկայելոյ նորին Օթթոնի. վէ որոյ չէ համարելի հերետիկոս։

Յաստացելոցս յայտ է, թէ Ա'իլպերդոս զա-նազանէր 'ի մէջ վերացելոյ, և թանձրացելոյ. որ-պէս եթէ ածութին ոչ էիցէ ածն, այլ կերպ, ո-րով ածն է։ Այլ անստոյգ է, թէ արդեօք ընդ նմին զանազանէր և զվերացեալն 'ի միմեանց, որ-պէս եթէ չէիցէ հնար ասել. արդարութին է աստ-ուածութի, իմաստութին է բարութի։ Նմանա-պէս անստոյգ է, թէ արդեօք զորօրինակ զանա-զանեաց զառնչութինն յէութէ, ըստ նմին օրինակի և զբացարձակ սաորոգելիսն 'ի նոյն էութէ, և 'ի միմեանց իսկ լցէ զանազանեալ։ Այլ խնդիր է յածաբանս, թէ արդեօք ինչ արդեօք իրական զա-նազանութի եղ Ա'իլպերդոս 'ի մէջ ածութե, և այ. առնչութե, և ածային էութե. զբացարձակ, և զպարագապես իրականն, թէ միայն զներգործական կերպական։ Վերջին կարծեացս պաշտպան լինին Ռեթաւիոս. հատ. ա. վճռական ածաբ. գիրք. ա. գլ. ը. հմր. ը։ Վասգուէս. վիճաբ. ճի. յառաջին մասն. գլ. բ. և այլք ոմանք. և զայս ցուցանեն նախ այ-նու, զոր ասաց Ա'իլպերդոս 'ի ժողովն Փարեզու.

Հայր այրէ և հայր. այրէ ած. Քայց ոչ է այս և այս: Բան այսմ առնչութիւնք, և հանգիստք առաջնային են մի եակութեի, և ոչ բազում: Երկրորդ, զի բազում անգամ յայտ արար, թէ երեք անձինքն են մի ած: Երրորդ, զի եթէ զնէք զանազանութեի պարզապէս իրական, մոլորութեի նր յայտնդիման լինէր ամենեցուն. և հարք երկուց ևս ժողովոցն, Փարեզու, և Աւմենաու ոչ կարօտանային այնչափ հարցմանց, և բացատրութեց, առ նորա մնացն հասու լինելոյ: Եւ չէ ինչ ընդեմ, զոր սքն Ծովմաս ասորւ. եպ. ըբ. պ. ըբ. ասէ, թէ Ա՛իլպերդոս ուսոյց, թէ աՀնչո-լինի յաճախինք են ընկերակից, կի պրպտուսք կապակցեալ: Բայց զի զայս ոչ ասէ սքն վարդապետն ըբ կարծեաց իւրոց, այլ ըստ պատմելոյ այլոց: Ի վերոյ ասէ ասէ, ասէ, ըն Ա՛նդրեպոս Փորբեպոպէ Տոլբեցի, յանկ ասաց (այս է, որպէս ասի.) ըն աՀնչո-լինի յաճախինք են ընկերակից, կամ պրպտուսք կապակցեալ. կամ ձեռնարկելով զայն գրեաց նմա իբրև գՀետևորդ ինչ նորին սկզբանց: Յայտնեսք մանաւանդ զի նախայիշատակեալ ածաբանքն, թէ կարծիքն Ակովտաց գրեթէ ոչինչ ընդհատ է ի կարծեացն Ա՛իլպերդոսի: Եւ այն զի աղաղակեն Ակովտեանք, և ոմանք ևս ընդ նոս. և Հակառակ կացեալ, պնդեն, թէ Ա՛իլպերդոս կացոյց զանազանութեի բացարձակ, և պարզապէս իրական: Ըստ Անտեհոսի Փարեզացւոյ. յամին. 1199. և ըստ ձեռագիր մատենին Ա՛իլպերդոսի առ Ա՛ստուեցայ. վճճ. ճի. գլ. ի. Ա՛իլպերդոս այսպէս ուսոյց, թէ առնչութիւնք զանազանին յանձանց, վը զի են պէս պէս Թուով. և են իրք երեք յատկութեանք, և ի միմեանց, և յաճախին գոյացուեն Թուով տարբերեալք: Սակս որոյ, թէ յոր կոյս է ճշմարտութեին, մեզ ոչ է դատել, դատեսցին այլք:

Երբ

Ընդ՝ Սկովտոս իւրայնովքն հանդերձ 'ի մէջ ստորոգելեացն բաղադատեալ առ միմեանս, և 'ի մէջ ածային էութեանէ, ևս և 'ի մէջ ածային առնչութեանց, և էութեանէ եդ զնւր զանազանութիւն ներգործական կերպական, զորմէ վերագոյնգ ճառեցաք: Նոյնպէս և Յովհաննես իւրովքն հանդերձ, և գրեթէ ընդ այլ ամ ածաբանից եդ 'ի մէջ նոցա զանազանութեի զօրութենական, կամ զտրամաբանեալ բանի: Նոյն արդ՝ թէ այս կարծիք ճշմարիտ իցէ, ծանդրի ընդ ասեալ,

ՅՕԴՎԱԾՈ Գ:

Լուծանի նոցին:

Ընդդէմ Գրիգորի Նազիանզեցւոյ, Ընդդէմ Բասիլեայ Կեսարացւոյ, Ընդդէմ Յովհաննու Դամասկացւոյ, և Ընդդէմ Հիլարիոսի, թէ ստորոգելիքն ոչ 'ի միմեանց, և ոչ յէութենէն. և ոչ առնչութիւնք յէութենէն զանազանին յաճախ իրապէս եակապէս: Այսոցիկ հակառակ կարծիքն սահմանեցաւ 'ի ժողովին Լատերանու, և Վիեննոյ. և յայտ ևս լեցի 'ի ցրեալն զանազանութենէն Սկովտայ. զի եթէ ոչ զանազանին սոքա ներգործաբար կերպականապէս, ևս առաւել ոչ զանազանին ներգործաբար իրապէս:

Ընդդէմ երկրորդ, ընդդէմ Էգիդիոսեանց, և անուանականաց, թէ սոքա զանազանին առաւել ևս քան զզանազանութեի տրամաբանօղ բանի. և յայտ լեցի 'ի հաստատելն զզօրութենական զանազանութենէն: Այսոցիկ,

Ասելի է նախ. Ընտրածային ստորոգելիք ոչ զանազանին 'ի միմեանց, և յէութենէն. և ոչ առնչութիւնք յէութենէն, ներգործական կերպական զանազանութիւն, այն ինքն է, Սկովտայ զանազանութիւն:

Յուցանի նախ՝ ձեռնարկութիւն, որ յառաջ բերեալ 'ի սէ պրոց. Ոչք ներգործաբար կեր-

պականապես յիրում զանազանին յիմքէ , չէ հնար նոցա ստորոգիլ զնմանէ ՚ի վերացեալն այլ յաւէտ բացասիլ. զի որովհետև վերացեալն ոչինչ այլ յիւրմէ ՚ի մէջ բերէ , բայց եթէ զոր բացատրէ , եթէ ստորոգէր զայնմանէ , յորմէ կերպականապես ներգործաբար յիրում զանազանի , ոչ լինէր նոյնութիւն ստորոգելոյն և ենթակային , որպես յայտ է յայսոսիկ ստորոգութիւնս. Պետրոս է մարդկութի՛ն է արդարութի՛ն է բարութի՛ն Ասկ արդ՝ ըստ սը գրոց ստորոգելիքն ստորոգին զայ ՚ի վերացեալն, որպես Յովհ. ժՃ. ասաց .քս զանձնէ. Ես եմ ճանապարհ ճշմարտութի՛ն և կեանք։ Այլ սքն Յհռնարդոս ՚ի ժողովն Ալեմենսու հարցեալ, զի տացէ գրով, թէ զի՞նչ կարծիս ունիցի ընդդէմ Ա՛իլպերդոսի, ասէ. Կրնայ ելլալ երկութեամբ , անպատանդեայ էղիգամբ , և չանպակասիլ ՚ի վէմս , ըէ ամէնայնի կրնանայ , ինչպէս , քնուելիս , ամէնուինի , բարուելիս , նմանութեան , պզտուելիս , խոտորելիս , ձեռնկիսանայ , նոյնպէս է ամէն. ապա :

Յուզանի երկդ ՚ի ժողովոյ . Ելան ՚ի ժողովոյն Ալեմենսու , յորում սահմանեցաւ , թէ բանն ամբանական ոչ պարտի զանազանել ՚ի մէջ բնութե և անձին , այս է , ըստ որում բացատրեցաք , թէ բնութին և անձն իրօք ոչ զանազանին. և թէ ամբ է ամբութի՛ն , զոր չէր հնար ասել , եթէ ամբութին կերպականապես յիրում զանազաներ յայ. որպես յայտ է յառաջին ցուցմանէդ :

Երկրորդ ՚ի ժողովոյն Ալատերանու , առ քահանայապետութեամբ Ալննովկենտիոսի երրորդի , ուր ՚ի գլուխն Հաւատոյ. գլուխ. ը. այսպէս գրի. Ան մեր աստուծ է ընդհանուր Երրորդ հաստատութիւնքն, հաստատ է խոստովանիմ ընդ Պետրոսի, ըէ ի Հայրութէն իր է անհատանելի, և անճառելի, որ էութիւն է հոգւոյ , և արդի , և հոգի աստուծ , ի քէ անչինչ հնդեմայն , և իստուածէութեան է ՚ի նո-

նոցանէ առանձինն: Եւ յայնմանէ յոգորմած է երբորդ-
գոլիւն ինչն, և ոչ երբորդգոլիւ .... Եւ լինի
պէս այլ ոմն է հայր, այլ ոմն որդի, այլ ոմն
հոգին սէր, քայց ոչ այլ ինն, այլ այն որ է հայր,
է որդի, և հոգի սուրբ, նոյն ամենայնին: Երդ
եթէ ամենայնին նոյն յիրում. ապա ոչ իւիք իրաք
զանազանին յիրում: Դարձեալ, եթէ կերպակա-
նապէս իրապէս զանազանին, ապա հնար էր լինել
կերպականապէս իրապէս յոճ երորդգոլիւն. մա-
նաւանդ թէ որպէս բանից կարդ է ասել, հարիւ-
րորդգոլիւն:

Երորդ, 'ի ժողովին Կղեմենտիոս, առ Եւ-
դիանէոսիւ երորդիւ. յամին. 1439. յայն ժողով
Յովհաննէս անուն ոմն ածաբան 'ի կարգէն հարց
քարոզչաց, գաւառապետ Հռմպարտիոյ. 'ի վիճելն
ընդեմ յունաց 'ի դիմաց Լատինացւոց, խօսել սկսա-
նի այսպէս. նիստ. ժը. Դու՞ խնդրես, ընդ որ-
պէս նոյն էին յոճային անչինա գոյացութեան, և
անչին, կամ էնթիոպիան. իսկ ես ասեմ, ընդ
գոյացութեան, և անչին, կամ էնթիոպիան են նոյն
իրօ, այլ պարբերեին ըստ եղանակի նմանութեան ես:
Պատասխանի եւս Անարկոս Լիսեսացի եպիսկոպոսն
'ի դիմաց յունաց. Ծնեալս որդիս յայսմ հասին
չէն ինչ էրկպատակութեան 'ի ես: Եւ նիստ.
հետս. ժթ. Ընդրէաս Երհիեպիսկոպոսն Հռոդիս
զայս անտարակոյս ընկալեալ, ասէ. Յատկու-
ձանութեան որ հատուկ է վերջապէսից յոր-
նոց և Լատինացւոց պարբերել ասել գոյացութեան
ածային, և գոյացութեան (այս է էնթիակայութիւն.
որ է յինքեան կայութի, որպէս մեկնէ անդէն.) հօր
և որդոյ, քայց 'ի համարելոյ իրօ պարբերել այսմ,
այլ ըմբռնմամբ ինչն և տրօ:

Պատասխանին Ակովտեանք նախ, թէ 'ի բանագ
յայդոսիկ ոչ փակի նախ սահման ժողովին, այլ հարցն
խօսակցութի: Երկրորդ՝ միտք ժողովին ոչ էր հեր-

քել

քել զկարծիս Ակովեայ, զորմէ չկայր ինչ հակառակութիւն, այլ զմոլորութիւնն իրական զանազանութեան:

Ընդ առաջինն ասեմ, այո՝ ընդունիմ. թէ յայտնի բանս ոչ փակի սահմանն, ապա թէ ոչ կարծիքն Ակովեանց լիներ հերետիկոսական, և ճշմարտութիւն Յովհաննէսեանն դպրատան՝ ճշմարտութիւն հաւատոյ. բայց ի վերայսր ամի վկայութիւն մեծ գտանի ի բանս յայտնիկ, և նոքիմբ կարի խիճ հատուտի մերս կարծիք. քանզի առ հաւատարակ հաւանութիւն եկեղեցեացն երկոցուն Յունաց և Լատինացւոց ընկալեալ եղև ճշմարիտ. և զայն ի ձեռն առին ի մերժել զմոլորութիւնն իրական զանազանութեան:

Ընդ երկրորդն՝ ըստ նմին օրինակի ընդունիմ, թէ ոչ էր միաք ժողովոյն դատապարտել զկարծիս Ակովեայ, այլ զհերետիկոսութիւնն իրական զանազանութիւն ի մէջ էութեն, և առնչութեանց: Սակայն զհերետիկոսութիւնն հերքել չէր հնար հարցն բայց եթէ վարդապետութիւն, զոր համարէին ճշմարիտ. վն զի մոլորութիւնն ոչ հերքի մոլորութիւն. Իսկ արդ՝ քանզի զմեր կարծիս ի կիր արկին առ այս վանճան, առանց կարծեաց զայն համարեցան իբրև ճշմարիտ, և զնեղհակեան զԱկովեայ կարծիս՝ սուտ. այնուհետև առաւել ևս, զոր ասացին, թէ առնչութիւնք զանազանին յէութենէ մտաց միայն: Ընդ արդարև զարմանք մեծ են, թէ զհնոցդ Ակովեանք, և առաւել յառաջադեմն ի նոցանէ հայրն Գրանչիսկոս Ֆենելոս, ոչ ընդունին, թէ զանազանութիւն իւրեանց այսու յայտնադիման բանիւք ժողովոյն ցրի. վն զի ասեն, թէ չկայր ինչ զայնմանէ վճռարանութիւն. և սակայն նախայիշատակեալ յածաբանն յայլոց տեղեաց նոյն ժողովոյ որ ոչ վերաբերի առ այս, գուն գործէ զերծուցանել զիւրեանց կարծիս:

ՀԱՍՏԱՏԻ ԵԿԵՂԵՑՈՒԹԻՆ ՀԱՒՆԱՐԿՈՒԹԻՒՆ, ՈՐ ՅԱՌԱՋԵՐԵԱԼ ՅԱՅՍՑ ԺՈՂՈՎՈՑ։ ՆԱԽԱՅԻՇԱՏԱԿԵԱԼ ԺՈՂՈՎԸՆ ՀԵՐՔԵՑԻՆ, ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏԵՑԻՆ ՂԱԶԱՐԱՍՏՈՒԹԻՒՆՆ ԽԱԿԱՊԷՍ ԵՒ ՅԱՏԿԱՊԷՍ ԻՐԱԿԱՆ. ԶՍՈՑ ԽՈՏՈՎԱՆԻՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ, ԵՒ ԵՒ ԱԿՈՎԵԱՆՔ. ԼԱԿ ԱՐԴ՝ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՐՊԱԿԱՆ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԱՄ ԽՈՀԱՑՈՒՄՆ ՄՈՍՑ՝ Է ՅԱՏԿԱՊԷՍ ԵՒ ԽԱԿԱՊԷՍ ԻՐԱԿԱՆ. ԱՊԱ։ ՅՈՒԴ. ՓՈՔ. Ա. ՀՒՆ Է ԽԱԿԱՊԷՍ, ԵՒ ՅԱՏԿԱՊԷՍ ԻՐԱԿԱՆ, ՈՐ ԻՆՉ ԵՒ ԻՆՔ, ԵԹԷ ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ, ԵԹԷ ՊԱՏԱՀՈՒՄՆ, ԵԹԷ ԵՂԱՆԱԿ, ԵԹԷ ՆՇՈՒԹԻՒՆ, ԵԹԷ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ, ԵՒ ԵԹԷ ԱՆՆԵԼՈՒԹԻՒՆ, ՈՐ Է, ԿԱՄ ԿԱՐԵ ԼԻՆԵԼ Ի ԿՈՂՄԱՆԷ ԻՐԻՆ ԱՆԿԱԽ Ի ՄՈՍՑ. ՄԻ ՊԻ ԱՅՍ Է ՍԱՀՄԱՆ ԽԱԿԱՊԷՍ ԵՒ ԱՆՁԿԱՊԷՍ ԻՐԱԿԱՆ ԷԱԿԻՆ. ԼԱԿ ԱՐԴ՝ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՐՊԱԿԱՆ ԱԿՈՎՈՅ Է Ի ԿՈՂՄԱՆԷ ԻՐԻՆ ԱՆԿԱԽ Ի ՄՈՍՑ. ԱՊԱ։

ԴԻՏԵՄ, ՊԻ Ի ՊԱՏՐԱՍՏԻ ՈՒՆԻՆ ԱԿՈՎԵԱՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ, ԹԷ ԱՅՆ ԵՒ ԵԹԷ Է ՅԱՏԿԱՊԷՍ, ԵՒ ԱՆՁԿԱՊԷՍ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՆ ԻՐԱԿԱՆ, ՈՐ ԼԻՆԻ ԿԱՄ Ի ՄԷՋ ԱՆՋԱՏԵԼԻ ԾԱՓԻՑ, ԿԱՄ Ի ՄԷՋ ԱՐՏԱԴՐՈՂԻ, ԵՒ ԱՐՏԱԴՐԵԼՈՑ, ԵՒ ԿԱՄ Ի ՄԷՋ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐՔ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԵՆԹԱԿԱՅԱՆԱՆ ՅԵՆԹԱԿԱՅԱ ԱՆՋԱՏԵԱՆ, ԿԱՄ ԱՆՋԱՏԵԼԻՍ։

Ա. ՀԻ Է ԸՆԴԴԷՄ ՆԱԽ, ՊԻ ԱՅՍ ՅԱՄ ՎԱՅՐԱՊԱՐ ԿԵՂԾԻ, ԵՒ ՊԼՈՒԱՆ ԱՂԱՒԱՂԷ ՊՀԱՍԱՐԱԿ ՍԱՀՄԱՆ ԻՐԱԿԱՆ ԷԱԿԻՆ, ԿԱՄ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՆ։

ԸՆԴԴԷՄ Է ԵՐԿՐՈՐԴ, ՊԻ Ն. ԻԼԻԵՐԴՈՍ ԸՆ ԱԿՈՎԵԱՆՑ ԵԴ ՅԱԾՈՒԹԻՆՍ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՆ ԱՆՁԿԱՊԷՍ ԻՐԱԿԱՆ. ԻՍԿ ԱՐԴ՝ ՆԱ ՉԷ ՀԱՄԱՐԵՑԱԼ ԹԷ ՅԱԾՈՒԹԻՒՆՆ, ԵՒ ՅԱԾ ԵՆ ԱՆՋԱՏԵԼԻ. ԵՒ ՉԷ ԹԷ ԵՆ ԱՐՏԱԴՐՈՂ, ԵՒ ԱՐՏԱԴՐԵԼ. ԵՒ ՉԷ ԵԹԷ ԵՆԹԱԿԱՅԱՆԱՆ ՅԵՆԹԱԿԱՅԱ ԱՆՋԱՏԵԼԸ, ԿԱՄ ԱՆՋԱՏԵԼԻՍ. ԱՊԱ։

ԱՐ ՀԱՍԿԱՑԱՒ, ԹԷ Ն. ԻԼԻԵՐԴՈՍ ԶԱՆԱԶԱՆԱՑ ՅԱԾՈՒԹԻՆ ՅԱՅ ԻՐԻՆ ԻՍԱ, ԻՍԿ ԱԿՈՎ ԻՐԻՆ ԻՐԱՆՈՒԹԻՆ ԵՒ ԵԹ, ԵՒ ԿԵՐՊԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ. ՔԱՆԶԷ

ԶԻՆՉ

զի՞նչ էին ասէ Հարցանեմ այն իրականութիւնք, և զի՞նչ կերպականութիւնք, եթէ չէին արդեօք էակք, և իրք. զուցէ գոանիցի ինչ միջին ընդ մէջ էակի և ոչնչի. ո՛չ ապաքէն էակ կամ իր կոչի, որ է, կամ կարէ լինել՝ի կողմանէ իրին անկախ՝ի մտաց: Ապա այս ամ բանք են գատարկ, և ծրտութեի անհիմն տրամաբանող բանի:

Յետևս ասիցես. Իրք ասին, որք ունին զսեփական գոյութիս. իսկ իրականութիւնք, կամ կերպականութիւնք որք գոն գոյութիչ էութեն: Այլ դարձեալ ընդդէմն. Նախ՝ զի այս ամ վայրապար ասի: Երկրորդ, զի զանծանօթն ևս անծանօթիւ մեկնէ. քանզի անծանօթ իմն է, որոյ պատշաճին բազում գոյութիք: Երրորդ, նմանին հաւանական նագոյնս ո՛չ լինելը իր. զի հաւանականագոյն կարծեօք գոյ գոյութիչ կերպին: Ուր չորրորդ, Ն՛եսպերդոս ըստ Ակուինասեանց զանազանեալ՝ի մէջ ածութեան, և այ. ՝ի մէջ առնչութեանց, և էութեն, իբրև՝ի մէջ իրաց. բայց ո՛չ եցոյց ինչ, թէ արդեօք մի, թէ բազում գոյութիք պատշաճին այ: Ուր արդ՝ զայս ամ ո՛չ առացաք առ յաչառանաց, պնդելով, այլ ձեռնարկելով՝ի յոյզս ճշմարտութեն: Վասն չէ հնար բացատրել, եթէ այս զանազանութիւն Ակուինայ ո՛չ սակաւ նպաստ լինի պատապարտեալ մոլորութեանն Ն՛իկերդոսի Փորբեատացւոյ, Փաւլեանց, և Սոկինեանց: Այնմ ասասցես, բայց ըստ հակառակս, նոյնպէս լաւ ևս դիւրաւ մեկնի խորհուրդն ամենասքի երրորդութեն, թէ զհայրդ բնութիւնն հօր հաղորդի որդւոյ, և ո՛չ անձն. այլև խորհուրդ մարդեղութեն, թէ զհայրդ որդին մարմնացաւ, և ո՛չ Հայր: Պատասխանեմ, թէ և Ն՛իկերդոսի այդ իսկ էր պատճառն մոլորութեն իւրոյ: և դարձեալ այս ամ լաւագոյն ևս մեկնի զօրութեն նական զանազանութեչ, որպէս յայտ լեցի յորոց ունիմք տսել այլուր:

Յու-

Յուցանի երրորդ՝ եղբակացութեին ի սէրց Հարց. Աբն Օգոստինոս. գիրք. Է. ի վերայ երրորդ, գլ. Ը. առաք. Ո՛չ է այլ ինչ գոլ հաւ, եւ այլ ինչ գոլ անյն, այլ ամենեւին նոյն։ ապա առանց հնչ զանազանութեան իրականի, եւս և կերպականի. ապա թէ ոչ՝ ոչ եւս լինէր ամենեւին նոյն։ Յայս միտ են սէր Յովհան. Վատմոկացին. գիրք. ա. ուղ. հաւ. գլ. ժա. Աբն Տուքենցիոս. ի պատասխ. առ Վիկտորիանոս. Հարց. ը. Աբն Աստկոմս. յառաջաբանի. գլ. ժէ. Աբն Ռեմնարդոս. ճառ. Ձ. կերպ. և գիրք. Է. յաղագս խոկ. գլ. Ը. և ի հետս. և այլք։

Ընդ առաջաբան վերոյն ծանուցանել, թէ ի մէջ դատապարտեալ մնացանցն ի Սոկրատեանոսէ Վարիեզու ի գիրս խորհրդոյ ածաբանիցն Փարեզու. յամին. 1286. այս ինչ գրի. Ծնե այլ ինչ է հաւ իրաւ, որ չէ հաւ ըստ ե-ըո-ՀՀ կերպական գոլոյ։ Նա թէ ի մէջ մնացանց յետս նահանջելոց ի Լուդովիկոսէ. յամին. 1362. ըստգտանի այս. Ծնե այլ ինչ նոյն հաւ ըստ ե-ըո-ՀՀ իրական գոլոյ, և առկայն ոչ նոյն հաւ ըստ ե-ըո-ՀՀ կերպական գոլոյ։ Նա ի վերկայութեի առացելոցն կոչէ զՎերսոն. Հատ. ա. գործ նոր. տպագ. երես. ճա. և ճժը։ Խոկ արդ՝ ըստ Ակովտեանց այլ ինն է հաւ իրաւ, որ ոչ հաւ կերպականապէ. զերօրինակ արդարութեի. քանզի զանազանի ըստ նոցա յաճութենէն կերպականապէս, և ոչ իրապէս։

Յուցանի չորրորդ եղբակացութեին պատճառ օք. նախ՝ պատճառաւ սէրն Ռեմնարդոսի. գիրք. ե. յաղագս խոկ. գլ. Է. և յառաջ քան զնա Օգոստ. գիրք. ե. ի վերն երրորդ. գլ. ե. յառաջբանի ի ծայրագոյն կատարելութենէն այ. Ընդ է ինքնագոյ էակ ամենակատար. քան զոր կատարելագոյն չէ հնար զմտաւ ածել. իսկ արդ՝ էակն, որ ինքնին այնպ նոյնացուցանէ ընդ ինքեան ամենեւին զամ կատարելութիս, միանգամ ոչ իւիք իրօք զանազանիլ նոցա ի նմանէ, բայց եթէ յաւէտ, կամ նուազ

բա-

բացատրեալ ըմբռնմամբք, է կատարելագոյն, քան եթէ՝ ի նմանէ իրապէս կերպականապէս ընդունէին, և ոչ փակէին յէական իմացման նր, որպէս ինքնին յայտ է. ապա:

Հաստատի. Ոչ յաւտսիկ կատարելութիւնք իրապէս կերպականապէս յէութիւնն ընդունելոյս ոչ է մարթ ըմբռնել, բայց եթէ կատարելութիւնս յաճախին էութիւնն իբրև յենթակայ ընկալեալս: Ապա էութիւնն այ իմացեալ լինէր՝ ի կարողութէ առաջնս իբրև կատարելի առ կատարիչս, որ ընդդէմ է ամենակատար և ամենամաքուր ներգործութեանն այ. ապա:

Երկրորդ պատճառն յառաջբերի՝ ի ծայրագոյն պարզութէն այ, այսպէս. Ան է ամենևին պարզ. Իսկ արդ՝ անհնար է լինել ամենևին պարզութեան ընդ իրական կերպական ընդունելութեան. ապա: Ան, է ստոյգ՝ ի հաւատոց: Յուց. փոք. Ոնազանութէն իրական կերպական յաճ՝ ի մէջ բերէ ղբաղադրութիւն իրական կերպական յաճ. այնու եղանակաւ, որով է ընդունելութէն. Իսկ արդ՝ անհնար է ճնալ ամենևին պարզութէ ընդ իրական կերպական բաղադրութէ. ապա: Վոքրս յայտ է, և ընդունելի: Յուց. մեծա, Ընդ՝ բաղադրութէն է ընդունելից միաւորութէ. Իսկ արդ՝ ընդունելեաքն կերպականապէս իրապէս յաճ, եթէ իցեն, են ընդ աճութէ՝ և ընդ միմեանս միաւորեալ. ապա ընդունելութէն իրական կերպական յաճ՝ ի մէջ բերէ ղբաղադրութիւն իրական յաճ: Յուցանի երկրորդ նոյն մեծ. Եթէ էր յաճ իրական էական ընդունելութէ, մակաբերիւր յայնմանէ, և մակաբերէին իսկ սուրբ Հարքն ընդդէմ Նուաղեթոսի, և Ա՛իլպերդոսի ղբաղադրութէ իրական էական յաճ: Ապա՝ ի կերպական, և իրական ընդունելութէն յաճ՝ օրինապէս մակաբերեմք ղբաղադրութէ իրական կերպական յաճ:

Այսմ ամի ոչինչ խափան լինելով, որ գրեթէ զարթուցումն ունին զքօրումի, ուչ ընդունին Ակոխանաք, թէ առաւոտելքն թէպէտ և ի միջանց և յեռութէն կերպականապէս իրապէս իցեն զանազանեալք, զնան յետ զարդարդրումի. Նախ՝ զի ուչ միաւորին յեռութէ, այլ նոյնանան ընդ նմա։ Երկրորդ, զի առ բարդարդումին պահանջի միումն լինել իրաւ ներպործումի, և միաւումն իրաւ կարդումի։ Երրորդ, զի ե բազմաւորումի առաջադելեաց, առնչումենց, և էութենէ. իսկ ուր է բազմաւորումի, ուչ ե հարկ լինել անդէն և բարդարդումի. քանզի բազմաւորումին և բարդարդումին զանազանին. վ զի բազմաւորումին դիմաբաժանիւ միւռէն, և բարդարդումին պարզումէ։ Չորրորդ, զի իրական զանազանումին անձանց ի միջ իւրեանց ոչինչ վնաս բերէ ածոյին պարզումին։ Այս և ուչ զանազանումին կերպական իրական առաջադելեացն ի միմեանց, և յեռութէն, և առնչութենցն յեռութէն։ Այսպէս գրէ դեղյարդոյ Հայրն Աննոս. առա. վճճ. ք. խ. ք. ի լուծ. առարկ. ե։

Այլ ե ընդդէմն. առ առաջինն, զի առաջադելեքն կամ նոյնանան ընդ էութէ, և ընդ միմեանս իրապէս կերպականապէս, և կամ ուչ. Եթէ առաջինն, ապա ուչ զանազանին կերպականապէս իրապէս. Եթէ երկրորդն. ապա միաւորին և բարդարդին կերպականապէս իրապէս։

Առ երկրորդն պատասխանեմ, նախ՝ թէ այդ պատասխանի ամենևին վայրապար դնի. Նախ՝ զի բարդարդումին ուչ այլ ինչ ե, բայց եթէ զանազանիլ, որով օրինակաւ և իցեն զանազանեալ, միաւորումի. և երկրորդ, զի ահա իսկապէս են լարդարդումիւնք, յորս ուչ գտանի այս պայման ներգործումէ և կարողումէ, որպիսի ե բարդարդումիւն ամբողջական, բարդարդումին խառնումենց, զօրօրինակ ի տարերս։ բարդարդումին կարգի, որ-

պէս ՚ի զօրուէն. բաղադրութիւն հաւաքական, զօրութիւնակ ՚ի կոյտս քարանց: Արկղրդ, Թէպէտ և Վոլտաերսս, և Ա՚իլկերդոս ոչ եդին զանազանութիւնս յածս ըստ ներգործութեան և կարողութեան, այլ սակայն սկի հարքն և ածաբանք հետևեցուցին ՚ի նոցուն զանազանութիւնէ զբաղադրութեան յածս: Արկղրդ, եդեալ թէ առ բաղադրութիւն պահանջի միութեան լինել իրրև ներգործութեի, և միաւսութիւն իրրև կարողութեի, բայց այս ևս զտանի յածս ըստ Ակովտայ կարծեաց: Վասնզի ՚ի դնելն, եթէ էութիւն զանազանի իրապէս կերպականապ ՚ի ատորոգելեաց, կամ յածային կատարելութենց, սուվիմբ իսկ դնի էութիւն իրրև ենթակայ ընկալուչ նց. ուստի և ՚ի կարողութենէ առ այնս, իրրև կատարելի և ներգործելի ՚ի նոցանէ:

Ընդ երրորդն պատասխանեմ նախ, թէ այն բազմաւորութիւն յայտնապէս եղծանէ զծայրագոյն միութիւն աստուծոյ, որպէս ունիմք ասել. և այսպէս հայրն Աննոս յանձրևոյ փախուցեալ, տարափոյ դիպաւ: ՚Ի վեր այսր ամի հակառակի ժողովոյն Նտերանու. գլ. հաստատապէս. յորում ընկալեալ լինի յածք երրորդութեի, և ոչ չորրորդութեի, կի պլ լինչ թիւ: Արկղրդ. այն բազումք կամ անջատեալ են ՚ի միմեանց, կամ միաւորեալ, և կամ նոյնացեալ իրապէս կերպականապէս: Օգուտչինն չէ հնար ասել: Եթէ երկրորդն, ապա բաղադրին կերպականապ իրապէս: Իսկ եթէ երրորդն, ապա ոչ են բազում, այլ մի և նոյն կերպականապէս իրապէս:

Ընդ չորրորդն պատասխանեմ ուր. զհանգիտութիւնդ. և անհանգիտութիւնն է, զի ըստ կարծեաց մերոց առնչութիւնքն ոչ բաղադրեն, ոչ ընդ էութեն, մի զի նոյնանան իրապէս կերպականապէս ընդ նմա, և ոչ ընդ միմեանս. մի՝ զի նկատմամբ միմեանց ոչ են իրրև համամասն, այլ իրրև բոլոր. զօրութենակ ան-

անհատքն ի մեզ ի, և ի հրեշտակս: Եւ երկրորդ, զի բազդատին առ միմեանս իբրև գոնատանելով և հակադրեալ, և ոչ իբրև միատրիք: Իսկ ըստ Ակվինին կարծեաց, քանզի առնչութիւնքն և սաղորդելիքն ոչ նոյնանան կերպականապէս իրապէս ընդ Էութեն, այլ զանազանին կերպականապէս իրապէս ի նմանե. և զի ոչ ևս են անջատեալ, հետևի, թէ միատրին ընդ նմա, և ընդ նմա բազադրեն:

Երրորդ պատճառն յառաջբերի ի ծայրագոյն միութենն այ այսու օրինակաւ. Օդօրինակ ածէ ամենևին պարզ, նոյնպէս է և ամենևին մի, մանաւանդ թէ, եթէ հնար իցէ ասել, ամենամի. որպէս ասէ սբն Հռոնարդոս: Իսկ արդ՝ զանազանութենն կերպական իրական ներհակի այսմ ամենևին միութեն, մի՛ զի ըստ վկայելոյ իսկ հօրն Հռնոսի, ի մէջ բերէ զբազմաւորութեի իրական կերպական. իսկ արդ՝ բազմութիւնն տրամաչափապէս հակադրի միութեն. և երկրորդ, զի այնպէս բազդատի զանազանութենն առ միութեի, որպէս բազադրութենն առ պարզութեի. իսկ արդ՝ բազադրութենն իրական կերպական եղծանէ զծայրագոյն պարզութենն. որպէս խոստովանին իսկ հակառակորդք. Ապա զանազանութենն կերպական իրական եղծանէ զծայրագոյն միութենն:

Ասելի է երկրորդ. Սաղորդելիքն ածային ի միմեանց և յէութեէ, ևս և առնչութիքն յէութենէն՝ զանազանին զօրութենական զանազանութեբ, կամ՝ զանազանութեբ տրամաբանեալ բանի, ոչ ՃՁ զանազանութեբ, որ լինի իբրև արտաքսօղ, և արտաքսեալ, այլ փոքր զանազանութեբ. որ է իբրև լրեցեալն, և բացատրեալ:

Յուցանի առաջին մասն. Ասին զանազանիլ զօրութենաբար, որք թէպետ չինքեանս են ամենևին պարզ իր, բայց հանգիտանան բազ-

Խ. Շ. ի վր կարդ պ.ա.առ Ձ.

մաց իրապես զանազանելոց, և զայլևայլ գործս յառաջածեն. վայ և ընծայեն մտաց մերոց զհիմն ի կերպասորել զպէսպէս անհաւասար խնայմունս. որպէս եթէ իրաց՝ իրօք զանազանելոց. յորմէ ծագէ ի միտս մեր զանազանութիւն ինչ, որ կոչի զանազանութիւն տրամաբանական բանի, կամ հանդերձ հիմամբ յիրում. իսկ արդ՝ յիծ ստորոգելիքն, առնչութիւնքն, և էութիւն են մի իր ամենևին տարբ. որպէս յայտ է յառացելոցս, սակայն հանդիսանայ բազմաց իրապէս զանազանելոց ի ստեղծուածս և զայլևայլ գործս յառաջածէ. ուստի և ընծայէ մտաց մերոց հիմն զպէսպէս անհաւասար խնայմունս զնմանէ կերպասորելոյ, յորմէ ծագէ ի միտս զանազանութեան բանի հանդերձ հիմամբ յիրում. ապա

Արդ՝ այս զանազանութեան, զոր արդ նշանակեցաք, ըստ որում մտածի յիրում, կոչի զօրութիւնական, վ՚ զի զօրութիւք է իրական, և հանդիսանայ նմա. իսկ ըստ որում մտածի ի միտս, կոչի տրամաբանական բանի, կամ հիմամբ յիրում:

Ի ս. զան. է. խ. ա. պ. է. բոլ.

Այս այս հիմն, զօրօրինակ և յիշատակեցաք, է կրկին. Նախ ի կողմանէ խնայելոյ իրին, այս է գերազանցութեան նր, կամ հանդիսութիւնն բազմաց ի ստեղծուածս զանազանելոց, որ ասի զօրութիւնական բազմապատկութեան: Երկրորդն ի կողմանէ մտաց մերոց. այս է, տկարութեան նորա. յորմ սակս վ՚ զի ոչ զօրէ զայս գերազանցութեան այ մի միայն հաւասարեալ ներգործութիւք ըմբռնել, պարտաւանդի հասու լինել այնմ բազում կրկնապատկեալ անհաւասար ըմբռնմամբ: ուստի ծագէ ի միտս զանազանութեան ինչ, որ կոչի հանդերձ հիմամբ յիրում: Յղիցուք ևս թէ զինչ ասէ սրն Յովհաննէս ի վերոյ յիշատակեալ տեղին. Վերապանցելն այ հոգի զերկրաւորեալ է, ի հողմանէ նորին այ, վ՚ ըստ որում կապրելոնան նորա. և ի հողմանէ հոգւոյ ներոյ, որ պնդաւորեալ զիրանէ ի հոգւոյ զինեալ նմա: Այլ յայտ

է,

Ընդդէմ վերջին ցուցմանս հակառակին ոմանք, թէ Տէրտուղիանոս և զշունչն միանգամայն ասէր լինել հոգի. և սակայն յայտնապէս ուսուցանէ լինել մարմնաւոր: Այլ յայլևայլ միտս ընծայէ այ և շնչոյ զհոգին: Քանզի զած ասէ լինել հոգի գոյացութիւն, և բնութիւն, և կամ ըստ որում հոգին հակադրի մարմնեղէն և տարածեալ զանգուածոյ. և այս յայտ է ՚ի վերոգրեալ տեղեացդ. Համար ա. և ե: Իսկ զշունչն ասէ լինել հոգի, ոչ բնութիւն, և գոյացութիւն, կամ ըստ որում հոգին հակադրի տարածեալ զանգուածոյ, այլ ըստ որում նշանակէ զկեանս, և զշնչումն, և այս յայտ է ՚ի գրոցն. որ յաղագս շնչոյ. գլ. ԺԱ. ուր ասէ. Օշանէն հարկ է ասել որոշ պայմանաւ, լինէ է հոգի, ոչ ըստ ինճուկի անուանեան, այլ ըստ նկարագրութեան, և ոչ բառիւ գոյացութեանն,

այլ

այլ ըստ գործողութեան. զանգիր ընդ. ի՞նչ է հոգի յոյժակա՞ս : (Օգոս վկայուի Տէրտուղիանոսի, որ 'ի մի գանազանութեան հոգւոյ և շնչոյ իմանալ պարտ է ըստ բառիցն լատինացւոց, զի 'ի նա հոգին անուանի Սպիրիտուս, որ է շնչումն. և շունչն՝ Անիմա, որ է տարրերը բառ. և ոչ նշանակէ ըմ ձայնին զշնչումն : Ուստի և ըստ այսմ նշանակութեան առնուլ պարտ է աստէն և զմերս հոգի և շունչ :)

Յուգանի երկրորդ մասն 'ի սկզն Օգոս. գիրք. Ժ. 'ի մի Օձն. ըստ նկարագ. գլ. իե. ուր զայս օրինակ տրամաբանէ. Տէրտուղիանոս զանգիր պնդմունս համարեցաւ ընել զաւետ, ոչ յայլ ասէ, քայց ի՞նչ պէ չէմարեցաւ ըմբռնել զնա անմարմին. նմին քէ ե՞րէիս , գո՞ւցէ տրէօ՛ ոչինչ նչե՞ն ինչ զէ՞նեցի մարմին. ե պէ՞ն նա չէմարեցաւ այլապէ խորհիլ. քայց զանգիր պոմիր է, երբեմն ընդդէմ ի՞նքեան կարծեաց պնհեալ պճշմարտութենին պարգեւ գաւանել : Զանգիր պնիչ ճշմարտագոյն ե՞ս հնար էր նմա առնել, զան զըր ասացն ուրիշ, ամ մարմնաւոր է կրանի : Ապա հարկ եղեւ նմա ձնհնել պնորձնե՞ր, զըր ձնոր մի յատուկագոյն ասացնալը էր, ի՞նչ ե՞ն է մարմին : Ա՞ն ոչ նա այնպէս յերեսոյթ պնե՞ պարկի, մինչե՞ պէ՞ն ե՞ս բնութենէ կրանն հակարձ :

Ասիցես նախ. Տէրտուղիանոս քաջայայտ բանիւք հաստատէ, թէ ած է մարմին. որպէս 'ի գիրս. որ 'ի վերայ մարմնոյն քոնի. գլ. ժա. ասէ. Ամ ոչ ինչ է, մարմին է ըստ ե՞րեսի աներե՞ւ, ե՞ ոչինչ է առմարմին, քայց եղե՞ւ, ոչ ոչ է : Ա՞ն 'ի գիրս, որ ընդդէմ Պրաքսեայ. գլ. է. ասէ. Ա՞ն պնչ է, ոչ ընդունի, ի՞նչ ած է մարմին, ի՞նպնե՞ս ե՞ ած է հոգի : Զանգիր ե՞ հոգին է մարմին ըստ ե՞րեսի աներե՞ւ, 'ի պարզիլ է՞ր, այլ ե՞ ունին առ ասպուածոյ պնե՞ի՞նոց մարմին, ե՞ պնե՞ի՞պարան, որով՛ ասպուածոյ ե՞ ե՞ն ե՞րե՞նչ : ապա :

պէտեմ զան. զսուաչ. Տէրտուղեանոս քա-
ջայայտ բանիւք հաստատէ, թէ ած է մարմին, յընդ-
դարձակ և յանկատուկ միտս, ընդունիմ. յանձուկ,
և՛ի յատուկ միտս, ուրանամ: Անկնի. Ոմանքին
ոմանք՛ի նախնեաց, մանաւանդ Տէրտուղեանոս՛ի
կրկին միտս առնուն. Ոչ՝ անկատակապէս փոխա-
նակ ամի, որ է իրական, և ենթակայանայ, և
հակադրի ոչնչի, ունայնի, և դատարկի: Երկ-
րորդ, յատկապէս, փոխանակ ներթևական և տա-
րածեալ զանզուածոյ, և քան զրուա հակադրի ան-
ներթևական գոյացութեան: Արդ՝ յորժամ ասէ Տէր-
տուղեանոս, թէ ած է մարմին, իմանայ զանկատ-
կապէս մարմնոյ, ըստ որում է ենթակայացեալ ինչ,
և հակադրի ոչնչի: Եւ այս յայտ է նախ անտի,
զոր վերագոյնդ յիշատակեցաք, ուր ասէ. ամ որ
ինչ է, տարրին է քան ներքոյ ածէ: Երկրորդ, ի
մասանց անտի, քան ներքոյ ածէ, զոր յերկուս
տեղիս ևս՛ի սէջ բերէ. որով՛ք նշանակէ, թէ զմար-
միին ոչ իմանայր պարզապէս և յատկապէս, այլ
որիշ եղանակաւ: Երրորդ, ի նպատակէ անտի,
զոր դիտեր՛ի ճառելն ընդդէմ Պրաքսեայ. քան-
զի սա պնդէր, թէ արդին այ ոչ է իրական ինչ
ենթակայացեալ, ի հօրէ բղխեալ. այլ ունայն, և
դատարկ ձայն հնչման ընդ օդս ցնդեալ, զոր առ
՛ի հերքել Տէրտուղեանոսի՝ ոչ էր հարկ հաստա-
տել, թէ բանն է յատկապէս մարմին, այլ շատ
էր նմա հաստատել, թէ բանն է իրական ինչ են-
թակայացեալ, և ոչ սին սոսկ և ունայն ձայն
հնչման. Այլ անդէն առ նմին յաւել՛ի վէր. Ոչչափ
ես առաւել ոչ՛ի նորին գոյացութենէ յառաջ եկն՝
ոչ եղեալ առանց գոյացութենէ: Եւ վերագոյնն ա-
ռաջնեալ էր. Ասացից ես ասէ, ըստ չէիր հնար յառաջ
ածել այ պատճառն ինչ, ես պատրաստի ... ես ոչ էր
պատ՛ի գոյացութենէ, որ յայնչափ գոյացութենէ յառաջ
եկն, ես պայնչափ գոյացութեան պատ: Զորրորդ, զի

յայն

յայն տեղիս ընդդէմ Պրոպեսայ, յորժամ ասաց, թէ ած է մարմին, ընդ նմին և յաւել, թէ է հոգի. արդ՝ չէ հնար միաբանել զոսա, եթէ իմանայր զյատկապէս առեալ մարմնոյ: Վինդերդոդ, սքն Ցեսաիոս եպիսկոպոսն Ճհենայ. դիրք. ընդդէմ Արիոսեանց. Հատ. ՃՀ. գրատ. Հարց. Լուկս. ասի զբանէն ոչ դրեթէ նոքին եղանակաւ զորօրինակ և Տէրտուղիանոս. սակայն ոչ ոք վասն այնորպանէ զնա մոլորեալ ընդդէմ աննիւթականութեանն ոչ: Նա վինդերդոդ, դի սքն Օգոստինոս թէպէտ և՝ ի վերոգրեալ տեղիդ՝ ի վերն Օննդ. ևս և՝ ի Թուղթն. ճԾէ. և դիրք. ի. ՝ի վերայ հոգւոյ. գլ. ե. երևի համարիլ թէ Տէրտուղիանոս երբեմն զյատուկ մարմինն ընծայեաց ոչ, բայց՝ ի գիրս, որ՝ ի վէր հերետիկոսութեանց, որ յետինն է քան զնախակարգեալսդ, հերետ. ձՂ. խոստովանի, թէ մարթէ իմանալ զբանս Տէրտուղիանոսի, և անբասիր առնել զոչինս յայն միտս, զոր ընծայեմք նմա. Տէրտուղիանոս ասէ՝ պատանդն պահ առնուահ. քայց պնդոյն պնդէ լինել տալին: Նա ոչ պատուհասոյն, այլ պահ նուիրական: Սակայն ոչ ասի լինել հերետիկոս. չանգէ տալն է հատուցանել նմա պնդոյն նուիրականաւն և պճոյսցուինն ոչ ըստ նրոց ինչ տալին, ոչ այսպիսի տալին, զորոյ պատուհաս չառնն պահ և փոքր հնար է, և պարտ նուիրել տուածդ. պարտականէ այն ոմ, զոր յանկարծ ինչ տալին, ընդ պնդոյն ինչ վերինն և զնոյն այսպիսի ինչ վերինն. ասկոյն տալն է արդեօ ասացս, հատուցանել նմա ինչ նուիրական պահ տալին, և՝ զի ոչ է ոչինչ, ոչ է պատուհասուին, և ոչ տալոյ կամ շնոյ այսպիսի ինչ վերինն. ևն. ապա:

Ասիցես երկրորդ, և միանգամայն ստիպիցես. Տէրտուղիանոս. դիրք. ի. ընդդէմ Մարկիոնի. գլ. ԺՂ. ընծայէ ոչ զանդամս մարդոյ, և զմարդկային ախտս, և զկիրս. ապա ետ նմա զմարմին հանգամանս և յատկապէս առեալ: Զա-

Պատասխանեմ զան. զառաջ. Տէրտուղիանոս ընծայեաց այլ զանդամն մարդոյ, և զմարդկային ախտաժակ և զկիրս, ի յատուկ և ի բնական միտս, ուրանամ. յանկատուկ և յայլաբանական միտս, ընդունիմ. այսինքն է, յայն միտս, յոր սէր գիրք ընծայեն այլ զայնս, ոչ վկրապոյնդ ձառեցաք:

Պնդիցես. Արեւ, թէ Տէրտուղիանոս դնէ յաճ զկիրս ինչ յատկապէս առեալ. ապա: Յուց. առաջ. ի յիշատակեալ տեղիս ընդդէմ Անարկիոնի. ասէ գայ, թէ ունի զբնութիւնն ըստ եռնատուրոց, և զբարոյսն ըստ ասլեքսակոց, և զնոխանայ ըստ ամբոխասանից. և զոր ինչ ոչ պատշաճէ լսոցդ: Օգտ օրինակ և զողորմութիւն ըստ յոյնեցոց, և զհամբերութիւն ըստ ալոփեցոց, և քաջն ըստ սրպենատուրոց, և զոր ինչ պարտն է քարեաց: Եւ գիրք. ա. ընդդէմ Նոբեն. գլ. իղ. խօսելով գայ, ասէ. Ոչ ապուշ և դժալիսի է, որ ոչ անարգէ զոյժանէ զոր ոչ կամ. որովհետև անարգութիւնն ինչ է ընդ ապիկար պարկեշտ կոմայ: Կամ երբէք անարգի, պարտի քարեհանել. երբէք քարիանայ, պարտի վերհան կնդրել. ըստ այնմ և վերհանդուրինն պատուղ է քարուիւնէ, և քարեհունէն պարտ անարգութիւնն. և անարգութիւնն ըստ ասացեալա, ինչ է ընդ ապիկար արարեալ կոմայ. ապա:

Պատասխանեմ զան. զառաջ. Արեւի թէ Տէրտուղիանոս դնէ յաճ զկիրս ինչ յատկապէս առեալ մարմնականս, այլապիշս, և ապականիչս, որպիսի ընծայէր շնչոյ, ուրանամ. անապականս, կատարեալս, երջանիկս, և ընդ ածային ծայրագոյն անմահութեան և անկրելութեն կիցս, ընդունիմ: Ըստ այսմ մեկնէ ինքն իսկ. գիրք. ը. ընդդէմ Նախատացեալ Անարկիոն. Ընդհանուն անձիս և անագործն են (ասէ.) որ ըստ մարդկայնոց պէտ այնոսն գործին. զի վերջնոյքն յոգոյհանոցս պայմանէ

են

էն այնպիսի ինչ, յոյն ասէս ե յաճ ըսպ նոյն վճռակի համարին լինել: Որշիւ պէսյոյս-ուիչս, ե ըսպ ե-ըռանչէ-ըոյ պէ-ըռանչէ-ը Տէրս ընծայեա՛ նէ, այնպէս պահապան, որպէս ե գոյոյս-ուիչն պահանջին, ինչպէս ե ըսպ յոյնին էրկ-ին հաղորդել.. այնպէս ապրիանոյս-ա գործե 'ի Տրդիչ ապրիանս-ուիչ Տրդէյին գոյոյս-ուիչն, որպէս անապրիան գործե յաճ, անապրիանս-ուիչ ձեայնին գոյոյս-ուիչն: Ես արդ՝ 'ի դնելոյն Տէրտուղիանոսի զայսպիսի կիրս յաճ, ուչ մարթիմք մակաբերել, եթէ մարմին հաստատեաց նմա:

Ասիցես երրորդ. Սքն Ծոռ. ա. ընդդէմ հեթ. գլ. ի. Թուէ զՏէրտուղիանոս ընդ այնոսիկ, որ հաստատեցին այ մարմին. ապա:

Պատասխանէ Աստալոս Ակէքսանդր, թէ սքն Ծոռմոս հայեցաւ միայն 'ի բանս Տէրտուղիանոսի, և յառաջին նշանակութեին, զոր 'ի մէջ բերեն, բայց գաղանի իմաստից նոցին, որ 'ի բաղդատուէ սկզբանց նորին վարդապետութեանն ամենևին ուչ մնադրեաց. զի ուչ պահանջէր զայս առաջիկայ գործ նի, և ուչ իսկ վերաբերէր առ դարձն հերձանոսաց զայն հաստատակութեի ընդ քննութեի արկանել:

Այլ արդ՝ ոչինչ ընդդէմ երևի համարել, թէ սքն Ծոռմոս հաստատեալ 'ի պէսպէս վկայութիւն սքն Օգոստինոսի, զիրօրինակ վերագրեալ քննեցաք, զհակառակ կարծիս կալաւ իբրև հաստատական: Բայց և մեք իսկ ուրանամք զայն բացարձակապէս. վ զի ուչ եթէ պնդմամբ իսկապէս, թէ Տէրտուղիանոս ուչ երբէք եղ այ մարմին, այլ հաւանականաբար միայն, և ընդ ժամանակութեի. այս է, հաւանական է, թէ ուչ ասացաւ զայս մոլորութի, և եթէ սխալացաւ ևս, յետս նահանջեաց զայն: Ես չասիցես, թէ սքն Օգոստինոս 'ի յետին գործս որ յաղագս հերետ. զառաջին կարծիս հաւաստեաւ յետս նահանջէ, և

զՏէր-

զՏէրտուղիանոս անբասիր առնէ : Պատրաստ ուրեմն եղիր ի մեզ ընդունել զայս ամենայն ի քեզ անդադար ամ եւ աւր , այլ եւ ի մեզ ի տունս մեր ի տեղիս ուր իցես , ի ճանապարհի եւ ի տեղիս ուր կայցես , ի ժամ ուր ուտիցես եւ ուր ննջիցես , ի ժամ ուր ելանիցես եւ ուր մտանիցես , ի ժամ ուր ուղեւորիցես եւ ուր դառնայցես , ի ժամ ուր ուրախանայցես եւ ուր տրտմիցես , ի ժամ ուր հիւանդանայցես եւ ուր առողջանայցես , ի ժամ ուր ի քաղցրութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի դառնութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի պատուականութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի նուաստութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի հանդարտութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի խռովութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի հանգստեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի տագնապի կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ծիծաղի կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի լացի կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ծաղկութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի թառամութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի կենդանութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի մահու կամաց կարծիցես , ի ժամ ուր ի հարստութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի տկարութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի հարկաւորութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի ստացուածոց կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ծառայութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի ազատութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ծնունդս կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի ծնանելոց կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ամուսնութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի կուսութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի պատերազմի կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի հաշտութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ճանապարհորդութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի տանն կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ծովու կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի ցամաքի կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ծերութեան կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի մանկութեան կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ձմերայնոյ կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի ամարայնոյ կամաց կարծիցես , ի ժամ ուր ի գարնանային կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի աշնանային կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ցանկալի կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի ոչ ցանկալի կամաց կարծիցես , ի ժամ ուր ի ցաւոց կամաց կարծիցես , եւ ի ժամ ուր ի ոչ ցաւոց

գործութեան, է ամենևին կատարեալ. զի որպէս կարողութեին 'ի մէջ բերէ զանկատարութեի, նոյնպէս ներգործութեին 'ի մէջ բերէ զկատարելութեի. ապա։ Այս առաւել ևս յայտնի լինի 'ի հետագայ լուծմանն, և յորոց ունիմք ասել 'ի ճառս անսահմանութեան այ։

Խնդրի երկրորդ. Ընդեօք ամ իրաց կատարելութիք իցեն յաճ։

Պատասխանեմ. Այո՝։

Յուցանի նախ՝ 'ի սմ գրոց. Սաղ. ղէ. 9. Ամէն. Որպէս ալէ լեռ որ պնդեսցի յաւիտեան, ինչն ոչ լռեսցէ, պ.ք. բոլ. կայ, կամ որ ապրեցի պալն, ինչն ոչ պրեսանիցէ։ Սիր. իէ. 25. Այնո շնորհէ ամ ճանապարհի, և ճրէ խոբտութի. չնո ամ յոյս կենաց, և պօբութի. Հռոմ. ժա. 36. 'Ի նմանէ, և նովա, և 'ի նոյն ամ։ Նա այլոյր։

Յուցանի երկրորդ՝ բանիւ. Որ ինչ միանգամ Անդ. կատարելութի է 'ի գործն՝ պարտի լինել յաւարտչական պատճառն նի. կամ ըստ նոյն բանի, եթէ իցէ պատճառ փաղանուն. որպէս մարդն ծնանի զմարդ, կի գերագոյն եղանակաւ, եթէ իցէ պատճառ հոմանուն, և 'ի վերագոյն կարգի. որպէս ջերմութեին կերպական արտադրեալ յարեգակնէ է գերազանցապէս զօրութի յարեգական, զի ոչ ոք տայ զոր չունի կերպականապէս, կամ գերազանցապէս. իսկ արդ՝ ած է առաջին պատճառ արարչական ամ իրաց. ապա։

Յուցանի երկրորդ. Ած ունի զամ լրութի Անդ. գոլոյ. Ապա ունի զկատարելութիւնս ամ իրաց։ Այստ է հետևուիս, զի ամ կատարելուի է կատարելութի գոլոյ, կամ ամ կատարելութի հայի 'ի գոլ ինչ. որպէս արդարութին տայ զգոլ արդար. բարութին զգոլ բարի. ըստ այսմ և որ ունի զլրութիւն գոլոյ՝ ունի զամենեցուն կատարելութիւնս։

Յուցանի առաջ. Ած է ինքն գոլն ըստ ինքեան

նո-

ենթակայացեալ էապես և յիւրմէ. իսկ արդ՝ որ է ինքն գոլն ըստ ինքեան ենթակայացեալ էապես և յիւրմէ, ունի զամենայն լրումն գոլոյ. զի չէիք ինչ, յորմէ մարթ իցէ սահմանաւորիլ. ապա։

Լանդրի երրորդ. Օհարդ կատարելութիք ամենեցուն են յած։

Յառաջ քան զպատասխանին պարտ է նշանակել զոր յառաջն յիշատակեցաք. պ. ա. նախընվճ. թէ կրկին են ազգք կատարելութեց։ Ոմանք ասին պարզապէս պարզ. իսկ ոմանք պարզ միայն, կամ ըստ իմիք։ Կատարելութիւն պարզապէս պարզ առ հասարակ սահմանի յածաբանից. յետ սմին Անսելմոսի. գլ. ժգ. առանձնախօս. Որ է քօրէգոյն նոլա՝ չան ասանդ նէ՝ այս է. զոր ունելն լաւագոյն է իւրաքանչիւր էակի ըստ որում էակ, քան չունել զայն. զիրօրինակ կեանք, բարութիւն, իմաստութիւն, արդարութիւն. ԵՒն. ասացաք ըստ որում էակ, և ոչ ըստ որում է այս, կամ այն էակ. զի թէպէտ՝ օրինակ իմն, քարին ըստ որում քար ոչ է լաւագոյն կեանքն. զի այսոքիկ եղծանի էութիւնն նր. սակայն նմա ըստորում էակ՝ լաւագոյն է։ Արդ՝ կրկին պայման պահանջի առ կատարելութիւն պարզապէս պարզ։ Նախկինն է, զի զոչինչ անկատարութիւն յիւրում կերպական իմացման փակիցէ։ Երկրորդն է, զի ի նոյն ենթակայէ ոչ արտաքսիցէ զայլ կատարելութիւն մեծագոյն, կամ հաւասար. ապա թէ ոչ՝ ոչ լինիր բարեգոյն ունելն զայն՝ քան զչունելն։ Կատարելութիւն պարզ միայն կամ ըստ իմիք, է, որ ոչ է բարեգոյն նուաւ քան առանց նր. ուստի և պակասի ի միոյ յերկուց աստի նշանակեալ պայմանաց, այսինքն՝ կամ յիւրում կերպական իմացման փակէ զանկատարութիւն ինչ, զիրօրինակ շարժիլ, տրամաբանել, լինել մարմին, զգայական, քանակ, դուննաւոր, և այլն։ Կամ ոչ ընդունի ընդ իւր ի նմին ենթակայի զայլ կատա-

թելութիւն ինչ մեծագոյն, կամ հաւասար. վասն և ոչ լինի բարեգոյն ունելն զայն քան զչունելն։ Ա՛ց յետին այսր պատճառի առնչութեանն յաճախին ոչ առ այլ կատարելութեանց պարզապէս պարզ. ոչ զի զանկատարութեանն վասկէ՝ այլ զի ոչ ընդունի ընդ իւր ի նմին անձին զայլ առնչութիւն հաւասար կատարելութեան, զրօրինակ հայրութեան զորդիութիւն. նմին իրի և ոչ լինի բարեգոյն ունելն զհայրութիւն, քան զչունելն զայն. զի որդին որ չունի զայն՝ է հաւասարապատիւ և կատարելակից հօր։

Նա և դիտելի է, զի ինչ կարէ պարունակիլ յայլում բազմապատիկ. Նախ՝ կերպականապէս, կամ ըստ իւրում կերպական բանի. որպէս ջերմութիւնն պարունակի ի հուրն, հոգին ի մարդն։ Երկրորդ, զօրութիւն, յորժամ միևն ունի զօրութիւն որ ինչ կատարելութիւն է ի պարունակեալ իւրում։ Երրորդ՝ յայնժամ համարի ունել զայն զօրութիւն, յորժամ կամ զիւրն զոր ասեմք պարունակիլ՝ կարէ արտադրել, որպէս տունին պարունակի ի սերմն. գործն ի պատճառն, կամ յորժամ իւրովն կարէ տալ զայլ, զոր ինչ կարէ տալ պարունակեալն. որպէս կերպական ջերմութեի հրոյ պարունակի զօրութիւն յարեգական։ Երրորդ, գերազանցապէս, յորժամ միև պարունակի յայլում կատարելագոյն եղանակաւ քան թէ իցէ ինքեան, և այս կամ գերազանցաբար կերպականապէս, որպէս զգայականն ի բանական հոգին, կամ գերազանցապէս զօրութիւն. որպէս ջերմութեին յարեգական։ Այսպէս ամ ծանուցեալ։

Պատասխանեմ առ Լընդկրդ նախ, ամ կատարելութիւք ստեղծուածոց պարզապէս պարզ են յաճ կերպականապէս գերազանցաբար։

Յուցանի առաջին մասն. Ոչ է ամենևին և յանսահմանս կատարեալ. ապա պարտ է նմա պարունակել զամ կատարելութիւս, որք ըստ ինքեան

ջոչինչ անկատարութիւն փակեն յինքեանս , որպէս
սի են կատարելութիւնք պարզապէս պարզք . զի և
թէ ՚ի միոյ պակասէր , չէր ամենևին և յանսահ
մանս կատարեալ : Աստատի , պարզապէս պարզ
կատարելութիւնք ստորոգին զնոյ կերպականապէս . զի
ասի ըստ կերպական իմացուածոյ . ոճ է իմաստուն ,
ոճ է բարի , որպէս ասի մարդն է զգայական . Ա-
պա պարունակէ զնոյնս կերպականապէս :

Ա՛նկնի երրորդ մանն . Կատարելութիւն պար-
զապէս պարզ ՚ի ստեղծուածս , զնորօրինակ իմաս-
տութիւն , կրկնակի կարէ մտածիլ . Նախ՝ ըստ-
բուամ է ստեղծեալ յոյս անհատ : Երկրորդ , ըստ
ինքեան , և ընդհանրապէս , ըստորոգեալ վերացու-
ցանի ՚ի ստեղծականէ , և յանստեղծէ : Նախկին
օրինակաւ նկատեալ սահմանաւորի առ որոշ ինչ
սեռ , կամ տեսակ , զի է պատահումն , և որակու-
թիւն այսպիսի , կի այնպիսի տեսակի . և ըստ այսմ
ոչ է կատարելութիւն պարզապէս պարզ , և ոչ է
կերպականապէս յոճ , այլ զօրութիւն միայն ըստ ի-
մացուածոյ հետագայ պատասխանւոյս : Իսկ երկ-
րորդ օրինակաւ մտածեալ , վերացուցանի ՚ի սահ-
մանաւորութէ սեռի , և տեսակի , և ՚ի մէջ բերէ
միայն զճանաչումն ՚ի ձեռն բարձրագոյն պատճա-
ռի . և ըստ այսմ է կատարելութիւն պարզապէս
պարզ , և է յոճ կերպականապէս : Ա՛րդ՝ յորժամ
ասեմք , թէ պարզապէս պարզ կատարելութիւնք ստեղծ-
ուածոց պարունակին յոճ կերպականապէս , ոչ է
պարտ իմանալ թէ յոճ ունին զայն գոլն ստեղծա-
կան , և անհատական , զոր ունին ՚ի ստեղծուածս .
որպէս թէ ոճ իցէ իմաստուն ստեղծական իմաս-
տութէ մարդոյ , այլ թէ են ՚ի նմա ըստ իւրեանց
կերպական բանի ընդհանրապէս իմացելոյ , ՚ի բաց
առեալ զսահմանաւորութէ սեռի , և տեսակի , այլ
և ազնուագոյն և բարձրագոյն եղանակաւ . Ա՛պա
կերպականապէս գերազանցաբար : Եւ յայսմանէ

վե-

վերագոյնդ ասեալք ընդ Օգոս. գիրք. Ե. 'ի վերայ երր. և գԼ. ա. Ընծ է անորակ բարի , առանց դրից ներկայ. ևն :

Պատասխանեմ երկրորդ. Կատարելութիք ըն իմիք , որք են այսպիսի մի անկատարութեն ոչ են յած կերպականապես , այլ միայն գերազանցապես զօրութիք :

Յուցանի. Ընդհնար է իմիք անկատարութեն լինել յած կերպականապես. մի զի է հակ ամենակատար. իսկ արդ՝ կատարելութիք ըստ իմիք , զորոց խօսիմք , փակեն 'ի կերպական իմացման իւրեանց զանհրաժեշտ անկատարութեի , որպես ենթէ հրաժարեցուցես 'ի տրամաբանէն զանկատարուէն , զոր ինքն փակէ , ոչ մնայ տրամաբան , և ոչ մարդն մնայ մարդ : Արդ՝ այսպիսի կատարելութիք ոչ են յած կերպականապես : Նա և այս , զի թէ էին յած կերպականապես , կարէին ստորոգիլ զնոյ , և այնպես մարթ էր ճշմարտիւ ասել. Ընծ է բանական , զգայական , առիւծ , քար , ևն :

Այլ են յած գերազանցապես զօրութիք. 'Նախ' զի ոչ իւրմէ միայն , և կատարելագոյն եղանակաւ կարէ տալ զնոմ , զոր ինչ կարէ տալ 'ի ձեռն նոյ : Երկրորդ , զի է նոյ պատճառ , ըստ որմ տարբերութենց նոյ ոչ միայն սեռականաց , ոչ արեգակն է պատճառ ենթալուսնեայց յորս ազդէ , այլև թռչականաց , զի է պատճառ և ընդհանրագոյն բոլոր էակին. և այս բան էակի փակի գերազանցապես յամ ասրբերութիս : Արդ՝ որ ինչ միանգամ է 'ի գործն , հարկիւ յառաջագոյն գոյ զօրութիք 'ի պատճառն , որպես ասացաք , և այն կատարելագոյն եղանակաւ ենթէ իցէ պատճառն հոմանուն , և 'ի վերագոյն կարգի , որպիսի է յած : Ապա ըն իմիք կատարելութիքն ստեղծուածոց պատճառական յած զօրութիք գերազանցապես : Աստ Օգոս. ճառ. ա. յաղագս բանից առաքելոյն , ասէ.

Գ՛նբ-ալանդ չան պ՛ալ ուրբ՛անաձա ի-ը . . . . պ՛ի նրի-
խանգրկյա-ս պ՛եձա-ուրի՛ն , ձեձագոյն ե , նրի-ն պ՛ենբ՛ե-
ֆ-ուրի՛ գենբ՛եկյագոյն ե , նրի-ն պ՛ասպ՛ըա-ուրի՛ , չասպ՛ը-
գոյն ե . . . . չանգ՛ն ալ՛ի-ը ե-ան նենբ՛ն , պ՛ի ապատաձն
ապատ՛ի-ն ի-ա-մ հա-ատասպ՛ենագ՛ն , ֆամ գ՛ոբձն ապհի-ա-
պա-ուրի-ն ե-ասպ՛ե-ատենագ՛ն : Ապ՛ենա ե-ինի-նբկյե-ալ ի-ի-ն ՝ի
Ա-անբգատբ՛ն . (Համատ. ժ՛ք.) Որ ապատ պ՛ըա-ուրա ,
պ՛ըա-ուրագոյն ե . ե- ոբ ապատ պ՛ենբ՛ե-ակյի-ո , գենբ՛եկյ-
ֆագոյն ե չան պ՛ին :

Ասիցես ընդդէմ առաջին մասին . Այն Ծով. ատար. խն. ժ՛ք. առ ի՛. բոլ. ասէ , թէ ա՛ծ բաղ-
դատի առ ա՛մ ստեղծուածս յինքեան պարտունակելը .
որպէս մարդն առ կենդանին . և որպէս թիւն վե-
ցեակ առ անկատար թիւն ընդ իւրև պարտու-
նակեալս . իսկ արդ՝ մարդն կերպականապէս պա-
րտունակէ զկենդանին , և թիւն վեցեակ զայլ ստո-
բին թիւն . ապա :

Պատասխանեմ զան. զմեծ . Եթէ ոչն ցու-
ցանէ զհանդիտուԹի՛ ինչ , ընդունիմ , եթէ ցու-
ցանէ զհանդիտուԹի՛ ա՛մ իրօք , ուրանամ : Արդ՝
սա՛ վարդապետն ո՛չ առնէ յայսմ հանդիտուԹի՛ ,
Թէ որպէս մարդն պարտունակէ կերպականապ զկեն-
դանին , և թիւն վեցեակ զայլ ստորինս , այնպէս
պարտունակէ ա՛ծ կերպականապէս զա՛մ ստեղծուածս .
ապա Թէ ո՛չ՝ մարդ Էր զա՛մ ստեղծուածս ստորա-
գել զա՛յ , ասելով , ա՛ծ է կենդանի , որպէս ասեմք ,
մարդն է կենդանի , զոր ո՛չ երբէք էած զմտաս
սա՛ն Ծովմաս , մանաւանդ յայտնապէս հաստատէ
լինել անհնարին , ստորև . խ. ժ՛ք. առ է. բոլ. ուր
ասէ , և ցուցանէ , Թէ անհնար է ինչ ապորոշել
զա՛յ , ե- զպրեղծուածոյ փոքանո-ւնոպէս : Ա՛յլ յայսմ
առնէ զհանդիտուԹի՛ , Թէ որպէս մարդն պարտու-
նակէ զկենդանին , և ինն ասելի . զ՛որօրինակ Թիւն
վեցեակ պարտունակէ զստորինս , և ինն ասելի . սոյն-
պէս և ա՛ծ պարտունակէ զա՛մ ստեղծուածս , և ան-

սահման առնլն , վերացուցանելով յիշանակէն պա-
րունակելոյ , և այս շատ էր դիտման նը։ Ար-
գի ցուցանէ անդէն , թէ ած ճանաչէ զնմ թուա-
կան կատարելութիւս ստեղծուածոց։ Ընդ՝ առ այս
ուչ պահանջի՝ թէ զայնս կերպականապէս պարու-
նակեսցէ , այլ շատ է թէ պարունակեսցէ զայնս
զորութիւնբ դերազանցապէս։

Ընացաք ի պատասխանին . Ոչ ինչ հոպա-
կելի-ինչն , որ էն այսպիսի վը անհոպարա-
ղի ոդք են այսպիսի վը ուչ ընդունելոյ ընդ իւրեանս
զայլ հատուսար , կամ զմեծագոյն , որպէս առնչու-
թիւնքն . են յած կերպականապէս։

Ասդրի Հոյրորդ . Ոդնօք ած , և ամ ստեղծ-
ուածք միանդամայն , ինչն կատարելագոյն ինչ , և
բարեգոյն քան զած միայն։

Պատասխանեմ . Ուչ . Օչնետ դայ յասացե- Ի ՀԵ.
լոցս , զի եթէ ած պարունակէ գլխովին զնմ կա- զան . ԸՂ .
տարելութիւս ստեղծուածոց , և այն գերազանցա- ԽՆ . ՀԸ . ԱՐ .
գոյն եղանակաւ . Ընդ որպէս ուչ է անկատար ՀԵ . Ե . ՝ի
առանց նդ , սոյնպէս և ուչ նորօք կատարելագոյն ՄԸ ՀԱՐԻ .
Հաստատի , անսահմանն յաւելմամբ սահմանաւորի ՊՀ . ԱՀ . ԱՐ
ուչ լինի մեծագոյն , այլ կատարելութիւնն այ է ան- ՀԵ : ԱՀ . ՀԸ .
սահման . իսկ կատարելութիւնք ստեղծուածոց են ԽՆ . ԼԸ .
սահմանաւորք : Ուստի Օգոս. ճառ. ժա. ի վը ՊՀ . ՀԵ .
Յովհ. ասէ . Լինէ լինելիս առանց այ , ինչպէսցն
եղելիս , եւն լինելիս ընդ այ , ուչ եղելիք ած ստե-
ղծող . ուչ նա ի չէնն ստեղծոյն , այլ պրա առանց
նորա ինչպէսցն։

Սակայն ած և ստեղծուածք են բազում իրք ,
և բազում ունակք կատարելութեն : Ունկ ումանք Ի ՀԵ .
համարին , թէ մարթ է ասել , թէ ած , և ստեղծ- զան . իՀԵ .
ուածք են կատարելագոյն ինչ պատճառեաբ , քան ԽՆ . ԱՐ .
թէ ած միայն , այլ անյատկապէս : Ընդդէ կո- Ա . ԱՀ . ՀԵ .
պրնէլպեոնդ յատկապէս նշանակէ զաստուածն ,
և ուչ զստուածութիւն :

Խնդրի հինգերորդ. Արդեօք ստեղծուած ինչ կարիցի՞ լինել նման այլ :

Անդ. պ. ձ. բոլ. Պատասխանեմ. Ամ ստեղծուած է ըստ իւրաց ինչ, այսինքն է, անկատարապէս նման այլ :

Անդ. Յուցանեմ. Նմանութիւն նկատի ըստ համաձայնութեան, կամ ըստ հաղորդութեան՝ ի կերպն, ուստի և նմանութիւն է այնպիսի, որպիսի է կերպին հաղորդութիւն, և համաձայնութիւն. իսկ արդ՝ ամ ստեղծուածք ըստորում են էակք յիմիք հաղորդին այլ, ոչ ըստ փաղանուն բանի տեսակի, կամ սեռի, ըստ որոյ կատարելագոյն լինէր նմանութիւն, այլ ըստ համեմատանուն բանի էակի. զի որպէս այծ է էակ իւրով եղանակաւ, այսինքն էութիւն, նոյնպէս և համեմատաբար ստեղծուածք են էակք իւրեանց եղանակաւ, այ հաղորդութիւք, և նմանակցութիւք այլ : Այլ այնք, որք կատարելագոյն են ի գոլն իւրեանց, կամ ի բազում աստիճանս, զիրօրինակ են խնդրական ստեղծուածք, են առաւել նման այլ : Արդ՝ զայսմանէ անկատար նմանութիւք պարտ է իմանալ զայն գիրս, յասել անդ իւրում, թէ արարաւ մարդն ըստ նմանութիւն այլ. Ծննդ. ա. և ե. և Ցակ. գ : Իսկ զկատարեալ նմանութինէ պարտ է իմանալ. յորժամ ասէ թէ չիք ստեղծուած ինչ նման այլ. որպէս Սաղ. լը. լթ. և կ :

Անդ. առ. և ել. իբ. ի վերայ ձեռ. պ. է. առ Ժա. Իսկ թէ արդեօք մարթ իցէ փոփոխակի ասել, թէ այծ նման է ստեղծուածոյ, պնեմ, ոչ. վասն զի յայնժամ է միայն առնչութիւն փոխադարձ, և հաւասար ի նմանութեան, յորժամ երկուքն ունին զկերպ, յորս է նոյն բան, և ինքեանք են ի նոյն կարգի : Ապա յորժամ ոչ ունին զայս, այլ միւն միայն ասի նման այլում, զի ըստ իրաց ինչ նմանի այնմ, որպէս գործն հոմանուն պատճառի, կամ պատկերն սկզբնատիպին, յայնժամ ոչ է առ միմեանս առնչութիւն նմանութեան. որպէս թէպէտ ասի այս պատկեր նման կայսեր, սակայն ոչ լինէր ու-

ուղիղ ասել, թէ կայսրն է նման այսմ պատկեր, կամ որպէս ասէ Օդոս. գիրք. ի. առանձնախօս, գլ. չ. Ո՞վ էիցէ, որ 'ի հայելին հայիցի. և ո՞ղջո՞ւն ասիցէ, ևս ինձն իցէ նման այնմ պատկերի, և ո՛չ յառնաւոր ևս նա ինձեան. Ասկ արդ՝ այսպէս է յաճ. ապա։

ՊՐԸԿ. Գ.

'Ի վերոյ բարոյ առ հասարակ։

Աբն Թոմ. ա. Ե.

Նդրի նախ. Յորում աւրհնօք որոշակի կայանայցէ կերպական բան բարւոյ։

Ամենք դնեն զայն 'ի կատարելութեն, այլք 'ի բաղձալիութեն. զերկսքանչիւրն ասէ սէն Աւովմաս. աստ. պ. ա. բոլ. և այլուր դնէ 'ի բաղձալիութեն. ասէ. Նոյն բարոյ կայամ կայանայ, ևս ինն իցէ բաղձալի։ Եւ զսորին հակառակն՝ անդ. առ ա. և 'ի ստորև. պ. ե. բոլ. ասէ. Նոյն բարոյ կայանայ 'ի կատարելութեն։ Այն ևս պատճառք երկոցուն ևս կողմանն։ Ընտ միում նախ, եթէ իմիք պակասիցէ ինչ, որ առ նէր ամբողջութեի, կամ առ կատարելութեի պահանջի, ասի չար։ Ընդ բարութիւնն կայանայ 'ի կատարելութեն, կի՛ յամբողջութեն. զի բարի ասի հակադրութեի առ չարն։ Երկրորդ, այս պատճառական է ճշմարիտ. վճակ է բաղձալի, վճակ է բարի։ Ընդ բան բարւոյ յառաջագոյն է քան զբան բաղձալւոյ։ Երրորդ, բաղձալիութեին է արտաքին յարանձանութեի յառաջ եկեալ 'ի բաղձանաց. որպէս տեսանելիութեին 'ի տեսողութեէ։ Ընդ յառաջ քան զյարանձանութեիւնն պարտ է նախենթադրել զբան բարւոյ, որ ոչ կարէ լինել այլ ինչ բայց եթէ կատարելութեի իրին յիւր գոլն։ Ասկ ըստ միւսումն, նախ՝ եթէ բարութեին էր կերպականապէս կատարելութիւն, սէն Աւովմաս յետ

ճառելոյ զկատարելութենէն այ , վայրապար յաւելեալ էր զայս , և զհետագայ խնդիրն , որ ’ի վեր բարձրեալ էր այ : Երկրորդ , կատարելութեան էակի ’ի գոյն իւր է նորա կացուցիչն : Իսկ բարին , որ ի յատկութեան էակի , որպէս ճշմարիտն և միւն , ոչ կացուցանէ զէակին , այլ ենթադրէ կացուցեալ : Այսմանէ երկուստեք ևս առաւելու գժուարութենէն : Օր բարութենէն որպէս ասացաք , է յատկութեան էակի . և յատկութենէն պնդուի յաւելուլ ինչ յէութենէն , որոյ է յատկութիւն : Այլ ոչ երևի , թէ զինչ յաւելուցու բարութենէն էակին : Վասնզի ոչ կարէ յաւելուլ իրական ինչ , զի ամ իրական պարունակի ընդ էակաւ , և ոչ զէակ բանի , ապա թէ ոչ էակն լինէր բարի կեղծեալ , և ոչ իրական :

Եթէ ասիցես վ առաջնին կարծեաց , թէ յաւելու զառնչութենի բաղձալուութեն : Այլ է ընդէմ , այն առնչութիւն կամ է իրական . և կամ բանի : Օրն և ասիցես , երկաքանչիւրոցն ևս ընդդէմ եղանէ անպատշաճութենի : Նա ևս , եթէ իցէ իրական , կամ է ստորոգութենական , և կամ դերազանցական : Ոչ է ստորոգութենական . ապա թէ ոչ ստորնադոյն լինէր քան զէակն , վ զի է մի ’ի ստորոգութեց . և այսպէս ոչ կարէր լինել յատկութենի էակի ընդհանրապէս առելոյ . և այն զի և ինքն է բարի ինչ : Ապա ոչ է կերպական բարութենի , որով ամ ինչ է բարի : Նա ոչ կարէ լինել իրական առնչութենի գերազանցական : Ապա զի իրական առնչութենին գերազանցական ոչ զանազանի յիրէն , այլ է նոյն իսկ իրն կարգեալ : Երկրորդ , զի ոչինչ յատարերի գերազանցապէս առ այլ , բայց եթէ որ կախի զայնմանէ , քանզի նոյն իսկ առնչութենին է կախումն ինչ . ըստ այսմ ոչ ոչ յատարերի իրապէս առ ստեղծուածս , այլ բացի միայն , զի ոչ կախի ’ի նոցանէ . բայց ստեղծուածքն յատարերին առ նա . զի կախին զնմանէ :

Նոյն-

Ս. ԹՈՄ. ՔՎԻՆ ՃՇ. ՊՏ. Ա.

"Այնպէս գիտելին նկատմամբ գիտութեան, զգալին նկատմամբ զգայութեան, և ամ որ է իրը չափ և չափեալ. կատարիչ, և կատարելի. իսկ արդ՝ բարին իրը վախճան բաղձալի է չափ, և կատարիչ բաղձանաց. որպէս գիտելին է չափ գիտութեան, և զգալին զգայութեան, և ոչ անդրադարձեալ, ուստի ոչ կախի զբաղձանաց, այլ բաղձանքն զնմանէ. վասն ոչ յարաբերի իրապէս առ բաղձանս, այլ բանիւ միայն, որ վասն իրապէս յարաբերելոյ բաղձանացն առ բաղձալին, ըմբռնէ զբաղձալին. որպէս թէ և նա՝ նմանապէս յարաբերի առ բաղձանս, յորմէ ծագի միայն առնչութեան բանի:

Ըստ միաբանութեան երկաքանչիւր կարծեացս, և առ լուծումն այսոցիկ դժուարութեանց, գիտելի է, զի կատարելութեանն կրկնակի կարէ նկատիլ. 'Առաջին' 'ի սեռի կերպական պատճառի: Պարզեալ յայտ է թէ կատարելութեանն կերպականաւք կացուցանէ զնոյն կատարեալ 'ի գոլ իւր, զի իւրաքանչիւր ինչ կացուցանի ներգործականութեամբ իւիք, և ներգործականութեանն է կատարելութեամբ: Երկրորդ, 'ի սեռի վախճանական շարժիչ, և յանկուցիչ պատճառի: Պարզեալ որպէս և յայտ է, կատարելութեանն շարժէ և յանկուցանէ զբաղձանս իրը համաձայն ինչ նմին, և կատարիչ նոր, զի ամ ինչ բաղձալ իւրում կատարելութեանն: Այս յառաջագոյն ծանուցեալ, առ լինդիրն:

Պատասխանեմք. Կերպական բան բարւոյ կայ անայ 'ի կատարելութեանն ոչ իրը կացուցիչ էակի, այլ իրը համաձայն բաղձանաց, և կատարիչ նոր. (կերկաքանչիւրն ասէ սրն Յովհաննես.) քանզի որում բաղձալի, և վախճանաւորիչ: Եւ այսպէս բան բարւոյ կերպականապէս կայանայ 'ի կատարելութեան, և 'ի բաղձալիութեան: Արդ՝ այս բաղձալիութեան թէ պէտ մեկնի առնչութեան բանի առ բաղձանս, և չէ հնար ըմբռնիլ 'ի մէնջ առանց նոր. զի է իրը կա-

Աղբ. և Ե. վերայ ծն. պ. ա.

տարելութի՛ն ներ , և այն յարաբերի առ նա , սակայն ո՛չ կայանայ կերպականապես յայսմ առնչութեան , այլ յայն , որ է հիմն ներ , և ասի արմատական բաղձալեութի՛ն , որ ո՛չ զանազանի իրօք ՚ի կատարելութի՛ն , այլ միայն ըստ զանազան ըմբռնման , և հայեցման . որպես թէպէտ ամենակարողութի՛ն այ ո՛չ ըմբռնի ՚ի մէնջ առանց հայեցման բանի առ ստեղծուածս , սակայն ո՛չ կայանայ յայն հայեցումն , այլ յայն որ է հիմն ներ :

Պատճառ պատասխանելոյս է , զի բարին պարտի լինել յատկութի՛ն էակի , և պատշաճիլ նմա ըստ որում է կատարեալ : Ընդ՝ երկաքանչիւրն ևս պահի , կացուցանելով զնա կերպականապես ՚ի կատարելութե՛ն , ո՛չ իբր կացուցիչ էակի , այլ իբր կատարիչ բաղձանաց , ըստ որում բաղձալի վախճանաւորիչ : Վասնզի այսուհիկ պահի բան կատարելոյ , որպես յայտ է , ևս և բան յատկութե՛ն . քանզի բան կատարելոյ ըստորում կատարեալ , և եղերիչ բաղձանաց , ըմբռնի ղՀնտ հրթալ բանի կատարելոյ ըստորում կացուցչի :

Եթէ ասիցես , թէ յատկութի՛ն պարտի զանազանիլ իրապես յէութե՛է որոյ է յատկութի՛ն : Իսկ կատարելութի՛ն ըստ որում կատարիչ ո՛չ զանազանի իրապես ՚ի կատարելութե՛է իբր ՚ի կացուցչէ , այլ բանիւ և եթ :

Պատասխանեմ , թէ ո՛չ պահանջի մեծագոյն ևս զանազանութի՛ն և չէ իսկ հնար լինել ՚ի մեթաֆիզիկական , և ՚ի դերազանցական յատկութի՛ս էակի . զի ո՛չ կարեն զանազանիլ իրապես յէակէ ընդհանրապես առելոյ . վ՛ն զի որպէս յառաջն ասացաք , ինքեանք իսկ են էակք , վ՛ռկ ո՛չ են յատկութի՛ք այնպէս ճշդիւ , և ըստ այնմ զանազանութե՛ան , որով ֆիզիկական յատկութի՛ք մասնաւոր էակի զանազանին ՚ի նմանէ . որպէս ծիծաղականութե՛ւնն ՚ի մարդոյ . և այսպէս ո՛չ յաւելուն յէակն ,

ոչ իրական ինչ, և ոչ իմն բանի. այլ են նոյն իսկ
էակին պէսպիսաբար ըմբռնելոյ, և հիմնիւ պէսպէս
ըմբռնմանց բանի. որպ լուծանէ սքեն ֆիւով. յա-
ռաջնում. պր. այսր խնդ. և այսուհիկ վճարեմք թա-
խանձանացն յերկուց կողմանց յառաջարկելոց:

Յասացելոցս ունիս մակաբերել նախ, թէ Աստ.
էակն յառաջագոյն է քան զբարին, զի պ.ք.բոլ.
յառաջագոյն իմանամք զէակն քան զյատկութին, ո-
րոյ վհետ գայ. իսկ բարին բաղդատի առ էակն իբրև
յատկութի ըղձութ՛ի նմանէ զանազանեալ, և նր
վհետ եկեալ:

Երկրորդ, ունիս մակաբերել ընդդէմ Անանի- Աղբ.
քեցւոց, թէ ամ էակ ըստորում էակ է բարի. ա.բ.
զի ամ էակ ըստորում էակ է՛ի ներգործութի.
ուստի և ըստ իրաց ինչ կատարեալ, զի ամ ներ-
գործութի է կատարելութի ինչ: Իսկ արդ՝ կա-
տարեալն ունի զբան բարւոյ, ոյ ասացաք. ապա
և՛ն. ուստի. Ծննն. ա. լա. Նայեա ած վամ զոր ա-
ղոք, և ահա քաջք են յոյժ. Նմ ա. Տիմոթ. գ. բ.
ամ ապաւածք այ քաջք են: Յորմէ վհետ գայ և այն,
թէ որք են միայն էակք՛ի կարողութե, որպէս
կարկղիքն և նիւթն առջին են և բարի միայն՛ի կա-
րողութե, և թէ մանիքեմաթիգականք ըստորում
վերացուցեալք՛ի գոլոյ, ՛ի շարժմանէ, և՛ի զգա-
լի նիւթոյ ոչ են բարի: Զորմէ տես ընդարձա-
կագոյնս՛ի Այսետանոս. յայսմ յօդ. առ առաջին
տարակոյն, ՛ի Յովհաննէս Թովմայեան. աստ. վիճ.
գ. պր. բ:

Սակայն գիտելի է, զի թէպէտ ամ էակք են Աղբ.
բարի, և են նոյն ըստ իրին. այլ վ զի ըստ բա- պ.ա.առ
նի տարբերին, ոչ նովին եղանակաւ ասին էակ պար- ա.
զապէս, և բարի պարզապէս: Ասի էակ պարզա-
պէս ըստ առաջին գոլոյ, որ է գոյացական. ասի
բարի պարզապէս ըստ վերջին գոլոյ: Որոյ պատ-
ճառն է, զի որովհետև էակին ցուցանէ զինն յատ-

կա-

կապես լինել ՚ի ներգործութեէն. իսկ ներգործութիւն յատկապես ունի զկարգ առ կարողութէի, ըստ այնմ ասի իմն էակ պարզապես, ըստ որում նախ՝ որոշի յայնմանէ, որ է ՚ի կարողութեան, որ է գոլ դոյացական. իսկ ՚ի ձեռն ՚ի վը յատկեալ ներգործութեէդ ասի իմն գոլ ըստ իմիք. որպես գոլն սպիտակ նշանակէ զգոլ ըստ իմիք, զի գոլն սպիտակ ոչ բառնայ զլինելն ՚ի կարողութէի պարզապես, վասն զի գայ ՚ի վը իրին, որ յատաչնամէ իսկ գոյ ՚ի ներգործութէի: Այլ բարին ունի զբան կատարելոյ ըստ որում բաղձալի, որով և զբան վերջնոյ: Ուստի որ է վերջնապես կատարեալ, ասի բարի պարզապես. իսկ որ ոչ ունի զվերջնին կատարելութէի, զոր պարտի ունել, թէպետ և ունիցի ինչ, ըստ որում է ՚ի ներգործութէն ոչ ասի կատարել պարզապես, և ոչ բարի պարզապես, այլ ըստ իմիք: Ապա ըստ այսմ ըստ առաջնի գոլոյն, որ է գոյացական, ասի իմն էակ պարզապես, և բարի ըստ իմիք, այս է ըստ որում է էակ, իսկ ըստ վերջնին ներգործութէնն, ասի իմն էակ ըստ իմիք, և բարի պարզապես:

Անգ. պ. Ե. բոլ. Արդարդ ունիս մեկնաբերել, թէ բարին ունի զբան վախճանական պատճառ. զի ունի զբան բաղձալոյ. քանզի բարին է, որպես վերադրյալ ասացաք, որում՝ ամենեքին բաղձան. իսկ վախճանն է այն, որ լինի բաղձացեալ:

Աստ. ի. է. պ. Ե. աբ. Ե. Վասնզի է, զի յորժամ ասեմք, թէ բարին է այն, որում՝ ամենեքին բաղձան, ոչ այնպես իմացեալ լինի, որպես թէ իւրաքանչիւր բարի յամենեցուն բաղձացեալ լինի. այլ թէ ամ ինչ, որ միանգամ բաղձացեալ լինի, ունիցի զբան բարւոյ, և ընդ բանիւ բարւոյ բաղձացեալ լինի:

Աստ. ի. է. պ. Ե. աբ. Ե. Վասնզի է զարձեալ, զի յորժամ ընդհանրապես ասի, բարին է իւր ծաւալիչ, և հաղորդիչ, ոչ իմացեալ լինի այս ըստ յատկութեան բառին,

ուս-

Ընդ.
պ.ե.բաշ

Յամաստ. ժա. իմ. Ոչ համով, ոչ հոտով, ոչ հյութով
ՀՐԴԵՑԵԼ: Արդ պատճառն է, զի որպէս ասացաք, իրաքանչիւր ինչ ասի բարի, ըստ որում է կատարեալ. և կատարեալ ասի, ըստ որում ոչ պակասի ինչ ըստ եղանակի իւրոյ կատարելութեան. իսկ իրաքանչիւր ինչ է այն, որ ինչ է իւրում կերպիւ. իսկ ապրի կերպն ինչ ինչ յատուկ ենթադրէ, և ինչ ինչ հարկիւ գնետ գայ նմին: Այսպէս ասացայս, զի իմն իցէ կատարեալ, և բարի, հարկ է, զի ունիցի զկերպ, և զնախենթադրեալսն, և գնետեւակս նմին: Այնուհետև զիտեր. իսկ արդ՝ յատուկ ջադոյն պահանջի ասէ կերպին բացորոշութեան, կամ չափակցութեան սկզբանց, եթէ նիւթականաց, և եթէ արարչականաց իւրոց. և այս նշանակի եղանակաւ ուստի ասի, թէ չափն պայմանադրէ զեղանակ: Իսկ կերպն նշանակի տեսակաւ, զի կերպիւ իրաքանչիւր ինչ կոչուցանի ի տեսակի. և վասն ասի, թէ թիւն տայ զտեսակ, զի սահմանք նշանակիչք տեսակի են իրրև թիւք. վն զի որպէս միութիւնն յաւելեալ, կամ ի բաց բարձեալ այլայլէ զտեսակ թուոյ. այնպէս և ի սահմանս տարբերութիւնն ի վեր յաւելեալ, կամ ի բաց բարձեալ: Ի բարձեալ, տեսակին գնետ գայ միաւումն առ վաճառն, կամ առ առնելութեմ, և կամ առ այլ ինչ պատճառ, զի իրաքանչիւր ինչ ըստորում է

’ի ներգործութեէ, ներգործէ, և ձգի առ այն, որ ինքեան պատշաճի ըստ իւրում կերպի, և այս վերաբերի առ կշիռն, և առ կարգն: Ապա բան բարւոյ ըստորում կայանայ ’ի կատարելութեան, կայանայ և յեղանակի, ’ի տեսակի, և ’ի կարգի:

Անդ. պ.ի.բար. Հինգերորդ ունիս մակաբերել, թէ բարին ըստ պատշաճի բաժանի ’ի համեստ, յօդտակար, և ’ի բերկրալի, զի որպէս ասացաք, բարի է ինչ ըստ որում է բաղձալի, և եզը շարժման բաղձանաց, արդ՝ որպէս շարժումն տեղական եզերի պարզապէս առ ինն վերջին, որ է կէտ իրն յոր ձգի, զորօրինակ տեղին, և կամ հանգիստն յայնմ իրի. և ըստ ինքեան առ մէջն, որով լինի գնալ առ վերջինն. (քանզի և այն է եզը շարժման, ըստ որում զմասն շարժման եզերէ.) նոյնպէս և ’ի շարժման բաղձանաց: Ապա այն ինչ որ է բաղձալի, և եզերէ զշարժումն ըստ իմիք իրրև մէջ, որով լինի գնալ առ այլ՝ կոչի օգտաւէտ: Իսկ այն, որում բաղձամբ իրրև վերջնոյ եզերողի բոլորովին զշարժումն բաղձանաց, եթէ իցէ իրն, յոր ըստ ինքեան դիմէ բաղձանքն կոչի հաճոյ. զի համեստ ասի այն, որ ըստ ինքեան է

Անդ. առ ա. ցանկալի: Իսկ եթէ իցէ հանգիստ յիրն ցանկացեալ, է բնաւրէք, ապա: Ունիս տեսանել, թէ այս զանազանութիւն է բարւոյ կրկնաբար, ըստորում բարի, և ոչ ըստորում հակ. զի ըստ այսմ

Անդ. առ բ. բաժանի ’ի տասն ստորոգութիւնս: Այս ևս՝ զանազանութիւնս է համեմատանուան ’ի համեմատանուանեալ իւր, զի բարին համեստ նախապետաբար է բարի, իսկ այլք են բարի բանիւ նորա:

ՊՐԱԿ. Գ։

Ի ՎԵՐԱՅ ԲԱՐՈՒԼԵՆ ԱՅ։
Աբեղ Թումա. խ. ջ.

Խնդրի նախ. Ընդեօք գոլն բարի պատշաճիցի այ։

Պատասխանեմ. Գոլն բարի պատշաճի մնա- նալանդ այ։ Այսպէս է ի սէր գրոց. Սաղ. ճԻԷ. Խոսպովան Երկրաւ գեն, զի բարի է. Նե պսլուր։ Որոյ պատճառն է, զի այն է բարի, որ է կատարեալ բաղձալի. իսկ արդ՝ ած է կատարեալ մեծապէս բաղձալի. ապա։ Յուցանի փոք. Ած է պատճառ ամ կատարելութենց որք են ի ստեղծուածս. իսկ արդ ամենեքին բաղձան կատարելութեան իւրեանց. ապա։ խ. ջ. պ.ա. բոլ.

Նոթ Խնդրեցես. Ընդեօք ամ ստեղծուածք իւրք բաղձան այ։ Պէտ, բաղձան գԷթ լինլեայն. զի ամենայն ինչ որոյ միանգամ ի ստեղծուածս բաղձան, է հաղորդութեի այ։ Ուստի որք երկին ի միոյ կողմանէ և ըստ իմիք խոյս տալ չայ, կամ ստելութիւ բերել առ նա, չայլմէ կողմանէ, և ըստ այլոյ բաղձան նման լռելեայն, զի բաղձան իմիք, որ է հաղորդութիւն այ. զորօրինակ գող, կամ բարեգոյն գող, զերծ լինել ի թշուառութեց, կամ այլ ինչ։ խ. ԻԲ. ի վր ՃՀԺ. պ.Ը. առ. Ը.

Խնդրի եկդ. Ընդեօք ած իցէ ծայրագոյն բարի։ Պէտ. Ընչո՞։ Յուցանի. Ամ կատարելութենք, և բարութիք ամ իրաց բղխեն չայ իբրև ի հոմանուն պատճառէ. իսկ արդ՝ գործն գերազանցապէս է ի հոմանուն պատճառն, քան թէ չինքեան։ Ո՞ն զի հոմանուն պատճառք արտադրեն զգործս, որք քան զինքեանս ստորին։ Ապա բարին է չած և գերազանցագոյն եղանակաւ, և վերկ ասի ծայրագոյն բարի։ Ասա. պ.Ը. բոլ.

Խնդ-

Խնդրի երրորդ. Ընդհանք գոլ բարի էութիւն ինչ յատկութիւն այ.

Անդ. Պատասխանեմ. Ընդ. Յուգանի. Իւրաքանչիւր ինչ ասի բարի ըստորում է կատարեալ, որպէս յայտ է յաստացելոցս: Իսկ արդ՝ ոչինչ ստեղծական էակի, այլ միայն այ պատշաճի լինել կատարեալ էութիւն. ապա: Ընդ. փոք. Երրեակ է կատարելութիւն իւրիք. Նախ ըստորում կացուցանի ի գոլ իւր ներգործութիւն: Երկրորդ, ըստորում ի մի նի յաւելիլ լինին պատահմունք ինչ հարկաւորք առ կատարել գործողութիւն իւր: Երրորդ, ըստորում հպի ի վախճան իւր. զի օրինակ առաջին կատարելութիւն հրոյ կայանայ ի գոլն, զոր ունի ի ձեռն գոյացական կերպի իւրոյ, որ դոյ ներգործութիւն: Երկն կայանայ ի ջերմութեն, ի թեթևութեն, ի չորութեն, և ի սոցին նմանս: Երրորդն է ըստ ըստում յիւրում բնական տեղւոջ հանգչի. իսկ արդ՝ այս երրեակ կատարելութեն, այսինքն է ներգործական գոյութիւն, ի մի յաւելեալ որակութիւնք, և ստացումն վախճանի, ոչինչ ստեղծուածոյ պատշաճի ըստ իւրում էութեն, այլ միայն այ, որոյ էութիւն միայն է իւր գոլն, կամ գոյութիւն, և յորոյ մի ոչ գոյ պատահումն ինչ, այլ որ ինչ ասի ճշմարտապատահաբար, նման պատշաճի էապէս, որպէս լինել կարող, խմաստուն, և այլ այսպիսիք, և որ ոչ կարդի առ այլ ինչ իբրև առ վախճան, այլ ինքն է վերջին վախճան ամի. ապա: Ուստի Ղուկ. ԺԸ. ասի. Ոչ ոք բարի, այսինքն էութիւն, քայց մի այ:

Աստ. Ա. Ե. պ. ա. բալ. Հաստատի. Իւրաքանչիւր ինչ է բարի ըստորում է կատարեալ. արդ՝ ցայնչափ է կատարեալ, ցորչափ է ներգործութիւն: Իսկ արդ՝ գոլ ներգործութիւն ոչ պատշաճի ստեղծուածոյ ինչ էապէս, այլ միայն այ. ապա:

Ասիցեն. Էութիւն ստեղծական իրի ըստ ինքեան նկատեալ է բարի իւրով բարութիւն զանազանեալ 'ի բարութիւն գոյութեան։ Ապա է բարի ըստ էութեան։ Այս. առաջ. Նախ՝ վն զի էութիւնն ըստ այսմ նկատեալ է էակ, զի ոչ է ոչինչ. ապա է բարի։ Երկրորդ, զի ըստ այսմ նկատեալ է բաղձալի, զի ոչ բաղձանք զորօրինակ լոկ գոյութեան առաջութեան, այլև նոյն իսկ առաջութեան։ Երրորդ, զի թէ չէր այսպէս, ապա մարդկային բնութիւնն չունէր 'ի ք՝ զսեփական և գաւեղծական բարութիւն, որպէս ոչ ունի զսեփական, և զստեղծական գոյութիւն։ Չորրորդ, 'ի ստեղծական էութիս, միևն է ըստ ինքեան բարեգոյն, և կատարելագոյն քան զայլս. և ըստ այսմ ասեմք, թէ մարդն էապէս է կատարելագոյն քան զձի. Ապա է ըստ ինքեան և էապէս բարի։

Վնեմ ընդունելով զառաջ. զորոյ զան. զհետև. Ապա է բարի ըստ էութեան. Եթէ ըստ գոյացանէ զբան բարութեան բաւական, անկախ յոմանէ և իցէ, ուրանամ. Եթէ ըստ գոյացանէ զբան բարութեան ինչ անբաւական անկախաւոյ, յոմանէ և իցէ, ընդունիմ։ Այդ՝ ընդունիմք թէ ստեղծական էութիւնն ունի զնուր բարութիւն. այլ ունի կամամբ 'ի գոյութէ, որ քաջայայտ ցուցանի այսպէս. իրն այնու եղանակաւ է բարի, որով է էակ. զի բարին է յատկութեի էակի. իսկ արդ՝ իրն ցորչափ ոչ ունի զգոլ 'ի բնութեն իրաց, ոչ է, և ոչ ասի էակ պարզապէս, այլ ըստ իմիք միայն. այսինքն 'ի կարողութեն. և զի պարզապէս ոչինչ է, և յորժամ ստեղծանի, ասի պարզապէս յոչնչէ արտադրիլ։ Ապա ոչ է, և ոչ ասի բարի պարզապէ, այլ միայն ըստ իմիք, և 'ի կարողութեն։ Ապա առ 'ի ասիլ բարի ներգործութեք և պարզապէ պահանջի գոյութէին դէթ իբրև պայման։ Այդ՝ գոյութիւն ոչինչ ստեղծական է էական, այլ այ միայն։

Յորմէ յայտ է լուծումն թախանձանաց: Օ՛ն առ առաջինն պատասխանեմ, թէ ստղծուածն, և էանն ըստ որում ներգործաւորեալ գոյութիւն է բարի պարզապէ. իսկ առանց գոյութեան որպէս է էակ՝ ի կարողութեան, նոյնպէս է բարի՝ ի կարողութեան: Նոյնպէս առ երկրորդն պատասխանեմ, թէ ոչ ենդրեմք սոսկ զգոյութիւն, այլ զկին, բայց ներգործաւորեալ գոյութիւն: Առ երրորդն պատասխանեմ, թէ բնութիւնն մարդկային՝ ի քո ունի զնիւթական բարութիւն ըստ որում ներգործաւորեալ, թէ ոչ մարդկային, զէթ ածային գոյութիւն: Առ չորրորդն պատասխանեմ, թէ մի էութիւն է բարեգոյն քան զայլս էապէս ներգործութիւն և պարզապէս, ըստ որում ներգործաւորի գոյութիւն, այլազգ է բարեգոյն ըստ իմիք միայն և՝ ի կարողութեան:

Ապիկեցես. Ումէ մինչև է գոյացեալ, իմացեալ լինի ամբողջ. և զայն իբրև այսպիսի սիրէ ածսիրով հաճութեան. Ապա անկախ՝ ի գոյութենէ է բարի:

Պատասխանեմ զան. զառաջ. Նութիւն մինչև է գոյացեալ, իմացեալ լինի ամբողջ առարկապէս և կարելաբար, ընդունիմ. իմացեալ լինի ամբողջ, էակապէս և պարզապէս, ուրանամ: Այսպիսի զան. և զհետև. Ապա անկախ՝ ի գոյութենէ է բարի, առարկապէս և կարելաբար, ընդունիմ. է բարի էակապէս և պարզապէս, ուրանամ: Այլ թէ արդեօք սիրէ ածսիրով հաճութեան՝ ի վիճակի կարելութեան, ասասցուք ստորև:

Ինդրի չորրորդ. Արդեօք ամ ինչ իցէ բարի ածային բարութիւն:

Ասա. ք.է.պ.է. զալ.

Պատասխանեմ, թէ իւրաքանչիւր ինչ է բարի ածային բարութիւն արտաքսապէս, և պատճառաբար, ըստ որում բարութիւնն ածային է պատճառարարչական, գաղափարական, և վախճանական համօրէն բարութեանց: Սակայն կեպականապէս, և

ներք-

ներքսագոյս իւրաքանչիւր ինչ է բարի նմանութիւն ածային բարութեան յինքեան յարելոյ. որ է կերպականապ իւր բարութիւն յարատեւականիչ նոյ։ Այս պես է մի բարութիւն ամենեցուն. նաև բազում բարութիւնք։

ՊՐԸԿԼՈՍ

Ի ՀԵՐԱՅ ԱՆԱՀՀԱՆԱՐԵՆ ՀՅ։

ԱՐՔ ԹՈՒՎ. Լ. Է.

Նպատակ. Ազդեալ ածի իցէ անսահման ըստ էութեան, և ըստ բանի էակի։

Վիճելի է նախ, զի անսահմանն կամ անհունն է որ ոչ ունի զսահման, կամ զեզր։ Ուստի եթէ չունի զեական եզերս՝ լինի անսահման յէութեան. եթէ չունի զեզերս ի մտնետուր սեռի ստորոգելոյ, զտրօրինակ քանակութեան կամ որակութեան, լինի անսահման յայսմ սեռի։ Ըստ ճառէ արն (Ա)ովմաս զանսահմանութեէ այ ըստ էութեան, կամ ըստ բանի էակի։

Վիճելի է երկրորդ, զի սահմանաւոր եզերք էութեն են կամ արտաքինք կամ ներքինք։ Այլոյն սահմանաւոր արտաքին է պատճառն արարչական, որ եգեալ թէ կարիցէ արտադրել զգործ անսահման, եթէ իցէ անսահման, կարէ և արտադրել զայն սահմանաւոր։ Այլոյն սահմանաւորք ներքինք են կամ մէթաֆիզիզականք, այսինքն սեռ, և տարբերութիւն, որովք իրն կացուցանի ի մտնետուր և ի սահմանաւոր անուսակի. և կամ ֆիզիգականք, այս է, կերպ և նիւթ, կամ ենթակայ ընկալուչ, որ է ըստ կերպին նիւթոյ։ Այլոյնն, որում ոչ մանք ընդդիմանան. գուցանի նախ. Ըմ՛ ներգոր. ա. ընդծուէթի յայլում յինեալ, ընդունի զեզրաւորութիւն դէմ հեթ յայնմանէ, յորում է. զի այն ինչ, որ է յայլում, և խե-

է ՚ի նմա ըստ եղանակի ընդունողին. որպէս հեղձուկն յանօթ ըստ չափու նր յարմարի. և մի պատահումն է կատարելագոյն ՚ի միում ենթակայի, քան ՚ի միւսում: Այդ՝ ներգործութիւնն ընկալեալ յենթակայ ինչ՝ ամփոփի ըստ կարողականութեան ենթակային ՚ի յայտանել յաւէտ կամ նուազ զնւր կատարելութիւն և զգօրութիւն: Այնպէս կերպն եղէրկ զկարողականութիւն նիւթոյ կամ ենթակային առ բացորոշ կատարելութիւն կամ կերպ: Յուցանի երկրորդ. նիւթն կամ ենթակայն ընկալուչ և կերպական կախին ՚ի միմեանց յեղանակն պատճառելոյ և գոլոյ. և միմեանց զհանգամանս իւրեանց հաղորդեն, և ընդ միմեանս խառնեն. ապա սահմանաւորեն զմիմեանս ոչ թողով զմիմեանս յիւրեանց պարզութիւն, այլ խառնեալ և սահմանաւորեալ ըստ այլում: Յուցանի երրորդ. Այ՛ ընկալուչ է ՚ի կարողութիւն առ ներգործութիւն, որոյ է ընկալուչ. զստի ոչ է անսահման ՚ի բանի կատարեալ և մեքուր էակի, և զայսմ անսահմանութիւնէ է աստանօր խնդիրս: Այնպէս ներգործութիւնն ընկալեալ ՚ի կարողութիւն ընդունողին, ոչ է մեքուր, զի ընդդի ընդ կարողականութիւն. և այսչ նուազ է քան զմեքուր ներգործութիւնն. ապա սահմանաւորեալ: Այս ամենայն ծանուցեալ և յուցեալ, առ խնդիրդ

Ա՛առ. ի՛. է. պ՛ա. բ՛ա. Պատասխանեմ. Այ՛ է անսահման ըստ էութեան, և ըստ բանի էակի:

Յուցանի. Այ՛ ըստ էութիւն և ըստ բանի էակի ոչ ունի ինչ սահմանաւոր. ապա: Յուցաւաչ. Ո՛չ կարէ սահմանաւորիլ արտաքսապէս ՚ի ձեռն արարչական պատճառի, զի է ինքնագոյ. և ոչ ներքսապէս ՚ի ձեռն սեռի, և տարբերուաց, կամ նիւթոյ և կերպի, զի որպէս յուցաք ՚ի վերոյ, է էակ ամենևին պարզ, անխառն յամ բաղադրութիւն, թէ ՚ի սեռէ և ՚ի տարբերութիւն, թէ

՚ի

'ի նիւթոյ և 'ի տեսակէ, և թէ յէութենէ և 'ի գոյութէ. զի որպէս ասացաք, է հապէս իւր գոլ. մինչզի ելն կամ գոլն յայծ՝ որովհետև է իւր իսկ էութի, ուր է 'ի նմա ընկալեալ, և ուր անդրագոյն ներգործութէ ընկալուչ. զի գոյութէին է վերջին քան զայմ ներգործականութիս. ապա:

Յայտնեալ ունիս մակաբերել նախ, թէ չէիք այլ ինչ բաց յայ անսահման ըստ էութէ. զի կամ բաղադրի 'ի նիւթոյ և 'ի կերպէ, և կամ 'ի սեռէ, և 'ի տարբերութէ, որովք սահմանաւորի առ մանաւոր ստորոգութիւն. թէ իցէ կերպ ինչ գերազանցեալ զայմ ստորոգութէ, որպիսի է գոյութիւն. վ՚ը զի չէիք այլինչ բաց յայ հապէս իւր էութէ և գոյութէ, այնպիսի գոյութէին 'ի ստեղծուածս է ընդունելի յէութէ, և բաղադրէ ընդ նմա. և այսպէս նուաւ սահմանաւորի. ոչ և էութէին, ըստ որում ընկալուչ գոյութէ սահմանաւորի նուաւ, կամ գէթ կարգաւն առ այլ: Աստ. խ.ք.պ. բոլ.

Երկրորդ՝ ունիս մակաբերել, թէ չէիք ստեղծուածք ինչ ներգործութէք անսահման ըստ քանակութեան, կամ ըստ այլինչ պատահմանէ, զի պատճառն անսահման պահանջէր զէութէ և զենթակայ անսահման: Յաղագս ներգործութէք անսահմանի 'ի ստեղծուածս տեսցես բաղումն 'ի բնաբանութէն: Անդ. ին. պ.ք. բոլ. Անդ. պր. ք. ե.

ՊԱՐԿ. ՕՐ.

Ի ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԱՅՍ.

ԱՐՔ ԹՈՒՎ. ԽԱ. Շ.

ՀՕԳՈՒՆՈՅ.

Նախագիտելիք.

Պիտելի է նախ, զի անչափ ասի, իբր թէ առանց չափու: Ուստի եթէ նկատեսցի ըստ ածային գոլոյն՝ է անսահմանութիւն. եթէ ըստ տեղութեանն՝ է յատիանականութիւն. եթէ ըստ տեղոյն, է անպարագրելիութիւն. Ի վեր անչափութեանն ըստ այսմ կետին իմացուհածոյ առեալ ճառիւք աստանօր:

Պիտելի է երկրորդ, զի անչափութիւնն և ամենուրեքութիւնն թէպէտ երբեմն իրրև նոյն առեալ լինին, սակայն ոչ են նոյն ամենևին: Օի անչափութիւնն նշանակէ զառաջինն ներգործութիւն. իսկ ամենուրեքութիւնն զերկրորդ ներգործութիւն. Ապա անչափութիւնն է յատմարութիւն, կամ ընդունակութիւն գոլոյ յամ իրս և Ի տեղիս, ևս և յանսահմանս, եթէ գոցի: Իսկ ամենուրեքութիւնն է ներգործական գոյութիւն յամ իրս և Ի տեղիս ոչք են: Այլ անչափութիւնն է ստորոգելի այ, զի բնապէս և Հարկիւք պատշաճի նմա. իսկ ամենուրեքութիւնն ոչ է ստորոգելի այ, զի պատշաճի նմա ազատօրէն և Ի ժամանակի:

Պիտելի է երրորդ, զի ած երբեակ ընդհանրական եղանակաւ ասի առ հասին՝ Ի մեկնչաց Ի վեր հինգերորդ գլ. Ներգ. լինել յամի. այսինքն կարողութիւն, ներկայութիւն, և էութիւն, ըստ եղանակին, որով իմն ասի լինել Ի մարդկայինս: Ըստ այսմ

Թա-

թագաւորն ասի, թէ է Ի բոլոր թագաւորութեն իշխանութիւն, և տէրութիւն. զի թէպէտ և չիցէ ամ ուրեք ներկայ, սակայն կարող է ամ ուրեք տիրել. և զամ ինչ ուղղել Ի ձեռն պաշտօնէից իւրոց։ Ներկայութիւն ասի որ լինել չամի, որք նմա աչիւերև են. որպէս ամ ինչ որ է Ի տան ուրեք, ասի լինել ներկայ ումեք, որ է Ի տան, թէպէտ և չիցէ ըստ իւրում գոյացութեն չամ մասունս տանն։ Այլ ըստ գոյացութեան կամ ըստ էութեն ասի որ լինել Ի տեղւոջ, յորում է գոյացութիւն նր։ Արդ՝ ասեմք, թէ ած այսու երրեակ ընդհանրական եզանակաւ ասի լինել չամի. Ներա կարողութիւն. զի ամ ինչ անկանի ընդ իշխանութիւն, և ընդ տէրութիւն նորա, և զամ ինչ կատարէ և ուղղէ։ Ներկրորդ, ներկայութիւն, զի ամ ինչ Էրկիոպօա- նոց կայ աւօլչ ալոց նչ. Ներ. ի. ժչ։ Ներորդ, էութիւն կամ գոյացութիւն, ըստ որում մերձ կայ առ ամ ինչ իբրև պատճառ գոլոյ. որպէս ճոխագոյնս ունիմք ցուցանել։

Վիտելի է զերրորդ, զի բաց Ի հասարակ և յընդհանրական եղանակացս աստի, որովք գոյ ած չամի, են և այլ մասնաւոր եղանակք, որովք ասի լինել Ի մասնաւոր իրս։ Ըստ այսմ ասի մասնաւոր եղանակաւ լինել շնորհօք յարդարս և Ի սիս, որք սիրեն զնա ներգործութիւն, կամ ունակութիւն. զի է Ի նս իբրև սիրեցեալ Ի սիրօշն, ուստի և իբրև բարեկամ բնականից, և կենականից, և իբրև վախճան սկզբնաբար ստացեալ և զմայլելի, զորմէ ընդարձակագոյնս տեսցես Ի Յովհաննէս Թովմայեան. աստ. պ. ի։ Վարձեալ, ած մասնաւոր եղանակաւ է յերկինս յայտնութիւն փառաց. և Ի քո անձնաւորական միաւորութիւն, և յայլ զանազան իրս. յորս մասնաւորապէս գործէ, որպէս Ի խորհուրդս. ևն։

Ա՞ս. Խ. պր. ֆ. բու.

Անգ.

Վխտանլն է հինդկլօլդ , զի մանկըեղիք . առ
Նպիփ. հերետ. կդ . ուրացան զընդհանրական գոյու-
թիւնն այ յայմ՝ կարողութիւ , քան որում ասէին ,
թէ հոգևորքն և անմարմինքն միայն են նկրթդ
անկեալ ածային իշխանութեան . իսկ երևելիքն , և
մարմնաւորքն են նկրթդ անկեալ իշխանութեն ներ-
հական սկզբան : Ասինք ևս ուրացան զընդհանրա-
կան գոյութիւն այ յամենայնի ներկայութիւ . վ զի
ասէին , թէ տեսչութիւն այ ոչ ձգի մինչ ՚ի ստո-
րին մարմինս յայսոսիկ . յորոց դիմաց ասի . Յոբ.
իբ. ժդ. Ահ ձեր երևիցէ ընդ-ցի , ե ոչ երե-
ցէ : քան լատ. ընդ ձեր. երևիցէ ընդ , ե ոչ պիբ պե-
ասանե :

Աղդ. Ասդ՝ զընդհանրական գոյութիւն այ յայմ էու-
թիւ կամ գոյացութիւ ուրացան , ը վկայելդ սկն
Հերոնիմ. ՚ի գլ. կդ. Եսայ. ՚ի հրեից անտի նք ,
որք զնծ փակեին ՚ի տաճարն նէմ : Դարձեալ՝
՚ի հնթանոսդ նոքա , որք միանգամ կեղծեին զնծ
մարմնաւոր : Ուրանան զայս և Աոկինեանք , և ո-
մանք ՚ի Կալիկեանդց . ընդ որս համարելի է յուղ-
զաիսաաց՝ Օգոստինոս Հուգուբինոս . ՚ի Աաղ ճը .
Ռանզն սոքա ուսուցանեն , թէ նծ է ամ ուրեք
կարողութիւ և գործողութիւ . բայց ըստ գոյացու-
թեն է միայն երկինս , այնպէս՝ որպէս արեգակն
՚ի պարունակի իւրում ը գոյացութեն գոլով , ազ-
դէ չինթալուսնեայս : Ոյսմանէ ընդհանրական
եղանակէ միայն է այժմու խնդիրս , որով նծ է
յամենայնի ըստ գոյացութեն : Ուստի դնեմք զյօդ-
ածդ :

ՅՕԻՒՍԵՆՕՍ Ե։

Ընդեռ՝ ամբ ըստ գոյացութեանն էին նոքա։

Ասել է. Ընդ ըստ գոյացութեան է՝ի նոսա յամ իրս։ Աստ. պ.ա. բոլ.

Յուց. Նախ՝ի սկզբան. ք. Օր. գ. լե. Ընդ որ ոք է չերկինս է վերջ, և չերկինք՝ է խոնարհ. Սաղ. ճկը. է. Յո երկեցայց ես՝ի յոգւոյ առմէ, և ի չերկնաւոր յոգի ես յո փախեցայց։ Երկինք երանեմ չերկինս, որ անդ ես, երկինք երանեմ՝ի գժոխս, և անդ ծօթ ես։ Երեմ. լէ. լէ. Անկնիք վերկինս և վերկինք ես ուշ ընդ յոմ ասէ տէր. Յոբ. ժա. ը. ըստ լատ. Հոգին է չառն վերկինս ... խոյ չառն պգժոխս, երկայն չառն վերկինք ծուխ ձէր, և լայն չառն պձով։ Արդ՝ այս վկայութիւք, և այլ բազում սոցին նմանք ըստ նկարագրական և դիւրին իմացուածոյ, որպէս յայտ է մնացեալք երկրին, ուշ լոկ վերկայութիւն ճանաչմանն կամ կարողութեանն՝ի մէջ բերեն, որպէս Համարին Սոկինեանք, այլ գճմարիտ ներկայութեան գոյացութեան։ Յաւել ևս՝ զի այսոքիւք վկայութիւք այնպէս պակ ամբ լինել՝ի գժոխս և չերկրի, որպէս ասի լինել չերկինս, իսկ ինչ է չերկինս ըստ գոյացութեան, ընդունին Սոկինեանք։ Ի հաստատութեի ուղղափառ վարդապետութեանս միաբան գտանին ամ ուրեք այլ հարքն, զորոց վկայութենէն՝ի մէջ բերել երկար իմն լինէր։

Յուցանի երկրորդ՝ քանիւ նախ. Աշխատութեին է կատարելութիւն պարզապէս պարզ. Ապա անմարթ է չընծայել այլ։ Երկրորդ. Չյնպէս է անմարմինն՝ի տեղւոջ՝ քանակութիւք զօրութեն, որպէս մարմնաւորն՝ի տեղւոջ չափելի քանակութիւք. իսկ արդ՝ եթէ էր մարմին հոգ, որ ունէր զչափելի քանակութիւն անսահման, պարտ էր նմա լինել ամենայն ուրեք. Ապա եթէ հոգ է հոգ անմարմին.

զ. ըգ-ամ հե-թ. գւ կը.

որ ունիցի զանաՀման զօրութիւն, պարտ է նմա լինել ամ ուրբք. արդ՝ ցուցաք, թէ ամ է անբաւազօր. ապա է ամ ուրբք: Երրորդ, և մանաւանդ. Ընդ զորձէ յաւժի զօրութիւն, որ նոյն է ընդ իւրում գոյացութիւն. Հակ արդ՝ ամ առնօղ է ներկայ կրողին գէթ զօրութիւն. ապա: Նայց այս հիմնական պատճառ, որում ընդդիմանան Արիանք առաւել ևս բացատրեցի՝ ի հետագայ յօդուածն:

Անդ. և առա. պ. ա. բոլ. և պ. գ. բոլ.

Առարկեցես նախ՝ ի սէ գրոց. Առ. կիր. ա. Յայնէս ասէ տէր. Երկինք ամբառ իմ է՛ն, և երկիր պոպոճանոցս ոտից իմոց: Եբ. Առաջ. ժ. Ե. Տէր՝ ի գառաջ սէ ք-ըս-ոմ, թէ յերկինս յամբառ ք-ըս-ոմ. Ապա ամ է միայն յերկինս իբր՝ ի սեփական աթոռ:

Պատասխանեմ զան. զհետև. Այս ամ է միայն յերկինս է բացայայտ յայտնութիւն փառաց իւրոց, ընդունիմ. Էութիւն, ուրանամ: Արդ՝ այսպիսի, և որ սոցին նման բանք սէ գրոց ոչ նշանակեն, թէ ամ ոչ է էութիւն այսուր, բայց եթէ յերկինս. այլ թէ է յերկինս մանաւանդ եղանակաւ, որպէս և իսկ առացաք, այսինքն մեծավայելչութիւն, և յայտնադիմանութիւն փառաց իւրոց յերանելոյս, որպէս և մանաւանդ եղանակաւ է՝ ի գժոխս արդարութեամբ վրէժխնդրութիւն, և յարդարոն շնորհօք:

Առիպիցես. Առաջ. ժէ. ասէ. Երկինք երկնից քո՛ն է՛ն. ի՞ պէ՞ր երկինք ասէ: Ապա ըստ այնմ երևի լինել յերկինս, որպէս թէ չեցէ յերկրի, այլ թողեալ զնա մարդկան:

Պատասխանեմ ըստ հասարակ մեկնութեանց վարդապետաց, թէ խնացուած այսց բանից է նոյն ընդառաջնոցն. ըստ է, վերին գառաւն երկնից ասհմանեալ է այ յաթոռ և յաջորնիս, ուր փառաւորէ զնոսա: Իսկ զերկիրս ետ՝ ի պէտս մարդկան, որ ոչ արտաքոյ զհամբերն ներկայութեին այ՝ ի նմա էութիւն: Ամենք զբանսդ իմանան նկատմամբ առ քաժանումն երկրին առեառաց. որպէս թէ այս իցէ

ի-

իմացուածն. Ըծ անձին գրեաց զբաշխելն զերկնաւոր բարիս. իսկ զբաշխելն զերկիրս ետ որդւոց մարդկան, այս է Ադամայ և Եհուայ։

Պնդիցես. Ասի Ի սէր գիրս զայ ելանել, իջանել, գնալ. իսկ արդ՝ որ է ամ ուրեք, է անընդունակ տեղական շարժման. ապա։

Պատասխանեմ զան. զմեծ. Ասի զայ ելանել, իջանել, ևն. յատկապ, ուրանամ. այլաբանօրէն, ընդունիմ։ Վասնզի ըստ այսմ բազում անգամ խօսին սէր գիրք առ Ի յարմարիլ ըմբռնման մերում, և առ Ի ցուցանել, թէ ած, որ անշարժն է յինքեան, զայնպիսի գործս առնէ, որպէս մեք առնեմք Ի շարժիլն, երեանելն, յինջանելն, ևն։ Ըստ այսմ ասի զայ առ մեզ մատչիլ՝ յառատաձեռնելն զբարիս, մերձիլ Ի մեզ յամենուին զշնորհն, իջանել, գնալ, յուսելն զինաւ Ի պիտոյս մեր։ Նոյնպէս և ասի զընալ Ի կերպարանս մարդոյ՝ որպէս երևեցաւ ադամայ յերկրաւոր դրախտին։

Ասուիցես երկրորդ Ի սէց հարց. Կղեմէս Ըղեքսանդրացին. գիրք. ա. յաճախապատ. այսպէս ասէ. Ոչ ասէն ընդմտանել զայ ընդ ամ գոյացուածս, այլ ձև ապացուչ ի նմ ասէ։ Արէն Ոգոստինոս. գիրք. ձէ. խնդրոց ասէ, թէ ած անուրեք է։ Նոյն Ոգոստ. գիրք. ը. Ի վե զան. խնդ. առ Աիմպլիկ. ա. ա։ Նս Յոհան. Դամասկ. գիրք. ա. ուղ. Հաւատ. գլ. ժգ. ասեն, թէ ած է Ի տեղւոջ միայն գործողութ, և միայն պիտակապէս ասի լինել նմա Ի տեղւոջ։ Ըպթհանցիոս, Ի գիրս արարչագործունն այ. գլ. ժգ. ասէ, թէ ած ներկինս է միայն, այնպէս, որպէս Հոգին է միայն յուղեղն։

Պատասխանեմ առ առաջինն. Կղեմէս Ըղեքսանդ. ոչ ընդունի, թէ ած ընդմտանէ ընդ ամ գոյացութիս ըստ մտացն Աստուկեանց, ընդդէմ ոչոց անդէն խօսի, քանզի նոքա ասէին, թէ ած

ընդմը-

ընդմանեն ընդ ամ գոյացութիա և յամ իրս ընդ-
լսանի իբրև մանն և հոգի աշխարհի: Ասց ընդ-
հիմունս արկանեն ցուցմանցն, որ զկնի: Ա՚պա:

Իմնական պատճառն զոր՝ ի մէջ մատուցանեն ածաբանք, յառաջ քերի յերրեակ գերազանցութենէ այսպիսի տեսութեանէ. և զայս օրինակ առաջի դնեմք: Ա՛անաչումն այ յերանելիս՝ է դէմ յանդիման, ըստ զինչէի, և երանացուցիչ: Իսկ արդ՝ յայսց երից գլխոց ընդդէմ է երանելեաց տեսանել զէութիւնն այ առանց ստորոգելեաց, անձանց, ևն. ապա: Ա՛նծ. է ստոյգ:

Յուց. առաջին մասն փոքր. Յէութէ դէմ յանդիման տեսութեանէ է տեսանել զնոյն իրրև ևն. Թեակայացեալ յինքեան, և գոյացեալ՝ ի կողմանէ իրին ըստ ամի, որ կարէ անկանիլ ըստ առարկայիւ այնպիսի ճանաչման. զի յայնտակս ասի դէմյանդիման. և սովաւ որոշի՝ ի վերացելոյն: Իսկ արդ՝ ածՙ յինքեան՝ ի կողմանէ իրին է մի՝ եռանձնեայ, արդար, ողորմած, իմաստուն, և այս ամ անկանին ըստ առարկայիւ իմացական ճանաչման: Ապա:

Յուց. երկրորդ մասն փոքր. Յէութենէ ըստ զինչէի ճանաչման է ճանաչել զամ որք վերագնորին յէութէի իրին. իսկ արդ՝ ստորոգելիք եանձինք վերագնորին առ էութէին այ որպէս է յինքեան. զի ածՙ է էապէս արդար, ողորմած, ևն. Վարձեալ՝ էապէս է Հայր, որդի, ևն. զի եթէ ստորոգելիք և եթէ առնչութիք էապէս նոյնանան յէութեանն այ, որպէս ասացաք վերագոյնդ՝ ի վերայ զանազանութեանն Ակոմոսյ: Ապա:

Յուց. երրորդ մասն փոքր. Նախ՝ զի ճանաչումն ըստ որում երանական՝ պարտ է լինել դէմ յանդիման, որպէս խոստովանին ամենեքեան. իսկ արդ՝ որպէս ցուցաւ յէութէ դէմյանդիման տեսութեանն այ է տեսանել զէութին այ, զստորոգելիս. և զանձինս, ապա: Երկրորդ յէութէ տեսութեան ըստ որում երանական՝ է, զի կատարեալ գոյն յագեցուցանէ և հանգուցանէ զբանական ախորժակ երանելոցն, իսկ արդ՝ երանեալն, որ տեսա-

նէ զէութիւն ՈՅ՝ բանաւորապէս ախորժէ տեսա-
նել զստորոգելիս և զանձինս. ապա: Յուց. փոքր՝
Որ տեսանէ զէութիւն ինչ՝ բնապէս բաղձայ տեսա-
նել զյատկութիւնս նորա. և զեղանակ ենթակայա-
նալոյ և գոյանալոյ նորա: Իսկ արդ՝ ստորոգելիքն
են իբրև յատկութիւնք էութեանն ՈՅ, և գոյ յերիս
անձինս: Նորոգ՝ զի՛ տեսանելն զէութիւն ՈՅ. եթէ
ծածկեր ինչ յերանելեացդ որ է կերպաբար յաՅծ,
ծածկեր՝ և ոչ ծածկեր ծայրագոյն բարին, ոչ
ծածկեր, զի զէութիւնն ՈՅ տեսանէր. և ծածկեր,
զի այն զոր ոչ տեսանէր է ևս ծայրագոյն բարի
անպատասն յէութենէ մի լինելոյն ներգործուի
մաքուր. և ընդ նմին՝ ներգործութիւք կերպակս
փակօղ ամ կատարելութեանց:

Ճաստատի եզրակացութիս. Ոչ է ներգոր-
ծութիւն մաքուր, յորում չիք ինչ բաղադրութի
կամ մասն. ապա Հակառական է տեսանիլ ինչ
ՈՅ պայծառ և դէմյանդիման, և ոչ տեսանիլ ամի
որ ինչ է յաՅծ: Յուց. Հետև. Ոչն ինչ որ լի-
նէր տեսեալ, կամ էր ներգործութի մաքուր, և
կամ ունէր զկարողականութի: Եթէ ունէր զկա-
րողականութի, լինէր էակ ստեղծեալ և ոչ ՈՅծ,
և ոչ ՈՅ կատարելութի: Իսկ եթէ էր ներգոր-
ծութի մաքուր, ապա տեսանէր իբրև էակ յիւր-
մէ և պարունակծդ ամ կատարելութեան, և այսպէ
ամ որ ինչ է յաՅծ՝ տեսանի. զի ներգործութին
մաքուր առ ոչինչ է՝ի կարողութի, այլ ունի
ներգործութիք զամ կատարելութիւն: Ապա նոյն
է պայծառ և դէմյանդիման տեսանել զմի անձն,
կամ զմին՝ի ստորոգելեացդ որպէս է յինքեան,
այս է՝ իբրև ներգործութի մաքուր, և տեսանել
զամ որ ինչ է յաՅծ:

Տեսանես արդ՝ ըՅ որում ազդեցաք՝ի վերոյ,
Թէ այս պատճառք Հիմնին՝ի դոյն յայս բան սկզբն
Ճովմ. Թէ Նրանիալք փեսանին զԱծ ոչ ՝ն-
իբր Ee և

և թէ, Բռնանալոյ ոչ ինչ է չափ՝ է ին: Տեսանես ևս, զի եզբակացութիւն մեր է՝ի վերայ դէմյանդիման և պայծառ տեսութեն այլ, որպէս է յինքեան և յիրում: Ապա թէ ոչ՝ ընդհանրապէս իմանալով՝ի վերայ տեսութեն կամ իմացման, ոչ ինչ ընդդէմ է տեսանիլ կամ իմացեալ լինել այլ ըստ աղօտ, և անկատարապէս ըստ իմիք, և ոչ ըստ բռնանալոյն:

Յ–Ժամանակ առաքինութեանց:

Ա՛ռարկեցես նախ. Տեսութիւն էութեն այլ յերանելոսն, առանց տեսանելոյ զստորոգելիս կամ զանձինս՝ ոչ է հակասական, ոչ ըստ որում է երանացուցիչ, ոչ ըստ որում է դէմյանդիման, և ոչ ըստ որում է ըստ զինչէի: Ապա յոչինչ գլխոց է հակասական: Ցուց. առաջին մասն առաջ. Լուսին այլ առանց անձանց ևս տակաւին մնայ ծայրագոյն բարի, և վերջին վախճան, և ըստ այնորիկ երանացուցիչ առարկայ. ապա չէ ինչ հակասական ըստ որում է երանացուցիչ: Ցուց. առաջ. Լուսին այլ չունի յառնչութենց զլինելն ծայրագոյն բարի և վերջին վախճան. այլ ըստ լինելոյն ներգործուած մաքուր, և էակ էութիւ, որ է բռնադակ՝ի բացարձակ էութենէ. ապա: Ցուց. երկրորդ մասն առաջին առաջ. Ընդար է տեսանել դէմյանդիման զգոյն ինչ, և ոչ տեսանել զամ սեռական ստորոգելիս, զորօրինակ զհասարակ բան որակուած, յենողութեն, ևն. թէպէտ և նոյնանան ըստ այնմ գոլոյ. ապա չէ ինչ հակասական ըստ որում է դէմյանդիման: Ցուց. երրորդ մասն առաջին առաջ. Ար՛ի լինել տեսութեն էութեան իրիք ըստ զինչէի՝ չէ պարտ հարկաւ ճանաչել յատկութեց նորա, քանզի չեն՝ի կերպական իմացմանէ նր. ապա չէ հակասական ըստ որում է ըստ զինչէի: Օյսոսիկ ասէ հայրն Լննոս ըստ այլ ակռվտեանս:

Պա-

Պետեմ ուր. զառաջ. և զառաջինն ցուց. զան. զառաջ. ըզ Թովմայեանն Յովհ. Լուսթին ՅՀ չունի յառնչութենց զլինելն ծայրագոյն բարի, և զայս ունի առանց նոցա՝ ուր. և զայս ոչ ունի առանց նոցա՝ ընդու: Ուանզի յայնմ սկզբնէ յորմէ ե ծայրագոյն բարի, (զի ե էակ յիւրմէ և ներգործուի մաքուր.) յայնմանէ ե անսահմանաբար արգասաւոր և հաղորդական Ի ներքուստ, ուստի և երբեակ յանձինս. և զի յէութենէ տեսութեն ե ըզ որում երանական, տեսանելն զԱծ, որպէս ե յինքեան, որպէս ցուցաք, յայն սակս հակասական ե տեսանել զԱծ առանց անձանց:

Ողբկրորդ ցուց. ուր. զհետև. Ընհանգիտութենի ե, զի հասարակ բան որակութենե, կամ յենդութենե և նմանիք՝ չեն առարկայ մարմնական տեսութեան, ուստի չեն ինչ զարմանք եթէ Ի նոսա ոչ հպեսցի: Այլ սակայն ստորագելիք ՅՀ և առնչութիւնք չեն ինչ նուազ առարկայ մտաց երանելեաց քան զէութիւնն, վ զի են էակ և ներգործութենի մաքուր ոչինչ ընդհատ յէութենէ: Ընդ հս անհանգիտութենի ե զի առարկայն մարմնական տեսութենե ե բաղադրեալ ինչ և կարողական, վՀ կարէ տեսանիլ ըզ իմիք առանց լինելոյ տեսել զոլորին. բայց Ած ե ներգործութենի մաքուր, անխառն յամ կարողականութենէ և բաղադրութենէ. վՀ ընդէմ ե տեսանել ինչ ՅՀ պայծառ և գէմյանդիման, և ոչ զամ որ ինչ ե յԱծ. որպէս ասացաւ:

Ընդ երրորդ ցուց. պատասխանեմ. Ստորագելիք ՅՀ ըզ որում են յիրում, չեն յատկութենիք ՅՀ, այլ էական և կացուցիչ ստորոգութենիք նորա. քանզի ամ ինչ յԱծ են ներգործութենի մաքուր, մի և պարզ. իսկ ասին յատկութիւնք միայն ըստ եղանակի իմանալոյ մերոյ: Իսկ յաղագս առնչութեանց, եդեալ թէ չեն ստորոգութիւնք կացուցչէք էութենն ՅՀ. բայց են գոնէ եզելիք նորա և

էական եղանակք պատշաճեալք առ անսահման գերազանցութեի և արգասաւորութեի նորա, քանզի էապէս ստորոգին զայ, և ընդ նորին իսկ էութեան՝ նոյնանան, որպէս ասացաք յայլոյր, ապա և հակասական է տեսանել զայծ ըստ զինչէի, ոչ է յինքեան և յիրում, և զայս ամ ոչ տեսանել:

Ստիպիցես նախ ընդդէմ առաջին լուծմանն. Այնմ առաջին նշանի յորում ըմբռնեմք զՀայր նախ քան զծնանիլ զորդին՝ խմանամք երանեալ. Իսկ արդ՝ յայնժամ չև ևս ըմբռնի լինել որդւոյ կամ սէր Հոգւոյն. ապա էութիւնն այ միայն է առարկայ երանութե:

Պատասխանեմ նախ՝ Հասարակ լուծմամբ. զան. զփոքր. իսկ արդ՝ յայնժամ ոչ ըմբռնի լինել որդւոյ և սակայն է՝ ընդու. ոչ ըմբռնի և չէ որդի՝ ուրա: Ռանզի յայնմ վայրկենի յորում է Հայր՝ է և որդին և սբ Հոգին, որովհետև են յաւիտենից ընդ Հօր, և զնոյն էութիւն ընդ նմա ունին: Իսկ թէ մեք ըմբռնեմք լինել առաջին անձին միանչէև իցեմք ըմբռնեալ զնա ծնօղ, այն յառաջ գայ յայնմանէ, զի ոչ կարեմք կատարեալապէս իմանալ զեղանակ ածային ծննդեան: Այլ սակս այն վայրկեան չէ վայրկեան յորում, և տևողութեան, այլ վայրկեան յորմէ, և ծագման. և ըստ այսմ՝ի կողմանէ իրին Հայր չէ երանեալ առանց որդւոյ և Հոգւոյն սրբ:

Պատասխանեմ երկրորդ՝ ըստ Թովմայեան Յովհաննու զան. զփոքր. զայն. Իսկ արդ՝ յայնժամ ոչ ըմբռնի լինել որդւոյ, իբր եզը ասացեալ և յառաջ ածեալ ծանօթական ճանաչմամբ՝ ընդու. ոչ ըմբռնի լինել որդւոյ, իբր առարկայ ծանուցեալ էական ճանաչմամբ՝ ուրա: Ռանզի այս ճանաչումն Հօր՝ զօրութիւ կրկին է, առ երանութիւնն բաւական է էական ճանաչումն բանին, և ոչ պահանջի ծանօթականն կամ ծնողականն. քանզի որ-

որդի և հոգի սը են երանելոք, և սակայն ոչ ճանաչեն զՀայրն ծանօթական կամ ծնողական ճանաչմամբ:

Ստիպիցես երկրորդ. Եթէ էութին այ ոչ կարէր երանացուցանել հրաժարեցուցեալ յանձանց, ոչ լինէր ծայրագոյն բարի. ապա: Յուց. առաջարկ. յէութենէ ծայրագոյն բարւոյ է երանացուցանել:

Պատասխանեմ ուր. զՀետև. և զցուց. զանզառաջարկ. Յէութէ ծայրագոյն բարւոյ է երանացուցանել այնու եղանակաւ որով է՛ի կողմանէ իրին՝ ընդու. այլազգ քան զոր է՛ի կողմանէ իրին՝ ուրա: Օի տեսութին երանացուցիչ է դէմ յանդիման իրին՝ ըստ որում է՛ի կողմանէ իրին, և յատկեցուցիչ ախտրժական, որպէս ասացաւ, որ ոչ լինէր, եթէ ոչ տեսանէր զայծ ոգի է յինքեան, և գոյացեալ՛ի կողմանէ իրին: Ապա եթէ էութին այ ոչ կարիցէ առանց անձանց երանացուցանել, ոչ յառաջ գայ այն յանկատարութենէ, այլ՛ի ծայրագոյն պարզութենէ և մաքրութենէ նորա, որով զանձինս՝ յիրում հապէս նոյնացուցանէ ընդ իւր:

Ստիպիցես երրորդ. Ընդ ստեղծանէ իրրև մի և ոչ իրրև եռանձնեայ. ապա երանացուցանէ իրրև մի՝ և ոչ իրրև եռանձնեայ:

Պատասխանեմ ուր. զՀետևութին. Ընհանգիտութի է. զի ստեղծիչ ներգործութին վերաբերի՛ի կարողութին այ, որ պատշաճի այ բանիւ էութե, և այսու բանիւ հասարակ է երից անձանց. վայ բան անձին ոչինչ օգտէ առ ներգործական հոսումն, այլ է իրրև ընթացակից միայն. բայց տեսութիւնն երանական հայի յայծ ըստ որում է յինքեան և յիրում. իսկ այծ յինքեան և յիրում է մի և եռանձնեայ:

Ընտրկինգս երկրորդ. Նաւական է զօրութենական զանազանուին, զի էութին այ և ոչ հայրութին հաղորդեսցի որդւոյ. զարձեալ՝ որպէս զի անձն որդւոյ և ոչ անձն հօր հաղորդեսցի մարդկութենէ, զարձեալ՝ որպէս զի մարդկութին անմիջապէս միաւորեսցի ընդ անձին բանին, և ոչ ընդ բնութենէ: Ապա ևս առաւել որպէս զի տեսանիցի էութին այ առանց անձանց կամ մի անձն առանց միւսոյ. զի լինի մեծագոյն հրաժարեցուցումն մտօք քան հաղորդութիւն:

Պատասխանեմ ուր. զհետև. Ընհանգիտուի է. զի տեսութին այ յերանելոյս, որովհետև է դէմ յանդիման, ըստ զինչէին, և երանական, որպէս ասացաւ, պարտ է տեսանել զնա որպէս է յինքեան, ըստ ամի զոր նոյնացուցանէ ըստ իւր. իսկ նա յինքեան և յիրում է երրեակ անձամբ. այլ սակայն հաղորդութին ոչ լինի հարկաւ զերկին ըստ ամի զոր եապէս նոյնացուցանէ ըստ իւր, այլ ըստ ընդունակուե կամ պահանջման եղերն, որում հաղորդի: Երդ՝ որդին թէպէտ է ընդունակ էութենն այ, սակայն ոչ է ընդունակ հայրութենէ, զի ըստ որում այսպիսի՝ հակադրի նմա առնչապէս. իսկ մարդկութին քան ոչ պահանջէ ենթակայանալ երրեակ ենթակայութեամբ, ուստի չեն ինչ զարմանք, եթէ անձն որդւոյ հաղորդեսցի այնմ, և ոչ այլ անձինքն: Եւ զարձեալ՝ այն մարդկութի միաւորի ըստ բանին, զի նոաւա ենթակայացի. և առ այս ոչ կենդրի զի անմիջապէս միաւորեսցի ըստ բնութե, այլ բաւական է անմիջապէս միաւորիլ ըստ անձին: Ապա էութին այ ըստ որում զօրութենէ զանազանեալ՝ի հայրութենէ, հաղորդի որդւոյ, որ այլաստ անընդունակ է հայրութենէ. անձն որդւոյ ըստ որում իրացի զանազանեալ յանձնէ հօր հաղորդի մարդկութենէ: Եւ զարձեալ՝ անձն որդւոյ ըստ որում զօրութենամբ զանազանեալ՝ի բնութենե, հաղորդի անմիջապէս

մարդ-

մարդկութեան: Ասայ սակայն եթէ յաճախին էութիւն, և եթէ անձինքն տեսանին յերանելեաց, ուչ ըստ որում զօրութիւն կամ իրապէս զանազանեալք, այլ ըստ որում են կինքեանս և իւրում:

Ստիպիցես. Էութիւն այ կարէ կատարեալապս իմացեալ լինել առանց իմացեալ լինելոյ հօր կամ որդւոյ. ապա: Ասաց. առաջ. Էութիւն այ ունի զիւր իմանալութիւնն կերպապէս զանազանեալ 'ի հայրութենէ կամ յորդիութենէ. ապա:

Պատասխանեմ ուր. զառաջ. և զդուց. ուր. զառաջս: Օի եթէ էութիւն և եթէ անձինքն են իմանալն և տեսանելն յերանելեաց՝ միով էութեամբ այ, որ է փոխանակ իմանալն տեսակի նկատմամբ այմի որ է յայծ:

Ստիպիցես. Ըստ ինչ հակասական, եթէ էութիւն այ միայն զինքն յանդիման երևեցուսցէ մտաց երանելեաց՝ առանց յանդիման առնելոյ զանձինս. ապա:

Պատասխանեմ զան. զառաջ. Ըստ ինչ հակասական ևն. 'ի նախ և յանկատար տեսութեն՝ անցցէ, 'ի դէմյանդիման, ըստ զինչէին, և յերանական տեսութեան, զոր ունին երանելոքն. ուր. Ցայտ է յասացելոցս:

Պնդիցես. Ընձինք և ստորոգելիք են միայն երկրորդական առարկայ երանական տեսութեան: Ասկ արդ՝ չէ ինչ հակասական տեսանիլ սկզբնական առարկային, առանց տեսեալ լինելոյ երկրորդականին. ապա:

Պատասխանին Կայետանոս, Սիլվեստ, և այլք ոմանք, ուր. զմեծ. Ասանզի պնդեն թէ էութենէ և յանձանց ամէողջանայ մի սկզբնական առարկայ երանական տեսութեն, և ոչինչ ընդդէմ է թէ այ էութիւն է այն, որով այ լինի իմացեալ կամ տեսեալ, քանզի ասեն թէ այն և այն են երկու առարկայք, որոց միւն իցէ առաջին և միւսն

միան երկրորդական, այլ յերկոցունցն ևս իրրև թէ ամրողջանայ մին. որպէս սկզբնական առարկայ հրնշտական ճանաչման, ոչ է միայն էութիւն իւր, այլ ինքն գլխովին հրնշտական: Այնպէս և թէ ած լինէր գոյացեալ ի մի միայն անձն կամ յենթադրեալ, սկզբնական առարկայ երանական տեսութիւն ոչ լինէր միայն ածութիւնն, այլև այն ած, կամ այն ենթադրեալ յորում գոյանայր: Ապա նոյն օրինակ սկզբնական առարկայ երանական տեսութիւն չէ միայն ածութիւն, այլ ածութիւն ենթակայացեալ յերիս անձինս:

Պատասխանեն այլք ներելով մեծ. և զանա. զիոքր. Ոչ ինչ հակասական տեսանիլ սկզբնական առարկային առանց երկրորդականին, եթէ երկրորդականն չեցէ հարկաւ կապակցեալ ընդ սկզբնականին՝ ընդունիմ. այլապէ՝ ուր: Ընդ առանօր. էութիւն այ, քանզի էապէս նոյնացուցանէ ընդ իւր զանձինս և զստորոգելիս, ունի ընդ նոսա զհարկաւոր կապակցութիւն. միայ ոչ կարէ տեսանիլ որպէս է յինքեան առանց նոցա: Ուրեմն երկոքին ևս լուծմունք:

Կրկնիցես. Էութիւն է բացարձակ ինչ, իսկ անձն առնչական ինչ. իսկ արդ՝ բացարձակն կարէ ճանաչիլ առանց առնչականին, զի զնմանէ ոչ կախի. ապա:

Պատասխանեմ զան. զիոք. բացարձակն կարէ ճանաչիլ առանց առնչականին, ի ստեղծականս՝ ընդու. յածայինս՝ ուր. խմանալով զէմ-յանդիման, և զըստ զինչէի ճանաչմանէ: Ընհանրապիտութիւն է. քանզի յածայինս բացարձակն և առնչականն՝ իրապէս և էապէս նոյնանան առանց ինչ զանազանութիւն ի բնութէ իրին, որ ընդ հակառակս է ի ստեղծուածս: Եւ ոչ յայնմանէ զհետ գայ, թէ էութիւն կախի յանձանց, այլ միայն թէ ի ներքուստ կապակցի ընդ նոսա:

ՅՕԳՈՒՄՆՕՐ ԺԱ.

Ընդհանուր պատուիրանքն պահել, պահանջին պահմ, զոր առանձ ասի ի զոր կարել առնել:

Պիտոյ պարտ է զի արարածք կրկնակի՛ ի բանն կարեն տեսանիլ, կերպապէս և պատճառաբար: Կերպապէս յորժամ տեսանին այնուիկ տեսութիւք և այնու լուսով՝ որովք նոյն ինքն բանն տեսանի, այլ այնպէս զի բանն իցէ միջնաւոր պատճառ տեսանելոյ զարարածս, և վասն կենդանեան տեսեալ՝ իբրև միջնորդ ածիցէ՛ ի ճանաչումն արարածոյ: Արարածք պատճառաբար ասին տեսանիլ՛ ի բանն, յորժամ ոչ տեսանին այնուիկ տեսութիւք և այնու լուսով՝ որովք տեսանի բանն, այլ մանաւանդ յայտնութիւք, կամ հեղեալ տեսակօք՝ արտաքոյ բանին որ հաղորդի զօրութիւք վիճակի և բանութիւն, կամ նկատմամբ, և բանիւ երանելոյն տեսութիւն. վասն այս տեսութիւն ասի պատճառական՛ ի բանն, բայց անյատկապէս՛ ի բանն. քանզի յատկապէս է արտաքոյ բանին: Առաջին ճանաչումն Օգոստ. կոչէ Աստուածեան. իսկ գիտութիւնն՝ Էնթելեկտեան:

Երդ՝ խնդրի նախ. զի՞նչ՛ ի ստեղծուածոց տեսանիցեն երանեալքն: Երկրորդ. զինչդ տեսանիցեն զնոսա, արդեօք կերպապէս՛ ի բանն՝ և թէ պատճառաբար: Առաջին խնդիրն լուծցուք յայսմ յօդուածի, իսկ զերկրորդն՛ ի հետևեալն:

Ասելի է նախ՝ Երանեալքն ոչ տեսանեն զամ Աստ. պ. զոր առնէ ածմ, և զոր կարէ առնել: Ի հասարակ. Բուլ. առ ամենեսին:

Յուց. Նախ՛ի ձեր գրոց. Ամէն ոք, ոչ հրեշտակ, և ոչ երանեալ գիտէ զօր դատաստանին. Մատթ. ԻԴ: Հրեշտակն պարսից և հրեշտակն

հրե-

հրէից ոչ գիտէին զկամս այլ, որ էր աղատութեն հրէից. Յովան. Ժ. Ը պա։

Յուց. երկրորդ. Եթէ երանելոյք տեսանէին զամ զոր առնէ ած, և զոր կարէ առնել, տեսանէին զայն կամ՝ի բանն, կամ արտաքոյ բանին. ոչ առաջինն, զի հասու լինէին այլ, ոչ ցուցցուք ստորև, և ոչ երկրորդն, զի չէք պատճառ յայտնելոյ այլ երանելեաց զամ անցեալս, զներկայս, զապագայս, և զկարելիս, զի ամի այսոցիկ ճանաչումն ոչ պահանջի յերանութեի նոցա։ Յաւել և զայն, զի ըստ հաւանական կարծեաց պահանջեր առ այն անսահման լոյս ստեղծական, ոչ ասասցուք՝ի ստորև։

Ը. Մ. խ. Յ. պ. Ը. ըստ.

Ասելի է երկրորդ. Երանելոյք տեսանեն զբարեածս զանցեալս զներկայս և զապագայս, որք մանաւանդ և գլխաւորապէս հային՝ի նոսա։ Այսպէս դնեն առ հասարակ ըստ սղոյն Յովհաննի։

Յուց. Նախ. Յաղագս հասարակօրէն անուանեալ Աստուածն, զոր մանաւանդ՝ի գէպ էր կոչել Փարիզեան՝ի տեղւոջէն ուր գումարեցաւ, յամին 1528. ՝ի սահմանս հաւատոյ, գլ. ժգ. տես։ Ընդ. է երանելեաց.... այն ամենատրտուկ հայելի աճուրդեան, յորում ոք ինչ վերաբերի առ նա՝ լաւ տեսանէ։ Ընդ այսմ միաբանին և սբ հարք. ոչ յայտ լեալ յորոց զկնի։

Յուց. երկրորդ. Երանութեին պարտ է կատարելագ յագեցուցանել զամ արդար և պատշաճ բաղձանս երանելեաց. իսկ արդ՝ երանելոյք արդարութեամբ և պատշաճապէս բաղձան գիտել զայնս, որք մանաւանդ հային՝ի նոսա. ապա։

Իսկ թէ որք մանաւանդ հային երանելոյք՝ ոչ է դիւրին իմն նշանակել՝ի մանաւանդի։ Այլ սակս առ հասարակ ածաբանք գրեն, թէ երանեալն երբակի կարէ մտածել։ Նախ՝ ըստ որում է վերառեալ՝ի կարգ շնորհաց։ Երկրորդ՝ ըստ որում է

մտանդ

մասն սիեզերաց: Արդարդ՝ ըստ որում է այսպիսի անձն, սոսկական, կամ հրապարակական, իբր պատ. Թագաւոր. Հիմնիչ կրօնից, տանուտէր, հէն. և համարին Թէ տեսանիցէ զայն ամ, որք ըստ պահանջման երից վիճակացս այսոցիկ մասնաւորապէս հային 'ի նա:

Այլն սակս ըստ առաջին գլխոյն, ըստ որում է վերաւեալ 'ի կարգ շնորհաց, տեսանէ զնորհուրդս հաւատոյ՝ որոց հաւատոյ յաստի կեանս. ըստ զմայրդեղութեն, զյարութեն, զփրկագործութեն, զլուսոյ փառաց, զշնորհաց, զնախասահմանութեն, հէն. և այնու առաւել ևս զի երանական տեսութեին գայ զինի հաւատոյ և է վարձք նորա, ըստ այնմ, Պաղմ. խէ. ճ. Որպէս լսաւ ականջս Ե պեսաւ 'ի աչալաւ պեն զօրութենէ. և ըստ այնմ Գաստ. գիրք. ի. 'ի վերջ քաղաքի. գլ. իա. Ինչ պեսոյս ասէ, Ե պոյն ամ, զոր ականջ պեսանեմս, քայց հաւատոցեք, ... խոչհիմս. Յաւել և զայն, Թէ ամ զոր ըղձանայ տեսանել՝ զորս հաւատոյ:

Այլ չէ հարկ զի զայն խորհուրդս տեսանիցեն ըստ ամ պարագայից տեղոյ և ժամանակի, որպէս յայտ է 'ի վերոյ աւուր դատաստանի, զոր և ոչ հրեշտակք գիտեն. և 'ի վերոյ ժամանակի կամ պէսպէս պարագայից մարգեղութեն. զորս միայն ժամանակաց յաչորդութեն ծանեան հրեշտակք Թէպէտ զայն ըստ գոյացութեն իսկ և իսկ ծանեան:

Ա. Ժամ. խ. Ծէ. պ. Է. աա. ա.

Այս չէ ևս հարկ, զի տեսանիցեն զամ անհատս՝ յորս կատարին այն խորհուրդք, և կարգ շնորհաց, եթէ բազում իցեն, զի ոչ Թուի այնմ պահանջել առ երանութեն. բայց ոչ այսպէս եթէ իցէ մի, կամ բազում նշանաւորք, որպէս մարգութեն քրի, ամենօրհնեալ կոյսն Նկատմամբ մարգեղութեան. սորին վը Թէպէտ և ճանաչեն զնորհուրդ հաղորդութեն, բայց ոչ տեսանեն զամ քահանայագործեալ նշխարս, և Թէպէտ ճանաչեն

զնոր-

գնաւորդ յարութեան, այլ ոչ տեսանեն կամ տե-
սանիցեն զնման որ հանդերձեալ են առնուլ զյա-
րութիւն, մանաւանդ զդատապարտեալս, քանզի ըս-
որում երանեալ հաւանական իմն է՝ թէ տեսա-
նեն զմիմեանս և զմիմեանց խորհուրդս, և սիրեն
զմիմեանս իբր հաղորդակից այնմ երանութեան:

Ա՛ստ. պ. ե. առ ե. Իսկ երկրորդ գլխոյն, ըս՝ ըս որում երանեալն
է մասն տիեզերաց, զնմ սնուս և զտեսակս իրաց
տեսանէ, ըս նմին և զնմ հրեշտակս, զի ամենե-
քեան ըստ սըկզբնաբար պատշաճին՝ի զարդ կամ
յամբողջութիւն աշխարհի: Ա՛յ սըկն Լեռնադարձ-
՝ի ճառս որ՝ի վերայ երրեակ աղգի բարեաց. հա-
մար. 3. մեծաձայն բարբառի: Ա՛ն նմոսպո-ԼՒՆ-ա՛,
սրով պա՛մ գեբակոպոբ ո-ՆԻՀ ճանաչէը յայնժամ սը
ՆԻՀ ՅԵՐԻՆԱ, և սրՆԻՀ ՅԵՐԻՐ, յաղէրբ անոր ն-
ՏՈՍՊՈ-ԼՒՆ սրբեալբ գծանօթո-ԼՒՆ իրաց ՃՒ: Իսկ
զանհատից կամ զեզականաց, որք եղեն առ մեօք,
կամ լինին կամ լինելոց իցեն, և զգաստանեաց սըր-
տից, զմինս տեսանէ, ըս՝ զորս հարկաւոր են առ
ծանօթութիւն տեսակաց, կամ որք հային՝ի նա,
որպէս ասացուք արդ, այլ ոչ զնմ, զի որովհե-
տև ոչ են գլխաւոր մասունք տիեզերաց, և ոչ ըս
ինքեան նկատին, այլ միս պահպանութիւն տեսակին,
և ոչ այլ ինչ մանաւոր եղանակաւ հային՝ի նա,
որպէս ենթադրեմք, մանաւանդ հետաքրքրական
լինելը, քան բանաւոր՝ բաղձալ տեսութիւն նոցա:

Իսկ երրորդ գլխոյն. Երանեալք տեսանեն
զնմ, կամ դէթ զգլխաւորս, որք վերաբերին՝ի
վճռակ իրեանց, եթէ իցեն ազատ ներդործութիւնք
և եթէ հարկաւորք, եթէ իցեն բնականք և եթէ
գերբնականք, եթէ դիպեսցին յաստի կեանս և
եթէ՝ի հանդերձեալն. ըստ այսմ սրն Պետրոս,

և

և Հաւանականապէս և պատճն, տեսանելն զնա, որք պատշաճին Համբերն ներկայացեալ. Թագաւորին զԹագաւորութեան. նախահայրն կրծնից՝ զկրծնիցն. տանուտէրն զտան իւրոյ. ևն։ Դարձեալ՝ տեսանելն զնա՝ խնդրուածս՝ որք վերատաքին առնոտա, զի պատրիկ մանաւանդապէս իրրև՝ ի բարեխոսս Հայրն՝ ի նոտա, զի պատրիկ ամենասէր կոյսն առաւել քան զառաւել բազում ճանաչէ քան զայլ սիս, մանաւանդ զինդրուածս և զհորհուրդս մարդկան, զի զոլով նա առանձին ինն բարեխոս մարդկան անկ է նմա բազմօք զվճռակ նոցա ճանաչել, զի կարօղ լինի՝ ի դէպ ժամանակի ձեռն տալ նոցա։ Այլ ոչ Թուի Թէ ծանիցէ զնա՝ խորհուրդս, և զազատ ներգործութիւնս մարդկան, զի ազգս մանաւանդ ոչ Հային առնոտա, զի այս պատճառի է՝ քանի, որ զնա լինելոյն զա- Գ. ՄԱ. Ի. տառոր ամ մարդկան, պատ և պատշաճ է նմա ՅՈՎՀ. ճանաչել զնա՝ զառելիս, զնա և զներաքանչիւր ներգործութիւնս, և զհորհուրդս հանդերձ ամ պարագայիւք։

Ասկ յազատ վճռոց այ ըս պահանջի եղերմանն զոր ունին առ ստեղծուածս, զոմանս ճանաչեն երանելոյք, այլ ոչ զնա. զի ոմանք միայն մանաւանդապէս Հային՝ ի վճռակ նց, և՝ ի բանաւոր միխիթարուն, և ոչ Համբերն։ Ասացաք. Եպէտ վճռոցն այ ըստ եպէրմանն զոր ունին առ ապերժուածս։ Օ՛ի Թէ նկատեցին ըս իրականութեանն զոր ունին յայծ՝ որովհետև ըս այսմ են նոյն իւրն ամ, ստոյգ է Թէ ճանաչեն երանելոյք զայն ամ որպէս ճանաչեն զայլս, որք են յայծ կերպապէս, որպէս յառաջն՝ ի վեր անզր ծանուցաք։ Ասկ՝ ի վճռ կարելեաց առասցուք արդ՝ ի մտոց։

Ասիցես նախ. Եասացելոցս զհետ գայ՝ Թէ նուազ սքն կարէ լինել երանագոյն քան զառաւել սքն, այ է՝ եԹէ բազում լինէ պատշաճեսցի՝ ի

վե-

վիճակ նը քան՝ի վիճակ առաւել սիրն. հետևուիս թոռի լինել անտեղի. ապա՝ ՀՈՒՑ. հետև՝ Ո՛յնչափ կատարելագոյն է տեսուին երանական, որչափ բազում ստեղծուածք երևին՝ի բանն՝ Ապա՝

Պատասխանեմ ուր. զհետև. և զդուց. զանազառաջ. Ո՛յնչափ կատարելագոյն է տեսութիւնն երանական՝ որչափ բազում ստեղծուածք երևին՝ի բանն, զօրութիւք լուսոյ փառաց ըստ որում ընդմանանէ յհետնին՝ այ՝ ընդունիմ. զօրութիւք լուսոյ փառաց ըստ որում ունի զզօրաւի երևեցուցանելոյ յայտնութիւն ըստ օրինակի մարգարէական լուսոյ, կամ հնդեալ տեսակօք արտաքոյ բանի՝ ուր. Նմ այսու կրկին եղանակաւ երանելոք կարին տեսանել բազում ստեղծուածս, և այս տեսութիւն բազմաց ոչ ցուցանէ զմեծագոյն էական երանութիւն՝ Ձաւել և զայն, զի կարօղ է ած փոխանակ՝ այս բազում իրաց տեսուիս վայրագոյն սիրյ՝ հատուցանել վերնագոյն սիրյ սկզբով բազում իրաց տեսութիւնք՝

Ասիցես երկրորդ. Հրեշտակն պարսից և հրեշտակն հրէից. Ոչ. ժ. ոչ գիտէին զպատշաճեալն ինքեանց, ըստ է՝ զապագայ հանգամանս ժողովրդոց յանձն եղելոց նոցա՝ Ապա երանելոք ոչ տեսանեն, որ ինչ մասնաւորապէս հայրին՝ի նմա՝

Պնեմ ուր. զհետև. ըստ մտաց եզրակացուսն, զի պարտ իմանալ զայնց որք գլխաւորապար կամ ըստ գոյացութիւն պատշաճին առ երանեալս և ոչ ամենևին զամ եզական պարագայից, մանաւանդ՝ զամ բանից խորհրդոցն այ, որ զնոքօք՝

Աբա. պ. ե. բոլ. Ասելի է երրորդ. Երանեալք տեսանեն զկարելի ստեղծուածս, ոչ զամ այլ զոմանս, և այնչափ բազում, որչափ կատարելագոյն է տեսուին երանական՝ Համարակ է ըստ սիրն Յովհ՝

Ո՛րաչինք մտան. Թէ ոչ տեսանեն զամ կարելի ստեղծուածս՝ յայտ է յառաջին եզրակացութեան՝ ՑՈՒՑ. երկրորդ մտան. Ընդ տեսանելով զինք

զինքն Հաստղապէս՝ տեսանէ յինքեան զայմ կարելի ստեղծուածս, ապա երանելոք տեսանելով զայծ ըզ զինչէին, տեսանեն ՚ի նմա կարելի ստեղծուածս ինչ: Յուց. երրորդ մասն. Որչափ կատարեալ- գոյն լինի ՚ի խորս մտանել ՚ի պատճառն, այնչափ բազում կարելի գործք ՚ի նմանէ՝ ծանօթանան. որպէս որ քաջ իմանայ զկիրքն ինչ, այնու իմանայ զբազում եղրակացուածիս յառաջ բերելիս ՚ի նմանէ: Ապա որչափ կատարելագոյն է տեսութիւն այ, որ է պատճառ ամի, այնչափ բազում կարելի գործք ծանօթանան յայնմանէ: Այս պատճառք որպէս տեսանես իսկ՝ ենթադրեն տեսանիլ ստեղծուածոց յայծ կերպապէս, իբր ՚ի պատճառէ. զորմէ ՚ի յօդ. որ զկնի:

Աղ.

ՅՕԴՈՒԱԾՕ. Կ.

Օրինակ փեսանէյեն երանելոյք զսրեզծուածս յայծ:

Յուշ այծ զկրկին տեսուին ՚ի բանն, զկերպականն, և զպատճառականն, զորմէ ճառեցաք ՚ի սկիզբն նախընթաց յօդուածիդ:

Այս ևս ՚ի դէպ է գիտել, զի կրկին միշնորդ ճանաչման զանազանի, մին իբր յառաջ ծանուցեալ, է՛ր՝ ոչ, այծէ ՚ի ճանաչումն միւսոյն, և ասի միշնորդ յորմէ, որպէս են առաջարկութիքն՝ նկատմամբ եղրակացութեան, պատճառն՝ գործոյն, գործն՝ պատճառին, նշանն՝ նշանակելոյն: Իսկ միւսն է, որ տայ ճանաչել առանց այնր, որ իցէ յառաջագոյն ծանուցեալ, է՛ր՝ ոչ, այլ միայն յանդիման առնելով զառարկայն, որպէս է տեսակն տպաւորեալ, որում չէ պարտ յառաջագոյն ճանաչել, է՛ր՝ ոչ, այլ է միայն պատճառ երևեցուցանելոյ զառարկայն, և ասի միշնորդ անծանօթ, կամ միշնորդ ոչով:

Վար-

Դարձեալ՝ արժան է գիտել, զի կրկին է գոլ ստեղծուածոց, մին յայծ՝ որ է գերազանցական, և այն է նոյն ինքն ած ըստ որում գերազանցաբար փակէ զարարածս, իսկ միւսն է սեփական և կերպական, զոր ունին ստեղծուածք յինքեանս, եթէ իցեն գոյաւորք, և կամ կարեն ունել, և թէ իցեն կարելիք:

Երդ՝ խնդրի. Երդեօք զստեղծուածս զորս տեսանեն երանեալք տեսանիցեն՝ի բանն կերպապէս, եթէ պատճառաբար միայն: Դարձեալ՝ եթէ կերպապէս՝ի բանն, արդեօք՝ի նմա իբրև՝ի միջնորդ ոչ՝ անծանօթ, եթէ իբրև՝ի միջնորդ ոչ, յառաջագոյն ծանուցեալ իբրև գործ՝ի պատճառն, և ըստ սեփական և կերպական գոլոյ: Այլ:

Ասելի է նախ. Երանեալք տեսանեն զստեղծուածս ինչ, կերպապէս՝ի բանն, և զմանս պատճառաբար, կամ արտաքոյ բանին՝ զօրութիւն վճռակի երանութեանն, և զամենեսեան զնոսա ըստ սեփական և կերպական գոլոյ: Ոչ սակայն Յովհ.՝ի քազում տեղիս՝ի ստորև նշանակեալ:

Առաջին և երկրորդ մասն է սակայն Օգոստ. դիւք. ՃԲ.՝ի վերայ Յովհն. ըստ նկարագ. գլ. ԼԳ. ուր զանազանէ՝ի հրեշտակս կրկին ճանաչումն, զմին առաւօտեան որով ճանաչեն զարարածս՝ի բանն, և զմիւսն՝ երեկոյեան որով ճանաչեն զնոսա արտաքոյ բանին:

Ստորև, Ե.Ծը.պ. Է.քոլ.

Յայց. առաջին և երրորդ մասն. Ո՛անաչումն երանելեաց է գաղափարեալ՝ի ճանաչմանէ՝ որով ած ճանաչէ զինքն, քանզի է հաղորդութիւն և նմանակցութիւն նոցա, որով նման նմա լինիմք, ըստ գրելոյն Յովհ. գլ. Ճ: Իսկ արդ՝ ած ճանաչելով զինքն ճանաչէ յինքեան զարարածս ըստ կերպական գոլոյ նոցա, որպէս ճոխագոյնս յուցցուք զկնի: Ապա երանեալք տեսանելով զած տեսանեն՝ի նմա զարարածս ըստ կերպական գոլոյ նոցա,

իբր

նոցա, և ոչ զամ, զի ոչ Հասու լինին նմա ոչ նա ինքն Հասու լինի ինքեան, այլ զբաղումն կամ զբակաւս ըմ չափու լուսոյ փառաց, և ըմ տնօրինելոյ կամացն նմա, ոչ ասացուք ստորև։ Յաւել յաղագս երրորդ մասին. զի եթէ երանեալք ոչ տեսանէին զարարածս, բայց եթէ ըմ գերազանցական գոլ զոր ունին յինծ, յատկապէս ոչ տեսանէին զնոսա, զի այն գերազանցական գոլ ոչ այլ ինչ է, բայց եթէ նոյն ինքն ինծ. Անբիծ է տեսանել զբաղում վկայութիւնս ի սըբոյն Յովհ. առ Աւգիոսի աստ. պ. թ։

Յուց. երկրորդ մասն։ Ոչ ասեմ զոր ճանաչեն երանեալք ի բանն կերպապէս, միանգամայն ի սկզբանէ ճանաչեն, և ոչ յաջորդութիբ. զի զի է ի միասն հայեցուք, և ի միասն տեսակաւ, որպէս ասացուք ի ստորև։ Իսկ արդ՝ ինչ ինչ երանեալք միանդամայն ի սկզբանէ ոչ ծանեան, այլ յաջորդութիբ. որպէս Դանիէլ. ժ. հրեշտակն պարսից և հրեշտակն հրէից անգիտացայն զաղատութեի հրէից, յայնսակս հակառակէին ոչ հակառակութիբ կամաց՝ ասէ սբն Յովհաննես, այլ իրաց։ Ըստ այսմ օրինակի ոչդք յերանելեաց գիտէ այժմ զոր դատաստանին, զոր յապայն գիտասցէ, ոչ ասացաք։ Այնպէս հրեշտակք ոչ գիտացին ի սկզբանէ զպարագայս ինչ էր. առ ծ. պ. չարչարանացն քրի զոր յապայն ծանեան։ Ըստ։

Ասելի է երկրորդ. Երանեալք տեսանեն զարարածս ի բանն, ոչ իբրև ի միջնորդ, որով, կամ ի տեսակ, որ զնոսա անմիջապէս յանդիման առնէ, այլ իբրև ի միջնորդ յորում՝ նախ ծանուցեալ, կամ իբրև յարարչական և ի գաղափարական պատճառ, այնպէս՝ զի ոճ ընդ բանիբ պատճառի ծանուցեալ՝ ինչ միջնորդ վերածիբ ի ծանօթութիւն ստեղծուածոց, ըմ այնմ օրինակի, որով այժմ զգործն ի ձեռն պատճա-

ոին ճանաչելմէ. բայց այսու զանազանութիւն, զի ծանօթութիւն պատճառին և գործոյն է յերկինս միով հայեցուիք կամ ներգործութիւն, զի կատարելութիւն լուսոյ փառաց, և միութիւն տեսակին:

Յուց. Միանգամայն երկաբանչիւր մասն ըստ այնմ օրինակի ճանաչին առեղծուածք յեղութեանն այ, որով օրինակաւ երևեցուցանին ի նմա. իսկ արդ էութիւն այ որ ընդ զտեղի տեսակի նկատմամբ մտաց երանելեաց, ոչ երևեցուցանէ անմիջապէս զարարածս, այլ զինքն, և յինքեան զարարածս իբրև յարարչական և ի գաղափարական, կամ յօրինակական պատճառի. Ասպա: Յուց. փոքր. Նախ եթէ էութիւն այ երևեցուցանէր ընդ հաւասարութեան և միօրինակ սկզբնաբար զինքն և զարարածս, ոչ լինէր յաւէտ այծ ի գոն իմանալի քան թէ արարած, որ է անտեղի: Երկրորդ՝ երևեցուցումն անմիջական միոյ իրիք այլով, լինի կամ բանիւ նմանութիւն, և կամ նոյնութիւն. իսկ արդ՝ էութիւն այ է անսահմանաբար աննման ստեղծուածոց. և չէ նոյնացեալ ընդ նոսա, այլ գերազանցաբար փակէ զնոսա իբրև պատճառ: Ասպա:

Մատթ. ե. ծը. պ. ը. բաղ. Յուց. երկրորդ. Ո՛անաչութեն երանելեաց որպէս արդ ասէաք՝ է գաղափարեալ ի ճանաչմանէն որով այծ ճանաչէ զինքն. Իսկ արդ՝ այծ ճանաչելով զինքն, ճանաչէ յինքեան զստեղծուածս ոչ իբրև ի տեսակի որ զնոսա անընդմիջապէս երևեցուցանէ, այլ իբրև ի պատճառի, որ զնոսա զօրութիւն գերազանցապէս պարունակէ. ոյզ ի ստորև ճոխագոյնս ասասցուք: Ասպա:

Աիաբանի ընդ մեզ և Օգոստ, գիրք, ժա, ի վերայ քղք. գլ. է. յասել իւրում. Ո՛ոնաչո՞ս ապրածոց, որպէս բանիս կարգ է ասել, է փնեղջ չինչեան չոն յոգեյոյ չինասպասելենեն այ ճանաչէ, ընդև յոգոնեսպէ՝ որով գոգեցեալ:

Ասի-

Ասեցես նախ. Արդեօք երանելոյք տեսանէին զստեղծուածս ինչ Ի բանն, զամենեսին տեսանէին. Ասէ հետև. Է ստուգ. ապա: Յուց. հետև. Ամենք պատճառ երևելոց յաւէտ միոյն քան միւսոյն, զի ամենեքեան միօրինակ պարունակին յԵուԹէն այլ իբր Ի պատճառի, ապա:

Պիտեմ ուր. զհետև. ընդ նմին և զցուց: Ես նշանակեմ զպատճառն՝ յոյր սակս ստեղծուածք ինչ տեսանին Ի բանն և ոչ այլք, և ոչ ամքն: Առաջինն է Ի կողմանէ կարողութեանն, այ, լուսոյ փառաց, որ գոլով սահմանաւոր՝ ոչ տայ զօրութիւն տեսանելոյ զամ, այլ զբաղումն կամ զսակաւս, ըստ որում է յաւէտ կամ նուազ սաստկացեալ: Ասէ միւսն է Ի կողմանէ առարկային, այն է ԵուԹէնն այլ ըստ որում է տեսակ իմանալի, որ ԹԷպէտ է երևեցուցիչ ամենեցուն, այլ ներգործուԹ ոչ երևեցուցանէ, բայց միայն այնչափ՝ որչափ միտք ունիցի զօրութեան ճանաչելոյ ըստ չափոյ լուսոյ փառաց: Ասէ պատճառ յաւէտ զայս քան զայն երևեցուցանելոյ՝ են հաճոյք կամացն այլ: Արանց էութեանն այլ ոչ է հարկաւ երևեցուցիչ ստեղծուածոց յինքեան իրրև յարարչական և Ի գազափարական պատճառի, այլ ազատօրէն, և ըստ իւրոց կամաց երևեցուցանէ զոր կամի, և որոց կամի: Արդեն վասն որպէս ազատօրէն և ըստ հաճոյից իւրոց վարի իւրով ամենակարող զօրութեանն Ի ստեղծանել յաւէտ զայս քան զայն, նոյնպէս ազատօրէն և ըստ հաճոյս իւր վարի էութեան իւրով իրր իմանալի տեսակաւ առ Ի երևեցուցանել յաւէտ զայս ինչ քան զայն, կամ սոցա յաւէտ քան նոցա, այլ այնպէս զի մի գերազանցեսցեն քան զզօրութիւն լուսոյ փառաց: Ես իրաւամբք համարձակեցաք ասել Ի վեր անդր ԹԷ իւրաքանչիւրումն երևեցուցանէ զոր մասնաւորապէս և մանաւանդ պատշաճին նմա:

Ընթերս երկրորդ. Նուիթին այ է ամենևին բացարձակ, և անկախ յարարածոց, և ոչ առ ինն բնրի միւսի. ապա ոչ կարէ լինել միջնորդ յորում ծանուցեալ՝ արարածք ծանիցին:

Պատասխանեմ զան. զառաջ. Նուիթին այ է բացարձակ յարարածոց, և սակայն պարունակէ զնոսա դերազանցապէս իբրև պատճառ՝ ընդ. և ոչ պարունակէ զնոսա դերազանցապէս՝ ուր. ընդ նոքին և զհետև: Օի առ՝ի լինել իմիք պատճառ ճանաչելոյ իրիք՝ ոչ է հարկ ունել դ յատկապէս առեալ առնչութի առ նա. քանզի մի առնչականն ոչ է պատճառ ճանաչման առնչակցին, զի են համանգամայն բնութիք և ճանաչմամբ, այլ շատ է միտն փակել զմիսն, և այնպէս լինել՝ի նոսա կապակցութի արտադրողի և արտադրելոյ:

Ընդես. իսկ արդ՝ էութին այ ոչ պարունակէ զիմ որ լինիչ յարարածս. ապա: Յուց. առումն, ոչ պարունակէ զայն որով արարածք ճանաչանին յայ. ապա:

Պնեմ ուր. զառումն, և զյուց. զան. զառաջ. Նուիթին այ ոչ պարունակէ կերպապէս զայն, որով արարածք ճանաչանին յայ՝ ընդ. ոչ պարունակէ դերազանցապէս, զարձեալ ճանաչանիմ. ոչ պարունակէ ըստ բացաստականին՝ ընդ. ըստ դրականին՝ ուրա. քանզի ամ դրականք որք՝ի մէջ բերեն զայն՝ որով արարածք ճանաչանին յայ, են՝ի նմա զօրութի և դերազանցապէս: Նչ առ կանխաւ պաշարելոյ զտիպումն, առ՝ի ճանաչիլ արարածոց յած ըստ կերպական գոլոյ իւրեանց՝ չէ հարկ պարունակիլ նոցա կերպապէս յած. զի ճանաչումն ոչ կայանայ յեղանակի գոլոյն, զոր ունին յած. այլ ձգի յայն՝ զոր յինքեանս ունին, կամ կարեն ունիլ: Յաղագս որոյ թէպէտ՝ի կողմանէ միջնորդին ճանաչին յայլում, այլ՝ի կողմա-

մանէ առաքեալին Ճանաչին որպէս են յիւրեանս. ոչ ը երկար ասացուք ստորե'ի վը դիտուն այ:

Ասիցես երրորդ. Աչրանալք ոչ տեսանեն 'ի բանն զաղատ վճիռս այ. ապա և ոչ գտեղծուածս, որոց ոճ չէ պատճառ, բայց եմէ միջնորդութիւ ազատ վճռոց իւրոց: Յուց. առաջարկութիս. Նախ՝ զի ազատ ներգործութիք անձնիշխան կամաց մերոց ոչ Ճանաչին ը զինչէն Ճանաչմամբ, մանաւանդ թէ և ոչ հասու Ճանաչմամբ կամաց մերոց: Այդ հրեշտակք՝ որք հասանեն այնմ, ոչ Ճանաչէն զնորհուրդս մեր. ըմբ. ա. Կորն. ը. Ծ է ա՛ն՚ի տոքչանէ գնոյ (զոգչիր զնոյն և զհրեշտակաց.) ինչ պմտքդոյն, էիէ ոչ հոգի տոքչոյն որ՚ի նմա: Երկրորդ՝ զի ազատ վճիռք այ ոչ ունին զհարկաւոր կապակցութի ը էուն այ, զի մարթի էր նոցա ոչ լինել: Ընդ յորժամ ստորոգեսն ոչ ունի զհարկաւոր կապակցութի ը ենթակային, ստորոգեսն չկարէ Ճանաչել՚ի Ճանաչմանէ ենթակային. ապա:

Պատասխանեմք. Ազատ վճիռքն այ ը պակասելի եղելմանն յարարածս, զորմէ է խնդիրս՝ ը այնմ օրինակի Ճանաչին յերանելեացդ՚ի բանն, զոր օրինակ Ճանաչին ինքեանք ստեղծուածք որք են եղեալք նոցա, այ է զօրութիք լուսոյ փառաց, և նովին երանական տեսութիք՝ ոչ բացարձակապէ և հարկիւ, այլ ենթադրելով զօրէնս և զկամս այ իբրև պայման, որով կամի յայտ առնել զայնս երանելեացդ, որպէս ասացաք՚ի լուծման առաջին առարկութե. և այս յայտարարութի է յայտնութի ինչ, ոչ արտաքոյ բանին արարեալ, այլ՚ի նոյն իսկ՚ի բանն: Որպէս հրեշտակն (այս անուն.) նովին Ճանաչմամբ որով Ճանաչէ զգոյացութիւն (այն անուն) հրեշտակի, Ճանաչէ և զաղատ իմացմունս նորա, այնու, որով հրեշտակն (այն անուն) կարգէ, և կամի յայտնի լինել

Վատրճ. Ճէ. պ. է. բղ.

(այս անուամբ) հրեշտակի, և նովին բանիւ բառնայ զբարոյական պաղտնութիւնն, զոր ունի խորհուրդն նկրքին, վն լինելոյն ազատ: Այս ոչ վն այնորիկ ճանաչին յերանելեաց՝ի բանն՝ ազատ վճիռքն ոյ, զի ունին զհարկաւոր կապակցութիւնն ը էութեն ոյ, այլ զի են յաձ, և՝ի կամաց նոր յայտնեալ որոց ունին զգօրութի բաւական տեսանելոյ զայն զօրութիր լուսոյ փառաց, և այսպէս յայտ է պատասխանին առ ստիսմունան: Այս խնդիր բազում և այլ առարկութիրք զգուշապէս ճառեցաւք՝ի լս. ժդ՝ի վն գիտութեն ոյ, և՝ի ճառս մարդեղութե, ար՝ի վն երանելի գիտութեն քնի:

ՅՕԳՈՒՈՒԱԾ. Դ:

Էպիս. Եկե՞ն ինչ հակասական ճանաչել երանելեաց, զի՞մ զոր առնէ ած, և զոր կարէ առնել՝ ճանաչել կերպապէս՝ի բանն իբր՝ի պատճառի, ըստ ոմ կարելի բազազանութե, եղանակաց, և բանից նց:

Ատ. պ. Ե. բու:

Յուց. Ճանաչելն՝ի պատճառի զի՞մ կարելի գործս ը ոմ եղանակաց նց և բանից զօրութիր ճանաչման պատճառին՝ է հասու լինել պատճառին. իսկ արդ՝ հակասական է երանելեաց հասու լինել ոյ, ոպ ցուցաք, ապա: Յուց. մեծ. Ճանաչելն զի՞մ կարելի գործս զօրութիր ճանաչման և թափանցութե պատճառին՝ է ճանաչել ցոր վայր կարէ պատճառն՝ և ոչ անդր. ապա է հասարարութիր ճանաչել, որչափ է ճանաչելի, և վն այսորիկ է հասանել:

Ասիցես նախ. Այսմանէ հետևի միայն տրածական հասողութի ոյ, և ոչ սաստկականն, որ չէ ինչ ընդդեմ.

Պա-

Պատասխանեմ ուր. զառումն. զի հակառակն է ամ կարելեաց ըստ ամ եղանակաց և բանից նոցա (զի և այր են կարելի) ճանաչել յԵուն ոյ, այնպ զի նա իցէ պատճառ ճանաչելոյ զայնս, որ ուշ գլխովին թափանցիցի և ծանիցի, ըստ որում է թափանցելի և ճանաչելի սատկութիւն, մինչև և ուշ յոյն սատակագոյնս, և լաւագոյնս լինի թափանցեալ, և ծանուցեալ. ապա թէ ուշ՝ սուտ լինէր նորա ճանաչումն. զի անդր քան զամ կարելս ուշ ինայր բայց նմին անկարելին, որպէս և հակառակն է՝ի սկիզբն լինէ ճանաչել ամենեքին զամ եղբակացութիւնս զօրութիւն պարունակեալս, և զնա ուշ ճանաչել ըստ որում է սատակութիւն ճանաչելի:

Ստիպիցես. Երանեալք ճանաչեն զորդի և զՀոգին սբ, որք են հաւասարեալ եղը ծնողական կարողութեանն հօր. և սակայն այնմ ուշ լինին հասու: Դարձեալ՝ Հոգին քոյ տեսանէ՝ի բանն զամ զոր ճանաչէ ած գիտութիւն տեսութեան, և սակայն ուշ հասանէ այնմ: Ասպա նոյնպէս:

Պատասխանեմ. ուր. զհետև: Առաջնոյն պատասխանեմ, թէ անհանգիտուի է. զի երանեալք ուշ ճանաչեն զամ եղանակս և զգերազանցութիւնս որդւոյ և Հոգւոյն սրբ, որպէս ճանաչէր երանելին զամ եղանակս և զկատարելութիւնս ամ կարելեաց: Այլ երանեալք տեսանելով զորդի և զՀոգին սբ, ուշ տեսանեն զՀաւասարեալ եղը ծնողական կարողութեանն. իսկ ճանաչելով զամ կարելիան, ճանաչէին զհաւասարեալ եղն ամենակարողութեանն: Իսկ երկրորդին անհանգիտութեին է, զի ամ գոյօղք և ապագոյք չեն հաւասարեալ եղը գիտութեանն տեսութեանն. զի կարէր արդեօք ած բազում լինչ ստեղծանել և տեսանել. արդ՝ ամ կարելիք են հաւասարեալ եղը ամենակարողութեան:

Ասեցես երկրորդ. Այն Վրիգոր գիրք. ի. տրամախ. գլ. լէ. ասէ: Օ՞չինչ է զոր ուշ փեսանեն, զոր զփեսոցն ամենեցուն փեսանեն: Ասպա. Պա-

պատասխանեմ սէն Կրիզոր Լոսի ը բաւա-
կանութիւն առարկային, այս է այ. որ ը որում է
լինքնան, բաւականութիւն փակէ զամ. բայց ոչ
հետև, թէ որ տեսանէ զածծ, ճանաչէ զամ. զի
զնա ոչ բովանդակէ կատարեալապէս:

Ասիցես երրորդ. որ խմանայ զառաւելն, կա-
րէ խմանալ և զնոճազն. այլ զամ զոր առնէ ածծ,
և զոր կարէ առնել՝ են նոճազ քան զէութիւն
նորա. ապա.

Պնեմ. թէպէտ առաւել է տեսանելն զածծ,
քան զայլս ամենսին. բայց առաւել է տե-
սանելն զածծ այնպէս, զի ամ ինչ՝ի նմա ծանիցին
քան այնպէս տեսանել զնա, զի ոչ ամ՝ այլ սա-
կաւք կամ բազումք ծանիցին՝ի նմա: Օ՞ի ցու-
ցաւ, թէ բազմութիւն ծանուցելոցն չածծ զհետ
երթայ եղանակի տեսանելոյ զնա յաւէտ կամ
նոճազ կատարեալ:

Ասելի է երկրորդ. Հաւանական է թէ չէ
ինչ հակառական ճանաչել երանելեացդ զամ կա-
րելիս արտաքոյ քանին:

Յուց. Եթէ էր ինչ հակառական, այն լինէր՝
կամ զի բովանդակեալ լինէր էութին այ, կամ
զի ճանաչումն լինէր անսահման. այլ յոչինչ
գլխոյ է հակառական. ապա: Յուց. փոքր. ը ա-
ռաջին մասին. Յայնմանէ զի ամ կարելիք լինէին
ծանուցեալ արտաքոյ էութին այ՝ ոչ զհետ գոյր
բովանդակութի՝ նորա, զի էութին այ է ճանաչե-
լի ըստ որում պատճառ ամենեցուն. արդ ոչ
այսպէս լինէր ծանուցեալ: Ապա ոչ լինէր ծա-
նուցեալ որչափ է ճանաչելի. սակս որոյ ոչ լինէր
բովանդակեալ, այլ յայնժամ լինէր ծանուցեալ
միայն իրրև պատճառ ամի՝ի յետնագունէ՝ի ձեռն
գործոցն, և ոչ յինքնան: Յուց. փոքր. ըստ
երկրորդ մասին: Ճանաչումն ասի անսահման յան-
սահմանութենէ իւրոյ գլխաւոր առարկային. իսկ

գլխա-

գլխաւոր առարկայ ճանաչման է էութիւն, կամ գինչութիւն. ապա եթէ առարկայն չէցէ անսահման յէութենէ, այլ յայլ սեռի, զորօրինակ ի քանակութենէն, ոչ լինէր յայն սակս ճանաչումն անսահման. իսկ ամ կարելիք թէպէտ և էին անսահման բազմութիք, սակայն լինէին սահմանաւոր էութիք, կամ գինչութիք. զի փակէին ընդ որոշ իւիք սեռիւ և տարբերութիք: Այս հղեալ թէ էր ինչ անսահման էութիք, լինէր ծանուցեալ սահմանաւոր եղանակաւ. որպէս ասէ, որ ոչ ցուցանէ զանսահման ճանաչումն:

Խնդրեցես. Ընդեօք իցէ բացարձակապէս անկարելի տեսանել զնա որպէս է յինքեան, զոչ ինչ այլոյ տեսանելով ի նմա:

Պատասխանեմ. բացարձակապէս անկարելի է տեսանել զնա որպէս է յինքեան՝ ոչ տեսանելով ի նմա զայլոյ ածս ընդ հասարակ բանի ստեղծական էակի: Զի այլ չէ հնար տեսանիլ ընդ որում է յինքեան, միոչինչ ոչ տեսանիցի ամենակարողութիւն նորա, և գերազանցական պարունակութիւն արարածոց, որում հակասական է ճանաչիլ առանց տեսանելոյ զնան ստեղծական էակի:

Այլ ոչ թոռի անկարելի բացարձակապէս ճանաչիլ այլ ընդ որում է յինքեան՝ առանց ոչինչ ստեղծուածք տեսեալ լինելոյ ի նմա ի մասնաւորի: Զի էութիւն այլ է ամենևին բացարձակ, և անկախ յինչ և իցէ ստեղծուածոյ ի մասնաւորի, զի կարէ և ոչ զոք ստեղծանել: Ապա չէ ինչ հակասական տեսանիլ նմա առանց տեսանելոյ զստեղծուածս ի մասնաւորի, միայն թէ տեսանիցի ի հասարակի բան ստեղծական էակի. որպէս չէ հակասական ըստ զինչէի ճանաչել զստեղծեալ կարողութիւն, զոր իմն զտեսողական կարողութիւն առանց ճանաչելոյ զգունաւոր ինչ ի մասնաւորի. միայն թէ ծանիցի ի հասարակի բանն գունաւորի.

Ցա-

Ցաւել և զայն. զի արարածք են միայն երկրորդական առարկայ երանական տեսութեանն: Եւ չէ ինչ հակասական տեսանիլ զԱստուած առանց երկրորդականին: Եւ վասն այսր ասէ սբն Յովհան. զի եթէ միայն ոմն լինէր տեսեալ՝ որ է աղբիւր և սկիզբն ամ գոլոյ և ճշմարտուն, այնպէս լսուցանէր զբնական բաղձանս գիտելոյ՝ մինչև ոչ ինդրել զայլ, և տեսանօղն զոմն լինէր երանելի: Այլ որովհետև՝ ի Ս. Ը. ի վն ճշմ. պ. Ջ. առ ԺՋ. երևի թէ ենթադրէ այսմ լինել անկարելի, իմաստասէրն Սիլվեստ համարի իմանալ զայն բան սրբ վարդապետին՝ ի վն անկարելւոյ ըստ Հաստատական օրինաց, և ըստ աստեացս վիճակի, և ոչ զանկարելւոյ ըստ բացարձակ կարողութենն. քանզի աստէն զնոյն կրկնէ բացարձակապէս առանց այնր ամիոփման բանի:

Եթէ ասիցես: Երանեալն գեթ զինքն ունէր տեսանել յԱծ, յորժամ տեսանէր զնա, և ժառանգէր իբրև զիւր վերջին վախճան:

Պէտք վերոյ յիշատակեալն Սիլվեստ, թէ զլուծումն պարտ է իմանալ բացառութիւն տեսանողին և տեսութեն նր. այսինքն, չյայտնի թէ չիցէ անկարելի տեսանիլ այ առանց տեսեալ լինելոյ և ոչ մի արարածոյ, որ չիցէ նոյն իսկ տեսօղն, կամ տեսութիւնն նորա: Իսկ Աերբայն հաւանի այսմ բացառութեն չլինել հարկաւոր, և թէ կարէ երանեալն տեսանել զԱծ առանց տեսանելոյ այնմ իկ տեսութիւն՝ ի մանաւորի Ած լինել իւր վերջին վախճան. այլ բաւական է՝ ի հանգուցանել զնա, զի այնմ իկ տեսութիւն տեսանիցէ Ած լինել վախճան ամ արարածոց, և այլով տեսութիւն արարածոյ բանին, ծանիցէ Ած լինել իւր վերջին վախճան՝ ի մանաւորի:

ՊՐԱԿ. ԺԱ.

Լուծանելն զոհապղ ինչ խրթնաբանից՝ ի լուծ խնդրոյ աբեյն Մովսէսի։

Խնդրի նախ. Ընդէ՞ր զորս տեսանելն երանելալք տեսանիցե՞ն նմանութիքն ինչ։

Պատասխանեմ՝ ըստ զանազանութեան. Որք եւ Աստ. պ. ի. էրկ.
զրևին կերպապէս՝ ի բանն՝ ոչ տեսանին նմանութիքն կամ տեսակիք իւրեանց, այլ նոյն իսկ էութիւն այդ, որով տեսանի ած, զի ոչ տեսանին՝ ի բնութենէ իւրեանց՝ այլ յած, յորում է յառաջագոյն օրինակական կամ գաղափարական, և արարչական նմանութեանն նոցա։ Իսկ որք պատճառաբար տեսանին՝ ի բանն, կամ մանաւանդ արտաքոյ բանին, տեսանին իւրեանց տեսակիք կամ նմանութիքն, զի հակադրեալ պատճառին։

Խնդրի երկրորդ. Ընդէ՞ր զորս տեսանելն երանելալք յած, միանգամայն՝ ի սկզբանէ տեսանիցեն։

Պէտ ընդ նովին զանազանութեամբ։ Որք Աստ. պ. ժ. բոլ. տեսանին կերպապէս՝ ի բանն, տեսանին միանգամայն. զի ամենեքեան տեսանին միով ներգործութիւն՝ ի ձեռն միոյ տեսակի, որ ամենեցին անփոփոխ եթէ՝ ի վերջ. յերևեցուցանելն, և եթէ՝ ի գոլն, այ, էութեան։ Այլ Օգոստ. ՝ի վերջինն՝ ի վերայ Երրորդութեանն գլ. ժդ. յաւարտն, ասէ. Ոչ ընդունելով խորհուրդս հեր փոփոխականս՝ ի հոգ՝ ի հիմն փոխանցելոյ և փոխարկելոյ, այլ զամ գիտութիւն հեր հոգւով հիանձամոյն հայեցեալ պերացոյս։ Իսկ որք տեսանին՝ ի բանն պատճառաբար՝ սեփական և պէտպէս տեսակիք, ոչ տեսանին միանգամայն՝ ի սկզբանէ, այլ յաջորդութիւ, վասն հակադրեալ պատճառին։ Եւ այսու յետին եղանակաւ հաւանական

է թէ երանելքն ճանաչեն զՀայցուհածս առաքեալս առ նոսա. զի եթէ միանգամայն՝ի սկզբանէ տեսանէին՝ի բանն կերպապէս զամենեցուն զայմ Հայցուհածս առաքելիս առ նոսա, ապաքէն դիտէին և զօրն դատաստանի, զի ծանուցեալ էին թէ ոչք իցեն ապագայ վերջինք՝ի մարդկանէ, որք զնոսա բարեխօս կալցին, և որ նոցա յետին պաղատանք, և զհատրդ չերմեռանդն՝ի ժամանակի հրակիզման աշխարհի:

Խնդրի երրորդ. Որ իցէ չափ երանական տեսութեան:

Պատասխանեմ: Տեսութիւն երանական չափի Հաղորդեալ յաւիտենականութիւն:

Ել. ա. ժ. պ. է տռ. ա. պ.գ.առ. ա. և գ. ընդդ. հնթ.գլ. կծ.

Յուց. տեսութիւն երանական ոչ չափի, ոչ ժամանակաւ, ոչ մշտնջենաւորութիւն, և ոչ էականն յաւիտենականութիւն. ապա Հաղորդեալ յաւիտենականութիւն: Յայտ է Հետեւութիւնս, զի բաց՝ի սոցանէ չիք այլ չափ տեւողութեանց իրաց: Յուց. առաջ. ժամանակն է չափ տեւողութեան յաղորդականաց և փոփոխական իրի ըստ գոլոյ և ըստ գործելոյ, մշտնջենաւորութիւնն է չափ տեւողութեան անփոփոխ իրի ըստ գոլոյ, և փոփոխելի ըստ գործելոյ. յաւիտենականութիւնն էական է չափ անփոփոխ իրի ըստ գոլոյ և ըստ գործելոյ, եթէ՝ի ներքուստ և եթէ արտաքուստ: Իսկ տեսութիւն երանական, ոչինչ օրինակաւ է յաղորդական և փոփոխական՝ի ներքուստ, թէ վճռի է բոլորն միանգամայն, և թէ վճռ զի սկզբունք նորա, ըստ լոյսն փառաց, և էութիւնն այլ, որ ընդ զտեղի տեսակի, ոչ անկանին ըստ յաղորդութիւն կամ փոփոխութիւն. բայց է փոփոխական արտաքուստ, զի ոմն սկիզբն էառ գոլոյ, նոյնպէս կարէ առնուլ զվախճան, ի կարճել այդ զգուգընթացութի իւր. նա՝ ոմն է զանազան՝ի զանազանս, նոյնպէս ոչինչ ընդդէմ է՝ի բացարձակ կարողութենն այդ՝ի նմին ննթակայի նոճազիլ կամ առաւելուլ. ապա:

Խնդրի

Խնդրի չորրորդ. Երգեցօք արարածք տեսա-
նիցին չյած իբր ի հայելի։

Պնեմ։ Օգայս ուրեք ուրեք հաստատէ սբն Թոմ. այլ իմանալ պարտ է ի վեր այլաբանական և ըստ իմիք հայելւոյ, այ, ըստ որում էուին այ երևեցու-
ցանէ զարարածս զոր առնէ հայելին. բայց ոչ զպար-
զայն և զյատկապէս հայելւոյ։ Օչ յատուկ հայելին ընդունի զտեսակս իրաց, այլ ոչ նոյնպէս և յած։

Խնդրի հինգերորդ. Երգեցօք բնական բանիւ հնար լինել մեզ յաստիս ճանաչել զյած։

Պնեմ։ Ունք ոչ կարեմք բնական բանիւ, որոյ ճանաչումն ծագի ի զգալեաց՝ ճանաչել զայդ էուին, կամ ճանաչել ըստ վինչէի, սակայն կարեմք ճանա-
չել ըստ էի, և ըստ դոլոյ առաջին պատճառ ամի։ Հայտ է յասացեալոցս ասաէն և այլուր ի վեր գոյուէն այ։

Խնդրի վեցերորդ. Երգեցօք ճանաչումն այ որ շնորհօք էնի ատացեալ, իցէ կատարեալագոյն և բարձրագոյն քան զայն, որ ստացեալ լինի բա-
նիւ բնականաւ։

Պնեմ այո. Օի բնական լոյսն մտաց զօրա-
նայ հեղմամբ ձրի լուսոյ, և երբեմն պատկերք կերպանան յաստուածօսա յերևակայութեն մարդոյ, ոլք յաւէտ յանդիման առնեն զյածային իրս։

Ի վեր ժամանակին, յորում սբք ընդունին զերանական տեսութեն զպարգևան՝ ասացուք ի՝ ա. ք. ի ճառն վերջին վախճանի։

ՊՐԱԿ. ԺՀ.

Ի վերոյ անուանեալ այ.

Սբն Թոմ. կ. ԺՀ։

Պանդէ զորս ուսուցանէ սբն Թոմ. յերկո-
տասան պրակն ի ԺԲ. կ. սակաւուք ճա-
ռին ի դպրոցս, յայնսակս զղկսաւորան խնդրակք
ինչ կարճ ի կարճոյ լուծցուք։

Խնդրի

Ինդրի նախ. Ընդհօք հնար է գնել զանուն ինչ այլ, որ զնա նշանակեսցէ ըստ որում է:

Պինեմ, Յոչ ումեք կարելի արարածոց կարէ գնիլ անուն այլ, որ զնա հաւասարապէս, և հասո-զապէս նշանակեսցէ. սակայն մարթ է՛ի հրեշտա-կաց և յերանելեացդնիլ անուն որ ըստ զինչէին նշա-նակեսցէ զնա, բայց՛ի ճանապարհորդաց չէ մարթ: Ա-յլ ճանապարհորդաց հնար է բազում անուանս գնել նմա, որք զպէսպէս կատարելութիւնս նորա անկատարապէս նշանակիցեն:

խ. ԺԳ. պ. ա. բաղ.

Առ վանդակ այս պատասխանի ցուց. բա-նիւս՝ որ հիմնեալ՛ի փիլիսոփայութեն. ա. պա-րիւերս. գլ. ա. թէ անուանք նշանակեն միայն միմնորդութիւն խմացման գնողին կամ խօսողին: քանզի խմացմանց նորա են նշանակք և բացատ-րութիւնք. և նորին աղագաւ՝ ստէ, զի հակառակ մտացն խօսի: Ապա անուանք ասացեալք կամ եղեալք յումեքէ նշանակեն զզինչէն իրին այն-չափ միայն որչափ ըմբռնէ զնա, և ոչ առաւել: Ա-նուամ. Իսկ արդ՝ ոչինչ կարելի արարած կարէ հաւասարապէս և հասուցանել ճանաչել զնա: Ըրեշ-տակք և երանեալք ճանաչեն ըստ զինչէին, բայց ոչ ճանապարհորդք: Իսկ ճանապարհորդք զնա և զնո պէսպէս կատարելութիւնն՛ի ստեղծուածոց անկա-տարապէս ճանաչեն: Ապա:

Ըստ մակաբերիցես նախ. Ո՛չ ոք ասի անե-ծառելի, ոչ զի զնմանէ և ոչ զմի խօսք հնար է առնիլ, կամ ոչինչ անուն դնիլ նմա մարթ իցէ յարարածոց, այլ թէ յոչ ումեքէ յարարածոց կարէ դնիլ անուն բուանդակիչ բնութեն նորա, և ոչ ևս՛ի ճանապարհորդաց, որ կատարելապէս նշանակիցէ զզինչէն նորա ըստ մտաց առաջին և երկրորդ մասին պատասխանւոյն:

Անակաբերիցես երկրորդ, թէ երբեակ ճա-նապարհաւ կարէ ճանաչիլ ոք՛ի մէնջ: Ասէ՝ ճա-

Ճանապարհաւ հրաժարեցուցման յորժամ հրաժարեցուցանիմք ի նմանէ զանկատարութիւն արարածոց : Երկրորդ՝ ճանապարհաւ հաւաքման, յորժամ զնա կատարելութիւս բաժանեալ ի գործս՝ հաւաքեմք ի նմա իբր յամենեցուն պատճառի : Երրորդ՝ ճանապարհաւ առաւելութեան, յորժամ զնա կատարելութիւն արարածոց վերամբարձ իմն եղանակաւ վերընծայեմք նմա : Ըստ այսմ երրեակ եղանակի ճանաչելոյ զնա, երիք աղգք անուանց ընծային նմա : Ըստ առաջնոյն՝ անուանեմք զնա անսահման, անմարմին, աննիւթ, անփոփոխ. անմեղանչական, անբռնադատելի, ևն : Ըստ երկրորդին՝ անուանեմք զնա ամենակալ, առաջին պատճառ, նախախնամող, կառավար ամի, ևն : Ըստ երրորդին՝ անուանեմք զնա ծայրագոյն գոյացական, ամենաբարձր, ամենագեղ. ամենևին քաղի : ևն :

Կնդրի երիդ. Որք են դլխաւոր անուանքն այ : Պատասխանեմ, երիք են, այս է՝ ած, որ էն, եհովահ, կամ եհէվահ : Օի այս երիք անուանք յաւէտ յատկապէս քան զայլս զբնութին այ նշանակեն, այլ ոչ միօրինակ. Ած, նշանակէ զբնութին այ պարզապէս, կամ իբր իմացական. Ադ էն, իբր գոյաւոր. Եհովահ, իբրև անհատացեալ և եզական, որպէս թէ այս ած :

Ընդ՝ այս անուն, Եհովահ ասի քառագիր. այ, բաղադրեալ ի չորից գրոց Եօփ. հէ. վաւ. հէ. Եւ այս այնչափ սուրբ և պատուական էր առ երբայեցիսն վ համարելոյն առ նոսա սեպհական և էական, մինչև ոչ երբէք, կամ սակաւ ուրեք անուանել նոցա զայն. այլ յորժամ գէպ լինէր յընթերցուն, փոխանակ այնմ՝ ըստ սովորութեն աւանդելոյ յաւագայ՝ հասարակօրէն ի գործ ածէին Ադօնայ, որ նշանակէ տէր : Նաց յերից անուանցս նշանակելոց, են և այլ բազում հասարակ անուանք

Ադ. պ. ը. ա. ժ.

ուանք այ եդեալք ի հրէից, զոր յիշատակեն, Պռոնէսիոս, Ներոնիմոս. և այլք:

Օգտ. Օգտ է արժան ի գիտել նշանակէ Կոնէթ, իբր զի գրեթէ յամ ազգս անուն այ է քառագրեան, կամ ի չորից գրոց բաղադրեալ: Այնպէս է առ հրէայս Ահովէ. առ յոյնս Թէօս. առ լատինս, Տէուս. առ գաղղիացիս, Տիէս. առ իտալիացիս Տիօ. առ սպանիացիս Տիօս, առ գերմանացիս, Ընգղիացիս և Ֆլանդրիացիս՝ Կօտ. կամ Կոտ. առ Եգիպտացիս՝ Թէու. առ Պարսիկս, Ուռ, առ Անգլացիս, Օուտ. առ Հայս, Ըրէն, առ Բրաբացիս և առ Հադարացիս, Ելոհ:

Անդր. պ. Ե. բաղ. անդ.

Անդրի երրորդ. Երդեօք ամ անուանք առացեալք զայ իցե՞ն նոյնանշանք:

Պէտ է. Յուց. Նախ. Անուանք նոյնանշանք են, որք զնոյն իր՝ և ըստ նովին բանիւ կի՝ նովին ըմբռնմամբ նշանակեն, իբր. սուր. Թուր. Հանդերձ. պատմուճան: Այլք որովհետև անուանք զիրն նշանակեն միջնորդութ ըմբռնման, առաջինն նշանակեալն է ըմբռնումն, իսկ յետինն իրն. և սորին վ՞ յորժամ բազում անուանք նշանակեն զնոյն իր պատ՞ ըմբռնմամբ կամ բանիւ՝ չունին զնոյն նշանակեալ, գէթ զառաջինն և զանմիջականն. իսկ արդ՝ թէպետ բազում անուանք այ զնոյն իր նշանակեն, սակայն ըստ զանազան բանիւ և ըմբռնմամբ նշանակեն զայն. քանզի բարութիւն յամ՝ ուչ նշանակէ զմի և զնոյն ըմբռնումն զոր արդարութիւն, թէպետ և յամ բարութիւն և արդարութիւն իցեն նոյն:

Անդ. առաջ. ընդդ.

Ըպատ: Աստատի. Բազում նոյնանշան անուանք յարեալք առ միմեանս շաղփաղփ ինչ գործեն, ոյզ եթէ ասիցես, հանդերձ՝ պատմուճան, սուր՝ թուր: Իսկ արդ՝ չէ արժան ասել եթէ շաղփաղփիցեն ընդ գիրք յասել անդ. Երեմ. Լ. 19: Ընդ խորհրդով, ի զբաւորս գործովք, ահեղակալ հեծանօք ընդ: Այնպէս և այլուր. ապա:

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi
ERM0836/1
255.07.02.01.06.00/

